

Կ-075-29.03.2019-SՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 21-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»  
ՀՕ-266-Ն ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՕ-  
338-Ն ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 4-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 67-րդ և 68-րդ կետեր.

«67) **դեբիտորական պարտք**՝ հարկ վճարողին այլ անձանց (դեբիտորների) կողմից վճարման (այլ ձևով հատուցման) ենթակա պարտքի գումար, բացառությամբ պետական կամ համայնքների բյուջեների նկատմամբ հարկային պարտավորությունների, տուրքերի և պարտադիր այլ վճարների գծով հարկ վճարողին վճարման (վերադարձման) ենթակա պարտքի գումարների.

68) **կրեդիտորական պարտք**՝ հարկ վճարողի կողմից այլ անձանց (կրեդիտորներին) վճարման (այլ ձևով հատուցման) ենթակա պարտքի (այդ թվում՝ աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների, շահաբաժինների գծով) գումար, բացառությամբ պետական կամ համայնքների բյուջեների նկատմամբ հարկային պարտավորությունների, տուրքերի և պարտադիր այլ վճարների գծով հարկ վճարողի կողմից վճարման ենթակա պարտքի գումարների:»:

**Հոդված 2.** Ուժը կորցրած ճանաչել Օրենսգրքի՝

1) 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ը.» ենթակետը, 86-րդ հոդվածը, 57-րդ գլուխը, 406-րդ հոդվածի 6-րդ մասը, 407-րդ հոդվածի 7-րդ մասի 3-րդ ենթակետը, 420-րդ և 421-րդ

հողվածները.

2) 108-րդ հողվածի 1-ին մասի 15-րդ կետը և 112-րդ հողվածի 1-ին մասի 12-րդ կետը.

3) 184-րդ հողված 3-րդ մասը, 186-րդ հողվածի 1-ին մասի 2-րդ կետը, 187-րդ հողվածի 3-րդ մասը, 189-րդ հողվածը, 191-րդ հողվածի 3-րդ և 4-րդ մասերը և 194-րդ հողվածը.

4) 455-րդ հողվածի 1-ին մասը:

**Հողված 3.** Օրենսգրքի 8-րդ հողվածի՝

1) 2-րդ մասից հանել «, իսկ արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակների մասով՝ արտոնագրային հարկով» բառերը.

2) 3-րդ մասի՝

ա. 1-ին կետից հանել , բացառությամբ արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակների  բառերը,

բ. 2-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

գ. 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) միկրոձեռնարկատիրության համակարգի շրջանակներում կազմակերպությունները և ֆիզիկական անձինք Օրենսգրքի 56-րդ գլխով սահմանված դեպքերում ազատվում են, մասնավորապես, ԱԱՀ-ով և (կամ) շահութահարկով, ինչպես նաև շրջանառության հարկով հարկումից:».

3) 4-րդ մասում «(որոնց շրջանառության հարկը կամ արտոնագրային հարկը չեն փոխարինում, կամ որոնցից ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտները չեն ազատվում)» բառերը փոխարինել «(որոնց շրջանառության հարկը չի փոխարինում, կամ որոնցից միկրոձեռնարկատիրության սուբյեկտները չեն ազատվում)» բառերով:

**Հողված 4.** Օրենսգրքի 13-րդ հողվածի 3-րդ մասից հանել «, բացառությամբ Օրենսգրքի 281-րդ հողվածով սահմանված արտոնագրային հարկի հաշվետու ժամանակաշրջանի» բառերը:

**Հողված 5.** Օրենսգրքի 15-րդ հողվածի՝

1) 2-րդ և 3-րդ մասերի 1-ին և 2-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել.

2) 3-րդ և 5-րդ մասերում «1-8» թվերը փոխարինել «3-8» թվերով:

**Հողված 6.** Օրենսգրքի 16-րդ հողվածի 1-ին մասի՝

1) 1-ին կետի «բ.» ենթակետը շարադարել հետևյալ խմբագրությամբ.

«բ. ԵՏՄ անդամ պետությունից ապրանքի ներմուծման կամ ԵՏՄ անդամ պետություն ապրանքի արտահանման գործառնությունների դեպքում՝ համապատասխանաբար ապրանքը Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու) կամ ապրանքը Հայաստանի Հանրապետությունից արտահանելու (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու) ամսաթվի դրությամբ՝ ելնելով այդ օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից: Այն դեպքում, երբ ապրանքը Հայաստանի Հանրապետության սահմանը հատում է օդային տրանսպորտով կամ փոստային օպերատորի կողմից մատուցվող՝ փոստային ծառայության միջոցով, ԵՏՄ անդամ պետությունից ապրանքի ներմուծման կամ ԵՏՄ անդամ պետություն ապրանքի արտահանման գործառնությունների դեպքում ապրանքի հարկման բազան և սկզբնական արժեքը որոշվում են տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերի՝ կոնոսամենտում, բեռնագրում կամ այլ փաստաթղթերում նշված ամսաթվի դրությամբ՝ ելնելով այդ օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից. ».

2) 2-րդ կետում «կամ Հայաստանի Հանրապետությունում հաշվառված մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի» բառերը հանել, իսկ Սիդուս գրման ամսաթվի դրությամբ՝ բառերից հետո լրացնել Ս(անկախ հետազայում այդ գործարքների ճշգրտման արդյունքում Օրենսգրքով սահմանված կարգով ճշգրտող հաշվարկային փաստաթուղթ դուրս գրելու հանգամանքից կամ անկախ հետազայում այդ գործարքի մասով դուրս գրված հաշվարկային փաստաթուղթը չեղարկելու հանգամանքից)՝ բառերը:

**Հոդված 7.** Օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասից հանել «, բացառությամբ Օրենսգրքի 57-րդ գլխով սահմանված արտոնագրային հարկի, որի վճարումը կատարվում է մինչև հաշվետու ժամանակաշրջանը սկսելը» բառերը:

**Հոդված 8.** Օրենսգրքի 32-րդ հոդվածի 1-ին մասից հանել «, արտոնագրային հարկի» բառերը:

**Հոդված 9.** Օրենսգրքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի ըբ ենթակետում «(այդ թվում՝ համակարգչային ծրագրերի վերծանման նպատակով՝ համակարգչային տեխնիկա)» բառերը փոխարինել «(նյութական կրիչով տվյալ հարկային ստուգմանն առնչվող տեղեկատ-

վություն պարունակող փաստաթղթերի կրկնօրինակ)» բառերով:

**Հոդված 10.** Օրենսգրքի 39-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 6-րդ կետում «1-4-րդ կետերով» բառերը փոխարինել «1-4-րդ կետերով և 2-րդ մասի 1-ին կետով» բառերով.

2) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման վայրը համարվում է Հայաստանի Հանրապետությունից դուրս եթե՝

1) կազմակերպությունը, որի գտնվելու վայրը, Օրենսգրքի 4-րդ գլխի համաձայն, չի համարվում Հայաստանի Հանրապետությունը կամ ֆիզիկական անձը, որի բնակության վայրը, Օրենսգրքի 4-րդ գլխի համաձայն, չի համարվում Հայաստանի Հանրապետությունը ընդունում կամ ստանում է սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում նշված աշխատանքները կամ ծառայությունները (բացառությամբ այն դեպքերի, երբ աշխատանքներն ուղղակիորեն ընդունում է կամ ծառայություններն ուղղակիորեն ստանում է ոչ ռեզիդենտ կազմակերպությունը կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձը, սակայն դրանց օգտագործումը (սպառումը) փաստացի կատարվում է դրանց մշտական հաստատության կողմից).

2) աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման վայրը, սույն հոդվածի 1-ին մասի համաձայն, չի համարվում Հայաստանի Հանրապետությունը:»:

**Հոդված 11.** Օրենսգրքի 53-րդ հոդվածի՝

1) 4-րդ մասը ուժը կորցրած ճանաչել.

2) 9-րդ մասի 4-րդ կետում «ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարության և ընտանեկան ձեռնարկատիրությունում ներգրավված անձանց՝ ընտանիքի անդամ լինելը հիմնավորող համապատասխան փաստաթղթերի ներկայացումը» բառերը փոխարինել «միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարության ներկայացումը» բառերով.

3) 10-րդ մասի 3-րդ կետում  երեք տարի  բառերից հետո լրացնել , բացառությամբ Օրենսգրքի 44-րդ հոդվածի 5-րդ մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքի  բառերը:

**Հոդված 12.** Օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասից հանել «, բացառությամբ Օրենսգրքի 278-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքերի» բառերը:

**Հոդված 13.** Օրենսգրքի 55-րդ հոդվածի՝

1) 10-րդ մասում «ոչ ռեզիդենտ կազմակերպության» բառերը փոխարինել «ոչ ռեզիդենտ կազմակերպությունից» բառերով, իսկ «ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի կողմից» բառերը՝ «ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձից» բառերով.

2) 11-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«11. Էլեկտրոնային առևտրի շրջանակներում կատարվող՝ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված գործարքները կարող են փաստաթղթավորվել վճարահաշվարկային ծառայություններ մատուցող կազմակերպությունների կողմից տրամադրվող փաստաթղթերով կամ այդ կազմակերպությունների կողմից կիրառվող՝ վճարային գործիքներ սպասարկող սարքավորումների միջոցով տպագրվող փաստաթղթերով:».

3) 12-րդ մասում «վճարահաշվարկային համակարգի» բառերից հետո լրացնել «կամ վարկային» բառերը.

4) 13-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Կառավարությունը կարող է սահմանել սույն մասով սահմանված ծախսերի փաստաթղթավորման այլ կարգ:»:

**Հոդված 14.** Օրենսգրքի 11-րդ, 14-րդ, 55-րդ, 75-րդ և 77-րդ գլուխներում «ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ» բառերը՝ համապատասխան հոլովածներով, փոխարինել «միկրոձեռնարկատիրության սուբյեկտ» բառերով՝ համապատասխան հոլովածներով:

**Հոդված 15.** Օրենսգրքի 59-րդ հոդվածի 5-րդ մասի երկրորդ պարբերությունում  Օրենսգրքի 60-րդ հոդվածով  բառերը փոխարինել  Օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով  բառերով:

**Հոդված 16.** Օրենսգրքի 59-րդ, 254-րդ և 255-րդ հոդվածներում «58,35 միլիոն» բառերը փոխարինել «115 միլիոն» բառերով:

**Հոդված 17.** Օրենսգրքի 62-րդ հոդվածում՝

1) 11-րդ մասի երկրորդ պարբերությունում  ենթակա չէ ԱԱՀ-ով հարկման  բառերից հետո լրացնել  կամ ենթակա է ԱԱՀ-ի 0 տոկոս դրույքաչափով հարկման  բառերը.

2) 19-րդ մասի 3-րդ կետում  դրամական արտահայտությամբ  բառերից հետո լրացնել , ինչպես նաև վարկերի (փոխառությունների) տրամադրման պահին միանվագ գանձվող՝ վարկի (փոխառության) տրամադրման վճարը, վարկի սպասարկման (այդ թվում՝ մոնիտորինգի)

համար որոշակի պարբերականությամբ գանձվող վճարները, վարկային հայտի ուսումնասիրության համար գանձվող վճարը, վարկային հաշիվների բացման, վարման և սպասարկման համար գանձվող վճարները՝ բառերը.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 20-րդ մաս.

«20. Օրենսգրքի 88-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով նախատեսված՝ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների օտարման դեպքում ԱԱՀ-ով հարկման բազան որոշվում է Օրենսգրքի 61-րդ հոդվածով և սույն հոդվածով սահմանված կարգով, բայց ոչ պակաս, քան դրանց համար Օրենսգրքի 88-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասով սահմանված օտարման նվազագույն գների (ներառյալ ակցիզային հարկը) չափով՝ առանց ԱԱՀ-ի»:

**Հոդված 18.** Օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասում՝

1) 23-րդ կետում Սժառայությունների մատուցումը՝ բառերից հետո լրացնել , ազատ տնտեսական գոտու կազմակերպչի և ազատ տնտեսական գոտու շահագործողի համար աշխատանքների կատարումը՝ բառերը.

2) 30-րդ կետում  (այդ թվում՝ ինտերնետ շահումով խաղերի)՝ բառերից հետո լրացնել , տոտալիզատորի և ինտերնետ տոտալիզատորի՝ բառերը.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 54-րդ կետ.

«54) «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19.7-րդ և 19.8-րդ հոդվածներով սահմանված գործունեության տեսակների շրջանակներում ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը և (կամ) ծառայությունների մատուցումը»:

**Հոդված 19.** Օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերության 5-րդ կետից հանել «կամ արտոնագրային հարկ վճարող՝ արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակների մասով» բառերը:

**Հոդված 20.** Օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի  ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

ԵՏՄ միասնական մաքսային օրենսդրությամբ կամ Օրենսգրքով սահմանված կարգով ապրանքների ներմուծման ճշտված հարկային հայտարարագիր ներկայացնելու դեպքում՝ ներմուծման ճշտված հարկային հայտարարագրի ներկայացման և ԱԱՀ-ի լրացուցիչ գումարների վճարման օրերն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի, իսկ այդ օրերը տարբեր հաշվետու ժամանակաշրջաններում ներառված լինելու դեպքում՝ դրանցից վերջինը ընդգրկող հաշ-

վետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով՝ հաշվանցման (պակասեցման) ենթակա ԱԱՀ-ի լրացուցիչ գումարի մասով, եթե սույն ենթակետով այլ բան սահմանված չէ: ԵՏՄ միասնական մաքսային օրենսդրությամբ կամ Օրենսգրքով սահմանված կարգով ապրանքների ներմուծման ճշտված հարկային հայտարարագիրը մինչև հաշվետու ժամանակաշրջանի համար ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի ներկայացման համար Օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վերջնաժամկետի օրը ներառյալ ներկայացնելու և մինչև այդ օրը ԱԱՀ-ի լրացուցիչ գումարները վճարված լինելու դեպքում ներմուծման ճշտված հարկային հայտարարագրով արտացոլված ԱԱՀ-ի լրացուցիչ գումարները հաշվանցվում են տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով:]:

**Հոդված 21.** Օրենսգրքի 74-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերությունում, 348-րդ հոդվածի 1-ին և 8-րդ մասերում և 449-րդ հոդվածի 1-ին մասում «կիսամյակին» բառը փոխարինել «եռամսյակին» բառով:

**Հոդված 22.** Օրենսգրքի 85-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Հոդված 85. Ակցիզային հարկով հարկման բազան**

1. Օրենսգրքի 84-րդ հոդվածով սահմանված՝ ակցիզային հարկով հարկման օբյեկտ համարվող գործարքների և (կամ) գործառնությունների դեպքում ակցիզային հարկով հարկման բազա է համարվում ապրանքի քանակը (ծավալը)՝ արտահայտված Օրենսգրքի 88-րդ հոդվածով սահմանված՝ չափման բնափրային միավորներով:»:

**Հոդված 23.** Օրենսգրքի 88-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Հոդված 88. Ակցիզային հարկի դրույքաչափերը**

1. Օրենսգրքի 84-րդ հոդվածով սահմանված՝ ակցիզային հարկով հարկման օբյեկտ համարվող գործարքների ու գործառնությունների (բացառությամբ սույն մասի աղյուսակի 1-ին, 2-րդ, 11-րդ և 21-րդ տողերով նախատեսված ապրանքային դիրքերին դասվող ապրանքների մասով իրականացվող գործարքների և գործառնությունների) հարկման բազայի նկատմամբ ակցիզային հարկը հաշվարկվում է սույն մասով սահմանված դրույքաչափերի և սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ ակցիզային հարկի հաշվարկման գործակցի արտադրյալով: ԱՏԳ ԱԱ 2207, 2208 (բացառությամբ 2208 90 330 0, 2208 90 380 0, 2208 90 480 0, 2208 20, 2208 30, 2208 40), 2402 (բացառությամբ 2402 10 00011, 2402 90 00011, 2402 10 00012 2402 90 00012) և 2403 99 90 090 ապրանքային դիրքերին դասվող ապրանքների մասով իրա-

կանացվող գործարքների և գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ակցիզային հարկը հաշվարկվում է սույն մասով սահմանված դրույթաչափերով:

Ապրանքի ծածկագիրը՝ ըստ ԱՏԳԱԱ-ի	Ապրանքախմբի անվանումը	Հարկման բազայի չափման միավորը	Ակցիզային հարկի դրույթաչափերը (դրամ)			
			2020 թվականի հունվարի 1-ից	2021 թվականի հունվարի 1-ից	2022 թվականի հունվարի 1-ից	2023 թվականի հունվարի 1-ից
2207	էթիլային սպիրտ	1 լիտր (100 տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով)	2600	3380	4400	5700
2208 (բացառությամբ 2208 90 330 0 2208 90 380 0 2208 90 480 0 2208 20 2208 30 2208 40)	սպիրտային խմիչքներ	1 լիտր	1560	2030	2640	3430
2208 90 330 0 2208 90 380 0 2208 90 480 0	պտուղներից և (կամ) հատապտուղներից պատրաստված օղի	1 լիտր	800			
2208 20	կոնյակ, բրենդի և այլ սպիրտային թրմեր	1 լիտր (100-տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով)	ա. 1-ից մինչև 3 տարի, ներառյալ՝ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 3000 բ. 4-ից մինչև 5 տարի, ներառյալ՝ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 3500 գ. 6-ից մինչև 10 տարի, ներառյալ՝ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 6000 դ. 11-ից մինչև 15 տարի, ներառյալ՝ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 8500 ե. 16-ից մինչև 19 տարի, ներառյալ՝ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 14000 զ. 20 և ավելի տարի հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 22000			
2208 30 2208 40	վիսկի, ռոմ և այլ սպիրտային թրմեր	1 լիտր	7000			
2203	գարեջուր	1 լիտր	130			
2204	խաղողի գինի	1 լիտր	150			
2205	վերմուտ և խաղողի այլ գինիներ	1 լիտր	1000			
2206 (բացառությամբ 2206 00 390 2206 00 590 2206 00 890)	խմորման ենթարկված այլ ըմպելիքներ (խնձորի սիդր, պերրու (տանձի սիդր), մեղրաըմպելիք), բացառությամբ պտղային, հատապտղային, մրգային գինիների և գինեջուրի	1 լիտր	270			
2206 00 390 2206 00 590 2206 00 890	պտղային, հատապտղային, մրգային և այլ գինիներ	1 լիտր	150			
2402 (բացառությամբ 2402 10 00011)	ծխախոտի արտադրանք	1000 հատ	9625	11070	12730	14640



2402 90 00011 2402 10 00012 2402 90 00012)						
2402 10 00011 2402 90 00011	սիգար	1000 հատ	605000			
2402 10 00012 2402 90 00012	սիգարեղա	1000 հատ	16500			
2403 (բացառությամբ 2403 99 90 090)	ծխախոտի արդյունաբերական փոխարինիչներ	1 կգ	1500			
2710 19 710 - 2710 19 980 3403 19 100 0, 3403 19 900 0, 3403 99 000 0	քայտուղ	1 կգ	500			
2710 12	բենզին	1 տոննա	40000			
2710 (բացառությամբ 2710 12 2710 19 710 - 2710 19 980)	դիզելային վառելիք	1 տոննա	13000			
2709	հում նավթ, նավթամթերքներ	1 տոննա	27000			
2711 (բացառությամբ 2711 11 2711 21)	նավթային գազեր և գազանման այլ ածխաջրածիններ	1 տոննա	1000			
2711 21	սեղմված բնական գազ	1 տոննա	34000			
2403 99 90 090	ծխախոտի արտադրանք	1000 հատ	2000	2300	2700	3100

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերում հիմք են ընդունվում ակցիզային հարկի հաշվարկման հետևյալ գործակիցները.

	2020 թվականի հունվարի 1-ից	2021 թվականի հունվարի 1-ից	2022 թվականի հունվարի 1-ից	2023 թվականի հունվարի 1-ից
Ակցիզային հարկի հաշվարկման գործակից	1.0	1.03	1.06	1.09

3. ԱՏԳ ԱԱ 2208 ծածկագրին դասվող՝ 40 տոկոսից բարձր սպիրտայնությամբ ապրանքների համար սպիրտայնության 40 տոկոսը գերազանցող յուրաքանչյուր ամբողջական տոկոսային կետի համար ակցիզային հարկի դրույքաչափն ավելացվում է 7.5 դրամով (բացառությամբ կոնյակի սպիրտի), իսկ մինչև ինը տոկոս (ներառյալ) սպիրտայնությամբ ապրանքների համար ակցիզային հարկը յուրաքանչյուր լիտրի համար սահմանվում է 100 դրամ:

4. Ակցիզային հարկ վճարողների, ինչպես նաև ակցիզային հարկ վճարող չհամարվող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ԱՏԳ ԱԱ 2207 ծածկագրին դասվող՝ շալցված ապրանքների և ԱՏԳ ԱԱ 2208 ծածկագրին դասվող ապրանքների (բացառությամբ 40 տոկոս և բարձր սպիրտայնությամբ շշալցված կոնյակի, շշալցված կոնյակի սպիրտի և ԱՏԳ ԱԱ 2208 20 ծածկագրին դասվող՝ շալցված ապրանքների) օտարման դեպքում այդ

ապրանքների օտարման գինը (ներառյալ՝ ակցիզային հարկը և ավելացված արժեքի հարկը) չի կարող պակաս լինել մեկ լիտրի համար 6000 դրամից՝ 100-տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով:

5. Ակցիզային հարկ վճարողների կողմից ԱՏԳ ԱԱ 2208 20 ծածկագրին դասվող՝ շալցված ապրանքների օտարման դեպքում այդ ապրանքների օտարման գինը (առանց ակցիզային հարկի և ավելացված արժեքի հարկի) 100-տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով չի կարող պակաս լինել մեկ լիտրի համար՝

1) մինչև 3 տարի, ներառյալ՝ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 5000 դրամից.

2) 4-ից մինչև 5 տարի, ներառյալ՝ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 5500 դրամից.

3) 6-ից մինչև 7 տարի, ներառյալ՝ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 6000 դրամից.

4) 8-ից մինչև 10 տարի, ներառյալ՝ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 9000 դրամից.

5) 11 և ավելի տարի հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 14000 դրամից:

6. ԱՏԳԱԱ 220820 ծածկագրին դասվող կոնյակ ներմուծող, արտադրող և (կամ) տարալորտ կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը պարտավոր են կոնյակի տարայի վրա Կառավարության սահմանած կարգով մակնշել դրա հնացման աստիճանը՝ ըստ տարիների: ԱՏԳԱԱ 220820 ծածկագրին դասվող կոնյակի հնացման աստիճանի վերաբերյալ տարայի վրա մակնշման բացակայության դեպքում ակցիզային հարկը հաշվարկվում է սույն հոդվածի 1-ին մասի աղյուսակի՝ ԱՏԳԱԱ 220820 ծածկագրին վերաբերող տողի «գ» ենթակետով սահմանված դրույքաչափից ոչ պակաս չափով:

7. Բենզինի մեկ տոննայի համար սահմանված ակցիզային հարկի և Օրենսգրքի 4-րդ բաժնով սահմանված կարգով հաշվարկված ԱԱՀ-ի հանրագումարը 135000 դրամի և սույն հոդվածի 2-րդ մասով յուրաքանչյուր տարվա համար սահմանված՝ ակցիզային հարկի հաշվարկման գործակցի արտադրյալից պակաս լինելու դեպքում ակցիզային հարկն ավելացվում է այն չափով, որ բենզինի մեկ տոննայի համար ակցիզային հարկի և ԱԱՀ-ի հանրագումարը հավասարվի 135000 դրամի և սույն հոդվածի 2-րդ մասով յուրաքանչյուր տարվա համար սահմանված՝ ակցիզային հարկի հաշվարկման գործակցի արտադրյալին:[]:

**Հոդված 24.** Օրենսգրքի 89-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների մատակարարումը անմաքս առևտրի խանութի կազմակերպչին, ինչպես նաև կենտրոնացված մատակարարումների կազ-

մակերպման շրջանակներում անմաքս առևտրի խանութում վաճառքի համար նախատեսված՝ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների մատակարարումը կենտրոնացված մատակարարին: Ընդ որում, կենտրոնացված մատակարարը պարտավոր է ձեռք բերելուց հետո՝ 60 օրացուցային օրվա ընթացքում, սույն կետում նշված ապրանքները մատակարարել անմաքս առևտրի խանութի կազմակերպչին: Հարկ վճարողին կենտրոնացված մատակարարի կարգավիճակը տրամադրում է անմաքս առևտրի խանութի կազմակերպիչը: Անմաքս առևտրի խանութի կազմակերպչի կողմից հարկ վճարողին կենտրոնացված մատակարարի կարգավիճակ տրամադրելու մասին հարկային մարմնին տեղեկացնելու, ինչպես նաև կենտրոնացված մատակարարի մոտ սույն կետում նշված ապրանքների հաշվառման կարգը սահմանում է Կառավարությունը.»:

**Հոդված 25.** Օրենսգրքի 92-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի  ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

ԵՏՄ միասնական մաքսային օրենսդրությամբ կամ Օրենսգրքով սահմանված կարգով հումքի ներմուծման ճշտված հարկային հայտարարագիր ներկայացնելու դեպքում՝ ներմուծման ճշտված հարկային հայտարարագրի ներկայացման և ակցիզային հարկի լրացուցիչ գումարների վճարման օրերն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի, իսկ այդ օրերը տարբեր հաշվետու ժամանակաշրջաններում ներառված լինելու դեպքում՝ դրանցից վերջինը ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով՝ հաշվանցման (պակասեցման) ենթակա ակցիզային հարկի լրացուցիչ գումարի մասով, եթե սույն ենթակետով այլ բան սահմանված չէ: ԵՏՄ միասնական մաքսային օրենսդրությամբ կամ Օրենսգրքով սահմանված կարգով հումքի ներմուծման ճշտված հարկային հայտարարագիրը մինչև հաշվետու ժամանակաշրջանի համար ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի ներկայացման համար Օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վերջնաժամկետի օրը ներառյալ ներկայացնելու և մինչև այդ օրը ակցիզային հարկի լրացուցիչ գումարները վճարված լինելու դեպքում ներմուծման ճշտված հարկային հայտարարագրով արտացոլված ակցիզային հարկի լրացուցիչ գումարները հաշվանցվում են տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով.:

**Հոդված 26.** Օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 19-րդ կետ.

«19) «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19.7-րդ և 19.8-րդ հոդվածներով սահմանված գործունեության տեսակներից ստացվող եկամուտները.»:

**Հոդված 27.** Օրենսգրքի 109-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետում «առևտրային կազմակերպությունների» բառերից հետո լրացնել «, անհատ ձեռնարկատերերի և նոտարների» բառերը:

**Հոդված 28.** Օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասում մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 14-րդ կետ.

«14) «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19.7-րդ և 19.8-րդ հոդվածներով սահմանված գործունեության տեսակների գծով կատարվող ծախսերը:»:

**Հոդված 29.** Օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ.» պարբերությունում և 2-րդ կետում «տարբերություն» բառից առաջ լրացնել «բացասական» բառը:

**Հոդված 30.** Օրենսգրքի 123-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«Սույն կետի կիրառության իմաստով՝ 100 հազար դրամը գերազանցող ընդհանուր գումարով դեբիտորական պարտքը համարվում է անհուսալի դեբիտորական պարտքի գումարը բռնագանձելու պահանջը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ դատական ակտի (վճռի, որոշման կամ կարգադրության, բացառությամբ դեբիտորական պարտքի գումարը ներելու կամ այն որևէ հիմքով չպահանջելու վերաբերյալ կայացված վճռի, որոշման կամ կարգադրության) օրինական ուժի մեջ մտնելու օրվանից:»:

**Հոդված 31.** Օրենսգրքի 125-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «20» բառը փոխարինել «18» բառով.

2) 4-րդ մասում՝

ա. 2-րդ կետում «3-րդ և 4-րդ կետերով» բառերը փոխարինել «3.1-ին և 4-րդ կետերով» բառերով,

բ. ուժը կորցրած ճանաչել 3-րդ կետը,

գ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին կետ.

«3.1) շահաբաժինների մասով՝ հինգ տոկոս.»::

**Հոդված 32.** Օրենսգրքի 135-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում «կամ արտոնագրային հարկի գումարներում» բառերը փոխարինել «գումարում» բառով:

**Հոդված 33.** Օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով» բառերը փոխարինել «Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով նախատեսված՝ ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող ավտոմեքենայի օտարումից ստացվող եկամուտների մասով» բառերով:

**Հոդված 34.** Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) բոլոր տեսակի կենսաթոշակները (այդ թվում՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կուտակային բաղադրիչի շրջանակներում ստացվող կուտակային կենսաթոշակները, այլ պետությունների օրենսդրության շրջանակներում ստացվող կենսաթոշակները և այլ պետությունների կենսաթոշակային ապահովության համակարգի շրջանակներում ստացվող համանման վճարները), բացառությամբ սահմանված կարգով կամավոր կենսաթոշակային բաղադրիչին մասնակցության շրջանակներում ստացվող կենսաթոշակների.».

2) 12-րդ կետում «նորմաների» բառից հետո լրացնել «(չափերի), Հայաստանի Հանրապետության տարածքում և Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործուղման դեպքում Օրենսգրքի 117-րդ հոդվածով սահմանված չափերը չգերազանցող գումարների» բառերը.

3) 16-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«16) սեփականության իրավունքով իրենց պատկանող գույքի (բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի) օտարումից անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանցից ստացվող եկամուտները: Սույն կետի կիրառության իմաստով՝

ա. ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի օտարում է համարվում ավտոմեքենայի օտարումը, եթե ավտոմեքենան օտարվում է ձեռք բերելուց հետո 365 օրվա ընթացքում,

բ. նվազեցվող եկամուտներ չեն համարվում Օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ կառուցապատող համարվող ֆիզիկական անձին պատկանող գույքի օտարումից հարկային գործակալ չհանդիսացողներից ստացվող եկամուտները,

գ. գույք ձեռք բերել չի համարվում գույքի՝ ժառանգությամբ կամ նվիրատվությամբ ստացումը,

դ. եթե ավտոմեքենան օտարվել է օտարման օրվա դրությամբ այդ ավտոմեքենայի շուկայական գնից ողջամիտ չհամարվող ցածր գնով, ապա ավտոմեքենայի օտարման գին է

համարվում օտարման օրվա դրությամբ դրա շուկայական գնի 80 տոկոսը.».

4) 22-րդ կետի Ատոտալիզատորի մասնակիցների դրամական և իրային շահումները՝ բառերից հետո լրացնել «կամ խաղատներում, շահումով խաղերում և (կամ) ինտերնետ շահումով խաղերում ստացված շահումները» բառերը.

5) 28-րդ կետում Ապետության կամ համայնքների կարիքների համար՝ բառերից հետո լրացնել ԱՀանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ բառերը.

6) լրացնել հետևյալ բովանդակությամբ 38-րդ և 39-րդ կետեր.

«38) հողամասի (անկախ հողամասի նպատակային նշանակությունից) օտարումից ստացվող եկամուտները.

39) առևտրի իրականացման վայրերում (ոսկու շուկաներում) վաճառատեղանների կամ վաճառակետերի միջոցով թանկարժեք մետաղների, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի կամ թանկարժեք քարերի առք ու վաճառքի գործունեություն իրականացնող հարկային գործակալին օտարվող ոսկու և թանկարժեք քարերի դիմաց ստացվող եկամուտները:»:

**Հոդված 35.** Օրենսգրքի 150-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Եթե սույն հոդվածի 2-15-րդ մասերով այլ բան սահմանված չէ, ապա հարկման բազայի նկատմամբ եկամտային հարկը հաշվարկվում է հետևյալ դրույքաչափերով.

Ժամանակահատված	Եկամտային հարկի դրույքաչափը
2020 թվականի հունվարի 1-ից	23 տոկոս
2021 թվականի հունվարի 1-ից	22 տոկոս
2022 թվականի հունվարի 1-ից	21 տոկոս
2023 թվականի հունվարի 1-ից	20 տոկոս

».

2) 7-րդ մասում «58,35» թիվը փոխարինել «60» թվով.

3) 8-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8. Շահաբաժինների մասով եկամտային հարկը հաշվարկվում է հինգ տոկոս դրույքաչափով:».

4) 9-րդ մասից հանել «10-րդ մասի 2-րդ կետով և» բառերը.

5) 10-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10. Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի «ա» ենթակետով սահմանված դեպքում ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի օտարումից (այդ

թվում՝ նաև այն դեպքում, երբ գույքն օտարվում է անհատ ձեռնարկատեր և նույնպես չհանդիսացող ֆիզիկական անձանցից տարբերվող և հարկային գործակալ չհանդիսացող անձի) ստացվող ամբողջ եկամուտների մասով եկամտային հարկը հաշվարկվում է 1 տոկոս դրույքաչափով, բայց ոչ պակաս, քան ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի շարժիչի յուրաքանչյուր ձիաուժ հզորության համար 150 դրամից: Շարժիչի հզորությունը կիրառված արտահայտված լինելու դեպքում համապատասխան հզորության նկատմամբ կիրառվում է 1.36 գործակից:»:

6) 15-րդ մասում «20» թիվը փոխարինել «10» թվով:

**Հոդված 36.** Օրենսգրքի 153-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետից հանել «, ինչպես նաև խաղատներում, շահումով խաղերում և (կամ) ինտերնետ շահումով խաղերում ստացված շահումներին» բառերը:

**Հոդված 37.** Օրենսգրքի 168-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 2-րդ կետի՝

ա. աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Շարժիչի հզորություն	Ավտոտրանսպորտային միջոցի արտադրության տարին							
	1-ին տարի՝ յուրաքանչյուր ձիաուժի մասով	2-րդ տարի՝ յուրաքանչյուր ձիաուժի մասով	3-րդ տարի՝ յուրաքանչյուր ձիաուժի մասով	4-րդ տարի՝ յուրաքանչյուր ձիաուժի մասով	5-րդ տարի՝ յուրաքանչյուր ձիաուժի մասով	6-րդ տարի՝ յուրաքանչյուր ձիաուժի մասով	7-րդ տարի՝ յուրաքանչյուր ձիաուժի մասով	8-րդ և դրան հաջորդող յուրաքանչյուր տարի՝ յուրաքանչյուր ձիաուժի մասով
մինչև 50 ձիաուժ	2.5 դրամ	2.5 դրամ	2.5 դրամ	3 դրամ	3.5 դրամ	4 դրամ	4.5 դրամ	5 դրամ
51-80 ձիաուժ	5 դրամ	5 դրամ	5 դրամ	6 դրամ	7 դրամ	8 դրամ	9 դրամ	10 դրամ
81-100 ձիաուժ	7.5 դրամ	7.5 դրամ	7.5 դրամ	9 դրամ	10.5 դրամ	12 դրամ	13.5 դրամ	15 դրամ
101-150 ձիաուժ	10 դրամ	10 դրամ	10 դրամ	12 դրամ	14 դրամ	16 դրամ	18 դրամ	20 դրամ
151-200 ձիաուժ	12.5 դրամ	12.5 դրամ	12.5 դրամ	15 դրամ	17.5 դրամ	20 դրամ	22.5 դրամ	25 դրամ
201-250 ձիաուժ	15 դրամ	15 դրամ	15 դրամ	18 դրամ	21 դրամ	24 դրամ	27 դրամ	30 դրամ
251-300 ձիաուժ	17.5 դրամ	17.5 դրամ	17.5 դրամ	21 դրամ	24.5 դրամ	28 դրամ	31.5 դրամ	35 դրամ
301 և ավելի ձիաուժ	25 դրամ	25 դրամ	25 դրամ	30 դրամ	35 դրամ	40 դրամ	45 դրամ	50 դրամ

բ. երկրորդ պարբերությունում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասու-

թուն.

«Սույն կետի կիրառության իմաստով՝ այլ ինքնագնաց մեքենաների և մեխանիզմների, ինչպես նաև լողամիջոցների համար բնապահպանական հարկի դրույթաչափը սահմանվում է սույն կետի աղյուսակի վերջին սյունով սահմանված համապատասխան (ըստ շարժիչի հզորության) դրույթաչափի կրկնապատիկի չափով:».

2) 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 38.** Օրենսգրքի 181-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «բ» ենթակետում «տարեկան բնապահպանական հարկի գումարի կրկնապատիկի» բառերը փոխարինել «երկու հարկային տարիների տարեկան բնապահպանական հարկի գումարների հանրագումարի» բառերով:

**Հոդված 39.** Օրենսգրքի 187-րդ հոդվածի 5-րդ մասում «2-րդ և 3-րդ մասերի» բառերը փոխարինել «2-րդ մասի» բառերով:

**Հոդված 40.** Օրենսգրքի 254-րդ հոդվածում՝

1) 1-ին մասից հանել «(անկախ բացառապես արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակներ իրականացնելու հանգամանքից)» բառերը.

2) 2-րդ մասի 1-ին կետից հանել «արտոնագրային հարկի և (կամ)» բառերը.

3) 3-րդ մասի՝

ա. 1-ին և 2-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել,

բ. 3-րդ կետում «չափումով խաղերի» բառերից հետո լրացնել «, տոտալիզատորի և ինտերնետ տոտալիզատորի» բառերը.

4) 4-րդ մասից հանել «, բացառությամբ գործունեության այն տեսակների, որոնք համարվում են արտոնագրային հարկով հարկման օբյեկտ» բառերը.

5) 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Սույն գլխով սահմանված պայմանները չբավարարող (բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով սահմանված դեպքերի)՝ հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերում և ժամկետներում (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու դեպքի) կարող են համարվել շրջանառության հարկ վճարող սույն հոդվածի 1-ին մասով սահմանված



Ժամկետներում հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնելու համար շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հարկային մարմնի հաստատած ձևով հայտարարություն հարկային մարմին ներկայացնելու դեպքում՝ անկախ սույն գլխով սահմանված սահմանափակումներից:»:

6) լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ և 8-րդ մասեր.

«7. Հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարող այն ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը (բացառությամբ սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված դեպքերի), որոնց տվյալ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը գերազանցել է 115 միլիոն դրամը կամ տվյալ հարկային տարվա ընթացքում տեղի է ունեցել Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 4-7-րդ կետերում նշված փաստերից որևէ մեկը, իրացման շրջանառության՝ սույն մասով սահմանված չափը գերազանցելու կամ Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 4-7-րդ կետերում նշված փաստերից որևէ մեկը տեղի ունենալու օրվանից մինչև այդ օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնելու համար շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հարկային մարմնի հաստատած ձևով հայտարարություն հարկային մարմին ներկայացնելու դեպքում կարող են այդ օրվանից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու դեպքի) շարունակել համարվել շրջանառության հարկ վճարող՝ անկախ սույն գլխով սահմանված սահմանափակումներից (բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով սահմանված դեպքերի):

8. Սույն բաժնի կիրառության իմաստով՝ հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեություն է համարվում խոհարարական արտադրանքի օտարումը (այդ թվում՝ առաքմամբ) և (կամ) սպառման կազմակերպումը: Այդ գործունեությունը ներառում է նաև խոհարարական արտադրանքի սպառման կազմակերպման հետ անմիջականորեն կապված ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը, ծառայությունների մատուցումը, մասնավորապես՝ սպասարկումը, մուտքի թույլտվությունը:»:

**Հոդված 41.** Օրենսգրքի 255-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) «Շրջանառության հարկ վճարողը դադարում է» բառերից հետո լրացնել «(բացառությամբ Օրենսգրքի 254-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով սահմանված դեպքերի)» բառերը.

2) 5-րդ կետի 2-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետում նշված որոշումը դատական կարգով բողոքարկվելու դեպքում առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները

շարունակում են համարվել շրջանառության հարկ վճարողներ, իսկ Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետում նշված որոշումն անվավեր չճանաչելու վերաբերյալ դատարանի վճիռն ուժի մեջ մտնելու դեպքում փոխկապակցված ճանաչված առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները դադարում են համարվել շրջանառության հարկ վճարողներ սույն կետում սահմանված ժամկետից»:

**Հոդված 42.** Օրենսգրքի 256-րդ հոդվածում «և (կամ) ծառայությունների մատուցումը» բառերից հետո լրացնել «, բացառությամբ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19.7-րդ և 19.8-րդ հոդվածներով սահմանված գործունեության տեսակների շրջանակներում ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը և (կամ) ծառայությունների մատուցումը» բառերը, իսկ «համարվում նաև» բառերից հետո լրացնել «ոչ նյութական ակտիվների օտարման գործարքները, ինչպես նաև» բառերը:

**Հոդված 43.** Օրենսգրքի 257-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

ՈՅ. Վիճակախաղերի կազմակերպման գործունեությունից ստացվող եկամուտների հաշվառման ու դրա նկատմամբ հսկողության իրականացման կարգը սահմանում է Կառավարությունը:

**Հոդված 44.** Օրենսգրքի 258-րդ հոդվածի`

1) 1-ին մասում «հաշվի առնելով սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով» բառերը փոխարինել «հաշվի առնելով սույն հոդվածի 2-4-րդ մասերով» բառերով.

2) 1-ին մասի աղյուսակի «Հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողների կողմից Հայաստանի Հանրապետությունում կիրառվող` տնտեսական գործունեության դասակարգչի «Հանրային սննդի կազմակերպում» հատվածում չներառվող` այլ ակտիվների օտարումից, ինչպես նաև այլ գործունեությունից ստացվող եկամուտներ» տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնելու համար շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հարկային մարմնի հաստատած ձևով հայտարարություն ներկայացրած շրջանառության հարկ վճարողների կողմից Հայաստանի Հանրապետությունում կիրառվող` տնտեսական գործունեության դասակարգչի «Հանրային սննդի կազմակերպում» հատվածում չներառվող` այլ ակտիվների օտարումից, ինչպես նաև այլ գործունեությունից ստացվող եկամուտներ».

3) 1-ին մասի աղյուսակի «Հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից

ստացվող եկամուտներ» տողի 2-րդ սյունակի «8» թիվը փոխարինել «6» թվով.

4) 2-րդ մասում «հաշվարկված մաքսատուրքի, ԱԱՀ-ի» բառերից հետո լրացնել «, ակցիզային հարկի» բառերը, «ԱԱՀ-ով հարկման բազայի, հաշվարկված ԱԱՀ-ի» բառերից հետո լրացնել «, ակցիզային հարկի» բառերը.

5) 3-րդ մասում «հինգ» բառը փոխարինել «երեք» բառով.

6) լրացնել հետևյալ խմբագրությամբ 4-րդ մաս.

«4. Հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնելու համար շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հարկային մարմնի հաստատած ձևով հայտարարություն ներկայացրած շրջանառության հարկ վճարողները շրջանառության հարկը հաշվարկում են միայն սույն հոդվածի 1-ին մասի 8-րդ և 9-րդ տողերով սահմանված համապատասխան դրույքաչափերով:»:

**Հոդված 45.** Օրենսգրքի 261-րդ հոդվածում լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ.

«Օրենսգրքով 84-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և (կամ) 4-րդ կետերով սահմանված հարկման օբյեկտների մասով ակցիզային հարկ վճարող համարվելու դեպքում շրջանառության հարկ վճարողները մինչև յուրաքանչյուր հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ՝ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկ:»:

**Հոդված 46.** Օրենսգրքի 267-րդ հոդվածի 2-րդ մասում, 5-րդ մասի 7-րդ կետում և 268-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «18» բառը փոխարինել «24» բառով:

**Հոդված 47.** Օրենսգրքի 56-րդ գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

#### **« Գ Լ ՈՒ Խ 56**

#### **ՄԻԿՐՈԾԵՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ**

**Հոդված 266. Միկրոձեռնարկատիրությունը**

1. Միկրոձեռնարկատիրություն է համարվում սույն գլխով սահմանված չափանիշներին բավարարող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունների և ֆիզիկական անձանց կողմից ձեռնարկատիրական եկամուտ ստանալու նպատակով իրականացվող գործունեությունը:

**Հոդված 267. Միկրոձեռնարկատիրության սուբյեկտները**

1. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված պայմանը բավարարող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը (բացառությամբ սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքերի) միկրոձեռնարկատիրության սուբյեկտներ են համարվում հետևյալ դեպքերում և ժամկետներում.

1) տվյալ հարկային տարվա հունվարի 1-ից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 254-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու կամ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքերի), եթե հարկ վճարողը մինչև տվյալ հարկային տարվա փետրվարի 20-ը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն.

2) հարկային տարվա ընթացքում պետական գրանցում ստացած առևտրային կազմակերպությունը կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված ֆիզիկական անձը՝ համապատասխանաբար, որպես կազմակերպություն պետական գրանցման կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման օրվանից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 254-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու կամ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքերի), եթե հարկ վճարողը մինչև համապատասխանաբար՝ որպես կազմակերպություն պետական գրանցման կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն: Սույն կետի կիրառության իմաստով՝ վերակազմակերպման արդյունքում նոր ստեղծվող կազմակերպության կամ կազմակերպությունների (բացառությամբ միացման ձևով վերակազմակերպման դեպքում այն կազմակերպության, որին միանում են այլ կազմակերպություն կամ կազմակերպություններ և առանձնացման ձևով վերակազմակերպման դեպքում այն կազմակերպության, որից առանձնանում են այլ կազմակերպություն կամ կազմակերպություններ) համար պետական գրանցում է համարվում նաև կազմակերպությունների վերակազմակերպման պետական գրանցումը.

3) մինչև հարկային տարվա փետրվարի 20-ը ներառյալ գործունեություն չիրականացրած (գործունեությունը դադարեցրած) առևտրային կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը գործունեությունը վերսկսելու օրվանից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 254-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու կամ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքերի), եթե հարկ վճարողը մինչև գործու-

նեությունը վերսկսելու օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն.

4) մինչև տվյալ հարկային տարին սկսվելը պետական հաշվառումից դուրս եկած անհատ ձեռնարկատերը տվյալ հարկային տարում կրկին որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվելու օրվանից մինչև հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 254-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու կամ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքերի), եթե հարկ վճարողը մինչև կրկին որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվելու օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն.

5) հարկային տարվա ընթացքում պետական հաշվառումից դուրս եկած անհատ ձեռնարկատերը տվյալ հարկային տարում կրկին որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվելու օրվանից մինչև հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 254-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու կամ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքերի), եթե հարկ վճարողը մինչև կրկին որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվելու օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն, բացառությամբ այն դեպքերի, երբ անհատ ձեռնարկատերը տվյալ հարկային տարվա ընթացքում՝ մինչև պետական հաշվառումից դուրս գալը, Օրենսգրքի 254-րդ հոդվածի համաձայն, համարվել է շրջանառության հարկ վճարող, կամ Օրենսգրքի 59-րդ հոդվածի համաձայն, համարվել են ԱԱՀ վճարող:

2. Սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված պայմանները բավարարող անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը միկրոձեռնարկատիրության սուբյեկտ է համարվում, եթե հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն: Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարությունը ներկայացնում է գործունեության իրականացման որևէ ժամանակահատվածի (հարկային տարվա ընթացքում ընտրված ցանկացած հաշվետու ամսվա կամ մեկից ավելի հաշվետու ամիսների կամ հարկային տարվա կամ հարկային տարիների) համար մինչև տվյալ գործունեության տեսակն իրականացնելը կամ տվյալ գործունեության տեսակը շարունակելը: Հարկային մարմինը միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համար-

վելու վերաբերյալ հայտարարություն ներկայացրած անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձին միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարությունը ներկայացնելու օրվան հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է իր կողմից սահմանված ձևով միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ արտոնագիր:

3. Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ կարող է համարվել այն ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը և անհատ ձեռնարկատերը, որի նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը չի գերազանցել 24 միլիոն դրամը, ինչպես նաև անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այն ֆիզիկական անձը, որի նախորդ հարկային տարվա ընթացքում Օրենսգրքի բաղկացուցիչ մասը կազմող հավելված 3-ով սահմանված գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը չի գերազանցել է 24 միլիոն դրամը: Սույն մասի կիրառության առումով`

1) իրացման շրջանառությունը ներառում է նաև շրջանառության հարկով հարկման համակարգի շրջանակներում իրականացվող գործունեության տեսակներին վերագրվող իրացման շրջանառությունը.

2) առևտրային կազմակերպությունների վերակազմակերպման դեպքում հաշվի են առնվում հետևյալ առանձնահատկությունները.

ա. բաժանման ձևով կազմակերպության վերակազմակերպման դեպքում նոր ստեղծված կազմակերպություններից յուրաքանչյուրի համար նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառություն է համարվում բաժանման ձևով վերակազմակերպված կազմակերպության նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը,

բ. առանձնացման ձևով կազմակերպության վերակազմակերպման դեպքում ինչպես այն կազմակերպության համար, որից առանձնացել են այլ կազմակերպություն կամ կազմակերպություններ, այնպես էլ առանձնացված կազմակերպության կամ կազմակերպություններից յուրաքանչյուրի համար նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառություն է համարվում վերակազմակերպված կազմակերպության նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը,

գ. միաձուլման ձևով կազմակերպությունների վերակազմակերպման դեպքում նոր ստեղծված կազմակերպության համար նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառություն է համարվում միաձուլված կազմակերպությունների նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունների ամբողջությունը,

դ. միացման ձևով կազմակերպությունների վերակազմակերպման դեպքում այն կազմակերպության համար, որին միացել են այլ կազմակերպություն կամ կազմակերպություններ, նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառություն է համարվում տվյալ կազմակերպության նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության և միացած կազմակերպության կամ կազմակերպությունների նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունների ամբողջությունը:

4. Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը կարող է համարվել միկրո-ձեռնարկատիրության սուբյեկտ, եթե զբաղվում է բացառապես Օրենսգրքի բաղկացուցիչ մասը կազմող հավելված 3-ով սահմանված գործունեության տեսակներով:

5. Միկրոձեռնարկատիրության սուբյեկտներ չեն կարող համարվել՝

1) բանկերը, վարկային կազմակերպությունները, ապահովագրական ընկերությունները, ներդրումային ընկերությունները, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցները, գրավատները, արտարժույթի առք ու վաճառքի, արտարժույթի դիլերային-բրոկերային առք ու վաճառքի գործունեություն իրականացնողները, ներդրումային ֆոնդերը, ֆոնդերի կառավարիչները, վճարահաշվարկային կազմակերպությունները, նոտարները, խաղատների, շահումով խաղերի կամ վիճակախաղերի կազմակերպման գործունեություն իրականացնողները.

2) խորհրդատվական, իրավաբանական, հաշվապահական, աուդիտորական, ինժեներական, գովազդային, դիզայներական, մարկետինգային, թարգմանչական, փորձագիտական, բժշկական, ատամնատեխնիկական ծառայություններ, տեղեկատվության մշակման (այդ թվում՝ տեղեկատվության հավաքման ու ընդհանրացման) և փոխանցման (հաղորդման), գիտահետազոտական, փորձարարական-կոնստրուկտորական և փորձարարական-տեխնոլոգիական (տեխնոլոգիական) աշխատանքներ կատարողները, հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնողները (բացառությամբ Օրենսգրքի հավելված 3-ով նախատեսված՝ զբոսաշրջային տների միջոցով մատուցվող՝ հյուրանոցային ծառայությունների հետ անմիջականորեն կապված՝ հանրային սննդի (նախաճաշ, ճաշ, ընթրիք) ոլորտի գործունեության), ինչպես նաև սույն ենթակետում նշված աշխատանքներին կամ ծառայություններին համանման այլ աշխատանքներ կատարողները կամ ծառայություններ մատուցողները.

3) Երևան քաղաքի վարչական սահմաններում առևտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ զբաղվող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը, Երևան քաղաքի վարչական սահմաններից դուրս՝ առևտրի իրականացման վայրերում, առևտրի կենտրոններում և տոնավաճառներում առևտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ զբաղվող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը, ինչպես նաև անձնական օգտագործման ավտոմեքենաների առևտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ կամ էլեկտրոնային առևտրի

շրջանակներում առևտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ զբաղվող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը.

4) «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19.7-րդ և 19.8-րդ հոդվածներով սահմանված գործունեության տեսակներով զբաղվող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը՝ այդ գործունեության տեսակների մասով.

5) հարկային տարվա ընթացքում հսկիչ դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների երրորդ խախտումը կատարած կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը՝ խախտումն արձանագրելու օրվանից մինչև այդ օրը ներառող հարկային տարվան հաջորդող հարկային տարվա ավարտը.

6) Օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխկապակցված համարվող կազմակերպությունները և ֆիզիկական անձինք, բացառությամբ այն դեպքերի, երբ, Օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, նրանց փոխկապակցված կազմակերպությունները և (կամ) ֆիզիկական անձինք հարկային մարմին են ներկայացրել գործունեությունը դադարեցնելու մասին հայտարարություն և հայտարարությունը ներկայացնելու օրվանից հետո, իսկ հայտարարությունում գործունեությունը դադարեցնելու այլ օր նշելու դեպքում՝ այդ օրվանից հետո փաստացի գործունեություն չեն իրականացրել.

7) Օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փոխկապակցված համարվող կազմակերպությունները և ֆիզիկական անձինք, եթե հարկային մարմնի ղեկավարի որոշմամբ փոխկապակցված ճանաչված առևտրային կազմակերպությունների և ֆիզիկական անձանց նախորդ հարկային տարվա կամ ընթացիկ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունների հանրագումարը գերազանցում է 24 միլիոն դրամը.

8) Օրենսգրքի 31-րդ հոդվածով սահմանված՝ համատեղ գործունեության պայմանագրի, ինչպես նաև ապրանքների մատակարարման՝ կոմիսիայի կամ ապրանքների մատակարարման՝ գործակալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրի կողմ հանդիսացող կազմակերպությունները և ֆիզիկական անձինք.

9) իրենց գործունեության ընթացքում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այլ ֆիզիկական անձանց աշխատանքն օգտագործող անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք.

10) կազմակերպություններին կամ անհատ ձեռնարկատերերին ապրանքների մատակարարման գործարքներ իրականացրած՝ առևտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ զբաղվող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը:

#### **Հոդված 268. Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարելը**



1. Միկրոձեռնարկատիրության սուբյեկտը դադարում է այդպիսին համարվելուց, եթե՝

1) կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը հարկային մարմին է ներկայացրել հայտարարություն՝ նշում կատարելով ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու մասին՝ հայտարարությունում նշված օրվանից (բայց հայտարարությունը ներկայացնելու օրվան նախորդող 20-րդ օրվանից ոչ շուտ) մինչև հայտարարությունում նշված հարկային տարվա ավարտը կամ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն՝ այդ հայտարարությունում նշված օրվանից (բայց հայտարարությունը ներկայացնելու օրվան նախորդող 20-րդ օրվանից ոչ շուտ) մինչև տվյալ հարկային տարվա ավարտը.

2) ընթացիկ հարկային տարում կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ գործունեության բոլոր տեսակների, իսկ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի դեպքում՝ Օրենսգրքի բաղկացուցիչ մասը կազմող հավելված 3-ով սահմանված գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը գերազանցել է 24 միլիոն դրամը՝ գերազանցելու պահից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը.

3) տեղի է ունեցել Օրենսգրքի 267-րդ հոդվածի 5-րդ մասի 1-3-րդ, 6-րդ, 8-րդ կամ 9-րդ կետերում նշված փաստերից որևէ մեկը՝ այդ փաստը տեղի ունենալու օրվանից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը.

4) տեղի է ունեցել Օրենսգրքի 267-րդ հոդվածի 5-րդ մասի 5-րդ և 10-րդ կետերում նշված փաստերից որևէ մեկը տեղի ունենալու օրվանից մինչև այդ օրը ներառող հարկային տարվան հաջորդող հարկային տարվա ավարտը.

5) տեղի է ունեցել Օրենսգրքի 267-րդ հոդվածի 5-րդ մասի 7-րդ կետում նշված փաստը՝ այդ փաստը տեղի ունենալու օրը ներառող հարկային տարվա սկզբից, իսկ եթե հարկ վճարողը պետական գրանցում է ստացել կամ հաշվառվել է ավելի ուշ, ապա պետական գրանցման կամ հաշվառման օրվանից: Օրենսգրքի 267-րդ հոդվածի 5-րդ մասի 7-րդ կետում նշված որոշումը դատական կարգով բողոքարկվելու դեպքում առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք շարունակում են համարվել միկրոձեռնարկատիրության սուբյեկտներ, իսկ Օրենսգրքի 267-րդ հոդվածի 5-րդ մասի 7-րդ կետում նշված որոշումն անվավեր չճանաչելու վերաբերյալ դատարանի վճիռն ուժի մեջ մտնելու դեպքում փոխկապակցված ճանաչված առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք դադարում են համարվել միկրոձեռնարկատիրության սուբյեկտներ սույն կետում սահմանված ժամկետից:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերով միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարած անհատ ձեռնարկատերը և անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը նույն մասով նախատեսված՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարելու համապատասխան ժամկետներում գրկվում է համապատասխանա-

բար՝ որպես անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ կամ որպես անհատ ձեռնարկատեր միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու իրավունքից:

**Հոդված 269. Միկրոձեռնարկատիրության սուբյեկտների կողմից հարկերի և վճարման հաշվարկումը և վճարումը**

1. Միկրոձեռնարկատիրության սուբյեկտներն ազատվում են միկրոձեռնարկատիրության մասով առաջացող բոլոր պետական հարկերի հաշվարկման և պետական բյուջե վճարման պարտավորությունից (այդ թվում՝ որպես հարկային գործակալ՝ հարկը հաշվարկելու, պահելու և պետական բյուջե փոխանցելու պարտավորությունից, ինչպես նաև Օրենսգրքի 135-րդ հոդվածով սահմանված՝ շահութահարկի կանխավճարների կատարման պարտավորությունից), բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի:

2. Միկրոձեռնարկատիրության սուբյեկտները չեն ազատվում՝

1) Հայաստանի Հանրապետություն ներմուծվող (այդ թվում՝ ԵՏՄ անդամ պետություններից) ապրանքների մասով Օրենսգրքով սահմանված կարգով հարկերի հաշվարկման և պետական բյուջե վճարման պարտավորությունից.

2) միկրոձեռնարկատիրության մեջ ներգրավված վարձու աշխատողներին հարկային գործակալի կողմից վճարվող (հաշվարկվող) հարկվող եկամուտներից յուրաքանչյուր վարձու աշխատողի համար ամսական հինգ հազար դրամի չափով եկամտային հարկ հաշվարկելու և վճարելու պարտավորությունից (այդ թվում՝ ոչ ամբողջական ամսվա համար), որը այդ եկամուտների մասով համարվում է եկամտային հարկի գծով վերջնական հարկային պարտավորություն.

3) Օրենսգրքով սահմանված կարգով ակցիզային հարկի, բնապահպանական հարկի և (կամ) ճանապարհային հարկի հաշվարկման և պետական բյուջե վճարման պարտավորությունից:

**Հոդված 270. Միկրոձեռնարկատիրության սուբյեկտների կողմից հարկային հաշվարկներ ներկայացնելը**

1. Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը (բացառությամբ բացառապես Օրենսգրքի բաղկացուցիչ մասը կազմող հավելված 3-ով սահմանված գործունեության տեսակների մասով միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվող անհատ ձեռնարկատերերի) մինչև հարկային տարվան հաջորդող հարկային տարվա փետրվարի 1-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում հաշվետվություն՝ նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառու-

թյան վերաբերյալ:

2. Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը մինչև յուրաքանչյուր հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում Օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ եկամտային հարկի հաշվարկ՝ միկրոձեռնարկատիրությունում ներգրավված վարձու աշխատողների համար:

3. Միկրոձեռնարկատիրության սուբյեկտներն ազատվում են հարկային մարմին Օրենսգրքով սահմանված այլ հարկային հաշվարկներ ներկայացնելուց, բացառությամբ՝

1) Օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված փաստաթղթերի.

2) Օրենսգրքի 67-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներից որևէ մեկի խախտմամբ դուրս գրված հարկային հաշվում առանձնացված ԱԱՀ-ի գումարն արտացոլող՝ ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի.

3) Օրենսգրքով 84-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և (կամ) 4-րդ կետերով սահմանված հարկման օբյեկտների մասով Օրենսգրքով սահմանված կարգով ակցիզային հարկ վճարող համարվելու դեպքում՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ հարկային մարմին ներկայացվող՝ ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի.

4) Օրենսգրքի 180-րդ հոդվածով սահմանված՝ բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների միասնական հարկային հաշվարկի:

#### **Հոդված 271. Միկրոձեռնարկատիրության սուբյեկտների կողմից հարկերի և վճարների վճարումը**

1. Օրենսգրքի 269-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված՝ միկրոձեռնարկատիրության մեջ ներգրավված վարձու աշխատողներին հարկային գործակալի կողմից վճարվող (հաշվարկվող) հարկվող եկամուտներից յուրաքանչյուր վարձու աշխատողի համար ամսական հինգ հազար դրամի չափով եկամտային հարկի գումարները հաշվարկվում և պետական բյուջե են վճարվում մինչև եկամուտների վճարման (հաշվարկման) ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

#### **Հոդված 272. Միկրոձեռնարկատիրության համակարգից շրջանառության հարկի համակարգին կամ հարկման ընդհանուր համակարգին անցումը**

1. Ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը և անհատ ձեռնարկատերը միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարելու պահից՝

1) շրջանառության հարկի համակարգ անցնելու դեպքում տվյալ հարկային տարվա մնա-

ցած ժամանակահատվածում (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքերի) հարկային պարտավորությունները հաշվարկում և կատարում են Օրենսգրքի 55-րդ գլխով սահմանված կարգով՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարելու պահից հետո ձևավորվող հարկման բազաների մասով:

2) հարկման ընդհանուր համակարգ անցնելու դեպքում տվյալ հարկային տարվա մնացած ժամանակահատվածում հարկային պարտավորությունները հաշվարկում և կատարում են Օրենսգրքով սահմանված կարգով՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարելու պահից հետո ձևավորվող հարկման բազաների մասով:

2. Միկրոձեռնարկատիրության համակարգից հարկման ընդհանուր համակարգ անցնելու դեպքում հարկ վճարողի համախառն եկամտից նվազեցվում են մինչև միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելը և (կամ) միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու ժամանակահատվածում կատարված՝ հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ ձեռք բերելու ծախսերը՝ Օրենսգրքով սահմանված կարգով: Սույն մասի կիրառության իմաստով՝ միկրոձեռնարկատիրության համակարգից հարկման ընդհանուր համակարգ անցնելու դեպքում՝

1) հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը որոշելու համար հաշվի են առնվում միկրոձեռնարկատիրության համակարգում հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մասով Օրենսգրքի 121-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկվող ամորտիզացիոն մասհանումները:

2) հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մասով Օրենսգրքի 121-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկվող ամորտիզացիոն մասհանումների գծով ծախսերը համախառն եկամտից նվազեցվում են միկրոձեռնարկատիրության համակարգից հարկման ընդհանուր համակարգ անցնելու օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

3) Օրենսգրքի 121-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված և միկրոձեռնարկատիրության համակարգից հարկման ընդհանուր համակարգ անցնելու օրն ընդգրկող ամսվան վերաբերող՝ վարչական, իրացման, ոչ արտադրական բնույթի այլ, ինչպես նաև ֆինանսական ծախսերը (այն մասով, որը, նույն մասի համաձայն, նվազեցվում է այն հարկային տարվա ընթացքում, որին այն վերաբերում է) համախառն եկամտից նվազեցվում են միկրոձեռնարկատիրության համակարգից հարկման ընդհանուր համակարգ անցնելու օրվանից մինչև այդ օրն ընդգրկող ամսվա վերջը եղած օրերի՝ տվյալ ամսվա բոլոր օրերի կառուցվածքում ունեցած տեսակարար կշռին համապատասխանող չափով:

3. Միկրոձեռնարկատիրության համակարգից հարկման ընդհանուր համակարգ անցնելու դեպքում հարկ վճարողի համախառն եկամտից նվազեցվում են մինչև միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելը և (կամ) միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու ժամա-

Նակահատվածում կատարված՝ սույն հոդվածի 2-րդ մասում չնշված ակտիվների սկզբնական արժեքները՝ Օրենսգրքով սահմանված կարգով:

Ցանկ

գործունեության տեսակների, որոնք կարող են իրականացվել միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվող՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից

Գործունեության տեսակները	
1.	Բնակչության պատվերով կատարվող՝
1)	կոշիկի և կաշվե գալանտերեայի և համանման այլ արտադրատեսակների արտադրություն, կոշիկի և կաշվե գալանտերեայի պարագաների արտադրություն, կոշիկի և կաշվե արտադրատեսակների նորոգում
2)	հագուստի արտադրություն և նորոգում
3)	զլխարկների արտադրություն և նորոգում
4)	գորգերի և գորգագործական արտադրատեսակների արտադրություն և նորոգում
5)	փայտյա իրերի պատրաստում, կահույքի և տան կահավորանքի նորոգում
6)	ոչ թանկարժեք զարդերի արտադրություն և նորոգում
7)	համակարգչային տեխնիկայի, հեռուստացույցների, լվացքի մեքենաների, օդորակիչների և այլ կենցաղային տեխնիկայի նորոգում, ծրագրային սպասարկում
8)	հեծանիվների և հաշմանդամների սայլակների արտադրություն, անձնական օգտագործման և կենցաղային այլ արտադրատեսակների նորոգում
9)	տնտեսական և գեղազարդ խեցեգործական արտադրատեսակների արտադրություն
10)	այլ ձեռնապակե և խեցեգործական արտադրատեսակների արտադրություն
11)	թիթեղագործական գործունեություն
2.	ժամացույցների, ժամանակաչափ սարքերի նորոգում, երաժշտական գործիքների նորոգում
3.	Նեղ մասնագիտական գիտելիքների ձեռքբերման այլ դասընթացներ
4.	Լեզուների ուսուցման դասընթացներ
5.	Բարձրագույն և այլ հաստատություններ ընդունվելու համար նախապատրաստական դասընթացներ
6.	Պարեր, երգեցողություն դասավանդողների գործունեություն
7.	Կատարողական արվեստի բնագավառում գործունեություն, կատարողական արվեստի բնագավառում օժանդակ գործունեություն
8.	Ստեղծագործական գործունեություն

9.	Խնջույքավարների գործունեություն
10.	Կրթական գործունեություն և արտադպրոցական դաստիարակություն մարմնամարզության և սպորտի բնագավառում
11.	Մասնավոր տնային տնտեսություններում ծառայությունների մատուցում (առանց տարբերակման) սեփական սպառման համար
12.	Դարբնոցային գործունեություն
13.	Ձբոսաշրջային տների միջոցով հյուրանոցային ծառայությունների մատուցում (այդ թվում՝ այդ ծառայությունների հետ անմիջականորեն կապված՝ հանրային սննդի (նախաճաշ, ճաշ, ընթրիք) ոլորտի գործունեությունը)

»:

**Հոդված 48.** Օրենսգրքի 314-րդ հոդվածի 4-րդ մասում՝

1) 1-ին կետում «կազմակերպության» բառից հետո լրացնել «(բացառությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի)» բառերը, իսկ «, իսկ առկայության դեպքում՝ նաև օտարերկրյա պետությունում եկամուտների ստացումը հիմնավորող փաստաթղթերի պատճենը» բառերը փոխարինել «, ինչպես նաև օտարերկրյա պետությունում եկամուտների ստացումը հիմնավորող փաստաթղթերի պատճենը՝ եկամուտների առկայության դեպքում» բառերով.

2) լրացնել հետևյալ խմբագրությամբ 1.1-ին կետ.

«1.1) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի դեպքում՝ դիմում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտի կարգավիճակի հաստատման տեղեկանք ստանալու վերաբերյալ.».».

3) 2-րդ կետի «ա» ենթակետում «, իսկ առկայության դեպքում՝ նաև օտարերկրյա պետությունում եկամուտների ստացումը հիմնավորող փաստաթղթերի պատճենը» բառերը փոխարինել «, ինչպես նաև օտարերկրյա պետությունում եկամուտների ստացումը հիմնավորող փաստաթղթերի պատճենը՝ եկամուտների առկայության դեպքում» բառերով:

**Հոդված 49.** Օրենսգրքի 343-րդ հոդվածի 5-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ կետ.

«7) կենտրոնացված մատակարարի կողմից անմաքս առևտրի խանութի կազմակերպչին ապրանքների մատակարարման ժամկետի խախտում հայտնաբերելու դեպքում:»:

**Հոդված 50.** Օրենսգրքի 380-րդ, 381-րդ, 384-րդ և 416-րդ հոդվածներում «պլաստիկ

քարտերի» բառերը փոխարինել «վճարային քարտերի կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքների» բառերով:

**Հոդված 51.** Օրենսգրքի 386-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված սահմանափակումների կիրառության իմաստով՝

1) կանխիկ դրամով վճարում է համարվում ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման յուրաքանչյուր գործարքի դիմաց կատարվող բոլոր վճարումների (այդ թվում՝ կանխավճարների, մասնակի վճարումների) հանրագումարը.

2) կանխիկ դրամով վճարում չի համարվում այն վճարումը, որի մասով դուրս է գրվել Օրենսգրքի 381-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերության 4-րդ կետով սահմանված՝ ապրանք ձեռք բերող, աշխատանք ընդունող և (կամ) ծառայություն ստացող կազմակերպության, անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի հարկ վճարողի հաշվառման համարը պարունակող՝ հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոն:».

2) 4-րդ մասից հանել «գյուղատնտեսական արտադրանք մթերող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից» բառերը:

**Հոդված 52.** Օրենսգրքի 390-րդ հոդվածի 3-րդ մասում «ԱՏԳ ԱԱ 0405,» բառերից հետո լրացնել «0406,» թիվը:

**Հոդված 53.** Օրենսգրքի 392-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «ապրանքները» բառից հետո լրացնել «, ինչպես նաև անմաքս առևտրի խանութում վաճառքի համար նախատեսված դրոշմավորման ենթակա ապրանքները» բառերը:

**Հոդված 54.** Օրենսգրքի 393-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետում «20» թիվը փոխարինել «30» թվով:

**Հոդված 55.** Օրենսգրքի 394-րդ հոդվածի 3-րդ մասում «Օրենսգրքի 393-րդ հոդվածի համաձայն» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն մասի երկրորդ պարբերությամբ սահմանված դեպքերի» բառերը և մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.



«ԱՏԳ ԱԱ 0207 և 0210 ծածկագրերին դասվող՝ ընտանի թռչունների պաղեցված կամ սառեցված մսի դրոշմավորումը և էլեկտրոնային եղանակով գրանցումները (այդ թվում՝ գրանցումներում ճշգրտումները) կարող են իրականացվել յուրաքանչյուր արկղի համար»:

**Հոդված 56.** Օրենսգրքի 396-րդ հոդվածի 3-րդ մասից հանել ««տեղական» մակագրությամբ նշումով» բառերը:

**Հոդված 57.** Օրենսգրքի 402-րդ և 403-րդ հոդվածների 1-ին մասից հանել «(բացառությամբ արտոնագրային հարկ վճարելու վերաբերյալ հայտարարության)» բառերը:

**Հոդված 58.** Օրենսգրքի 408-րդ հոդվածի վերնագրում «օգտագործելը» բառից հետո լրացնել «կամ առանց արտոնագրի գործունեություն իրականացնելը» բառերը և նույն հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ մաս.

«7. Հարկային ստուգումների ընթացքում և (կամ) «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հայտնաբերված՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19.7-րդ և 19.8-րդ հոդվածներով սահմանված գործունեության տեսակներն առանց արտոնագրի իրականացնելու դեպքում գանձվում է տուգանք 500 հազար դրամի չափով: Սույն մասի կիրառության իմաստով, «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19.7-րդ և 19.8-րդ հոդվածներով սահմանված գործունեության տեսակների՝ առանց արտոնագրի իրականացում է համարվում նաև պետական տուրքի գումարը նույն հոդվածներով սահմանված չափից պակաս հաշվարկելը»:

**Հոդված 59.** Օրենսգրքի 410-րդ հոդվածի 10-րդ մասում «, արտոնագրային հարկ վճարողների վրա՝ գործունեության այդ մասով» բառերը փոխարինել  վրա  բառով:

**Հոդված 60.** Օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում «Օրենսգրքի 156-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված» բառերից հետո լրացնել «դեպքերում և» բառերը, իսկ 2-րդ մասում «նախորդող օրվա ավարտը» բառերից հետո լրացնել «, իսկ աշխատանքի ընդունելու օրն աշխատանքը փաստացի սկսելու դեպքում՝ մինչև աշխատանքի ընդունելու օրվա ժամը 14:00-ն» բառերը:

**Հոդված 61.** Օրենսգրքի 417-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «երկրորդ և ավելի անգամ» բառերը:

**Հոդված 62.** Օրենսգրքի 419-րդ հոդվածի 5-րդ մասում «1-ին և 2-րդ» բառերը փոխարինել «1-4» թվերով:

**Հոդված 63.** Օրենսգրքի 421-րդ հոդվածի 4-րդ մասում «2-րդ մասով» բառերից հետո լրացնել «1-ին և 2-րդ մասերով» բառերով:

**Հոդված 64.** Օրենսգրքի լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 424.1-ին հոդվածով.

**«Հոդված 424.1. Անմաքս առևտրի խանութի կազմակերպչին ապրանքների մատակարարման ժամկետը խախտելը**

Օրենսգրքի 89-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով սահմանված ժամկետի խախտման դեպքում կենտրոնացված մատակարարը սահմանված ժամկետում անմաքս առևտրի խանութի կազմակերպչին չմատակարարված ապրանքների գծով վճարում է տուգանք (այդ թվում՝ սույն մասով սահմանված խախտումը կամերալ ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվելու դեպքում)՝ սահմանված ժամկետում անմաքս առևտրի խանութի կազմակերպչին չմատակարարված ապրանքների համար Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկվող ակցիզային հարկի գումարի կրկնակի չափով:»:

**Հոդված 65.** Օրենսգրքի 425-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «հարկային հաշվում առանձնացված ԱԱՀ-ի գումարի և» բառերը և նույն մասում «համապատասխանող ԱԱՀ-ի գումարի» բառերից հետո լրացնել «և հարկային հաշվում առանձնացված ԱԱՀ-ի գումարի» բառերը:

**Հոդված 66.** Օրենսգրքի 427-րդ հոդվածի 1-ին մասում «համապատասխան ստուգման ակտի կամ ուսումնասիրության արձանագրության կամ այլ վարչական ակտի ամսաթվին հաջորդող տասը օրվա ընթացքում» բառերը փոխարինել «Օրենսգրքի 398-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում» բառերով:

**Հոդված 67.** Օրենսգրքի 444-րդ հոդվածի 9-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Օրենսգրքի 11-րդ (բացառությամբ Օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասի) և 12-րդ բաժիններն ուժի մեջ են մտնում 2021 թվականի հունվարի 1-ից: Օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-

րդ մասով սահմանված՝ անշարժ գույքի հարկի հաշվարկման նպատակով անշարժ գույքի կադաստր վարող մարմնի կողմից՝ ըստ անշարժ գույքի սեփականատերերի՝ Օրենսգրքի 227-րդ հոդվածով սահմանված անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի (ըստ հողամասերի և (կամ) դրանց համապատասխան բարելավումների) ու դրանց համապատասխան կադաստրային արժեքների ու հաշվարկային զուտ եկամուտների վերաբերյալ տեղեկությունները հարկ վճարողներին հաշվառող մարմիններին ներկայացնելուն վերաբերող դրույթն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:»:

**Հոդված 68.** Ուժը կորցրած ճանաչել Օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ և 10-րդ կետերը:

**Հոդված 69.** Օրենսգրքի 450-րդ հոդվածի 1-ին մասում «ԱԱՀ-ի և ակցիզային հարկի՝ մեկից ավելի միասնական ճշտված հաշվարկ» բառերը փոխարինել «ակցիզային հարկի՝ մեկից ավելի ճշտված հաշվարկ» բառերով:

**Հոդված 70.** Ուժը կորցրած ճանաչել 2018 թվականի հունիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և 2017 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-266-Ն օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-338-Ն օրենքի 85-րդ հոդվածի 4-րդ և 7-րդ կետերը, ինչպես նաև 10-րդ կետի «բ.» ենթակետը:

**Հոդված 71.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ սույն հոդվածով սահմանված դեպքերի: 2020 թվականի ընթացքում Օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասի և 267-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառության իմաստով՝ նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը ներառում է նաև արտոնագրային հարկի և (կամ) ընտանեկան ձեռնարկատիրության հարկման հատուկ համակարգերի շրջանակներում իրականացվող գործունեության տեսակներին վերագրվող իրացման շրջանառությունը, ինչպես նաև «Ինքնագաղված անձանց հարկային արտոնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված գործունեության տեսակներին վերագրվող իրացման շրջանառությունը:

Սույն օրենքի Հոդված 1-ին հոդվածը, Հոդված 6-րդ հոդվածի 2)-րդ կետը, Հոդված 9-րդ և Հոդված 10-րդ հոդվածները, Հոդված 11-րդ հոդվածի 3)-րդ կետը, Հոդված 13-րդ հոդվածի 1)-ին, 2)-րդ և 3)-րդ կետերը, Հոդված 15-րդ և Հոդված 17-րդ հոդվածները, Հոդված 18-րդ

հողվածի 1)-ին կետը, Հողված 24-րդ, Հողված 27-րդ, Հողված 29-րդ և Հողված 30-րդ հողվածները, Հողված 34-րդ հողվածի 1)-ին, 2)-րդ և 5)-րդ կետերը, Հողված 38-րդ, Հողված 48-րդ, Հողված 49-րդ, Հողված 50-րդ, Հողված 51-րդ, Հողված 52-րդ, Հողված 53-րդ, Հողված 54-րդ, Հողված 55-րդ, Հողված 56-րդ, Հողված 60-րդ, Հողված 63-րդ, Հողված 64-րդ, Հողված 65-րդ, Հողված 66-րդ, Հողված 67-րդ, Հողված 69-րդ և Հողված 70-րդ հողվածներն ուժի մեջ են մտնում սույն օրենքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Սույն օրենքի Հողված 2-րդ հողվածի 2)-րդ կետը, Հողված 34-րդ հողվածի 4)-րդ կետը և Հողված 36-րդ հողվածն ուժի մեջ են մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

Սույն օրենքի Հողված 2-րդ հողվածի 3)-րդ կետը և Հողված 39-րդ հողվածն ուժի մեջ են մտնում սույն օրենքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և կիրառվում են նաև 2019 թվականի հաշվետու տարվա համար վճարման ենթակա ճանապարհային հարկի գծով հարկային պարտավորությունների նկատմամբ:

Սույն օրենքի Հողված 2-րդ հողվածի 4)-րդ կետը և Հողված 16-րդ հողվածն ուժի մեջ են մտնում սույն օրենքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: Մինչև սույն օրենքի պաշտոնական հրապարակման օրը ներառյալ ընթացիկ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության 58.35 միլիոն դրամի շեմը գերազանցած հարկ վճարողները 2019 թվականի ընթացքում շարունակում են համարվել ԱԱՀ վճարողներ:

Սույն օրենքի Հողված 6-րդ հողվածի 1)-ին կետն ուժի մեջ է մտնում սույն օրենքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է այդ օրը և դրանից հետո ԵՏՄ անդամ պետությունից ապրանքի ներմուծման կամ ԵՏՄ անդամ պետություն ապրանքի արտահանման գործառնությունների վրա: 2018 թվականի հունվարի 1-ից հետո ԵՏՄ անդամ պետությունից ապրանքի ներմուծման կամ ԵՏՄ անդամ պետություն ապրանքի արտահանման գործառնությունների դեպքում ապրանքի հարկման բազան և սկզբնական արժեքը սույն օրենքի Հողված 6-րդ հողվածի 1)-ին կետով սահմանված կարգով հաշվարկված լինելու հանգամանքը Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի կիրառության առումով հարկային իրավախախտում չի համարվում: 2018 թվականի հունվարի 1-ից հետո մինչև սույն օրենքի պաշտոնական հրապարակման օրը ԵՏՄ անդամ պետությունից ապրանքի ներմուծման կամ ԵՏՄ անդամ պետություն ապրանքի արտահանման գործառնությունների մասով՝ համապատասխանաբար ներմուծման կամ ապրանքի արտահանման հարկային հայտարարագիր ներկայացված չլինելու փաստը հարկային հսկողության շրջանակներում հայտնաբերվելու դեպքում այդ ապրանքի մասով հարկման բազան և սկզբնական արժեքը որոշվում է սույն օրենքի Հողված 6-րդ հողվածի 1)-ին կետով սահմանված կարգով:

Սույն օրենքի Հողված 13-րդ հողվածի 4)-րդ կետն ուժի մեջ է մտնում համապատասխան

ծախսերի փաստաթղթավորման կարգը սահմանող՝ Կառավարության որոշումն ուժի մեջ մտնելու պահից: Սույն պարբերությամբ սահմանված՝ ծախսերի փաստաթղթավորման կարգը սահմանող՝ Կառավարության որոշումը կընդունվի սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում:

Սույն օրենքի Հոդված 21-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հուլիսի 1-ից և վերաբերում է 2019 թվականի հուլիսի 1-ից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկներով առաջացող փոխհատուցվող գումարներին:

Սույն օրենքի Հոդված 31-րդ հոդվածի 1)-ին կետը կիրառվում է 2020 թվականի և դրան հաջորդող հաշվետու ժամանակաշրջանների համար շահութահարկի հաշվարկման նպատակով:

Սույն օրենքի Հոդված 31-րդ հոդվածի 2)-րդ կետը և Հոդված 35-րդ հոդվածի 3)-րդ կետը ուժի մեջ են մտնում 2020 թվականի հունվարի 1-ից և կիրառվում են 2020 թվականի հունվարի 1-ից հետո ընկած ժամանակահատվածներին վերագրվող (այդ ժամանակահատվածների գործունեության արդյունքում ստացվող) շահույթներից՝ որպես շահույթի բաշխում, մասնակցի ստացած շահաբաժինների վրա:

Սույն օրենքի Հոդված 33-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և կիրառվում է նաև 2018 թվականի հուլիսի 1-ից հետո կատարված՝ ավտոմեքենաների օտարման գործարքների նկատմամբ: 2018 թվականի հուլիսի 1-ից հետո մինչև սույն օրենքի Հոդված 33-րդ հոդվածի ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով նախատեսված՝ ավտոմեքենայից տարբերող գույքի օտարումից ստացվող եկամուտների մասով եկամտային հարկով հարկման օբյեկտների հաշվառումն իրականացվում է հաշվառման դրամարկղային մեթոդով:

Սույն օրենքի Հոդված 34-րդ հոդվածի 3)-րդ կետը և Հոդված 35-րդ հոդվածի 4)-րդ և 5)-րդ կետերն ուժի մեջ են մտնում սույն օրենքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում են նաև մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող՝ 2018 թվականի հուլիսի 1-ից հետո կատարված՝ ավտոմեքենաների օտարման գործարքների նկատմամբ:

Սույն օրենքի Հոդված 34-րդ հոդվածի 6)-րդ կետը կիրառվում է 2020 թվականի հունվարի 1-ից հետո իրականացված օտարման գործարքների մասով ստացվող եկամուտների նկատմամբ:

Սույն օրենքի Հոդված 43-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

Վիճակախաղերի կազմակերպման գործունեությունից ստացվող եկամուտների հաշվառման ու դրա նկատմամբ հսկողության իրականացման կարգը սահմանող` Կառավարության որոշումը կընդունվի մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը:

Սույն օրենքի Հոդված 44-րդ հոդվածի 3)1)-րդ և 3)-րդ կետերն ուժի մեջ են մտնում սույն օրենքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և կիրառում են 2019 թվականի հունվարի 1-ից հետո ընկած ժամանակահատվածում ներառվող հաշվետու ժամանակաշրջանների համար հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից ստացվող եկամուտների մասով շրջանառության հարկի հաշվարկման նպատակով:

Սույն օրենքի Հոդված 46-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում սույն օրենքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: Մինչև սույն օրենքի պաշտոնական հրապարակման օրը ներառյալ ընթացիկ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության 18 միլիոն դրամի շեմը գերազանցած հարկ վճարողները 2019 թվականի ընթացքում չեն կարող վերականգնել ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտի կարգավիճակը:

Սույն օրենքի Հոդված 68-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում սույն օրենքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, կիրառվում է 2019 թվականի հունվարի 1-ից ծագած (ծագող) հարաբերությունների նկատմամբ և գործում է մինչև 2021 թվականի հունվարի 1-ը:

[ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ](#)

Deleted: ՆԱԽԱԳԻԾՊ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 21-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՕ-266-Ն ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՕ-338-Ն ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

[Հոդված 72.](#) Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ` Օրենսգիրք) 4-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել հետևյալ բովանդակու-

թյամբ 67-րդ և 68-րդ կետեր.

«67) **դեբիտորական պարտք**՝ հարկ վճարողին այլ անձանց (դեբիտորների) կողմից վճարման (այլ ձևով հատուցման) ենթակա պարտքի գումար, բացառությամբ պետական կամ համայնքների բյուջեների նկատմամբ հարկային պարտավորությունների, տուրքերի և պարտադիր այլ վճարների գծով հարկ վճարողին վճարման (վերադարձման) ենթակա պարտքի գումարների.

68) **կրեդիտորական պարտք**՝ հարկ վճարողի կողմից այլ անձանց (կրեդիտորներին) վճարման (այլ ձևով հատուցման) ենթակա պարտքի (այդ թվում՝ աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների, շահաբաժինների գծով) գումար, բացառությամբ պետական կամ համայնքների բյուջեների նկատմամբ հարկային պարտավորությունների, տուրքերի և պարտադիր այլ վճարների գծով հարկ վճարողի կողմից վճարման ենթակա պարտքի գումարների:»:

**Հոդված 73.** Ուժը կորցրած ճանաչելի Օրենսգրքի՝

5) 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ը.» ենթակետը, 86-րդ հոդվածը, 57-րդ գլուխը, 406-րդ հոդվածի 6-րդ մասը, 407-րդ հոդվածի 7-րդ մասի 3-րդ ենթակետը, 420-րդ և 421-րդ հոդվածները.

6) 108-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետը և 112-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետը.

7) 184-րդ հոդված 3-րդ մասը, 186-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 187-րդ հոդվածի 3-րդ մասը, 189-րդ հոդվածը, 191-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը և 194-րդ հոդվածը.

8) 455-րդ հոդվածի 1-ին մասը:

**Հոդված 74.** Օրենսգրքի 8-րդ հոդվածի՝

4) 2-րդ մասից հանել «, իսկ արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող **գործունեության** տեսակների մասով՝ արտոնագրային հարկով» բառերը.

5) 3-րդ մասի՝

Deleted:

Deleted: գործունեության

ա.1-ին կետից հանել «, բացառությամբ արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակների» բառերը,

Deleted: համարվող

բ.2-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

գ.3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) միկրոձեռնարկատիրության համակարգի շրջանակներում կազմակերպությունները և ֆիզիկական անձինք Օրենսգրքի 56-րդ գլխով սահմանված դեպքերում ազատվում են, մասնավորապես, ԱԱՀ-ով և (կամ) շահութահարկով, ինչպես նաև շրջանառության հարկով հարկումից»:

Deleted: մասնավորապես

Deleted: հարկումից

6)4-րդ մասում «(որոնց շրջանառության հարկը կամ արտոնագրային հարկը չեն փոխարինում, կամ որոնցից ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտները չեն ազատվում)» բառերը փոխարինել «(որոնց շրջանառության հարկը չի փոխարինում, կամ որոնցից միկրոձեռնարկատիրության սուբյեկտները չեն ազատվում)» բառերով:

Հոդված 75.Օրենսգրքի 13-րդ հոդվածի 3-րդ մասից հանել «, բացառությամբ Օրենսգրքի 281-րդ հոդվածով սահմանված արտոնագրային հարկի հաշվետու ժամանակաշրջանի» բառերը:

Deleted: Օրենսգրքի

Deleted: »:

Հոդված 76.Օրենսգրքի 15-րդ հոդվածի՝

7)2-րդ և 3-րդ մասերի 1-ին և 2-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել.

8)3-րդ և 5-րդ մասերում «1-8» թվերը փոխարինել «3-8» թվերով:

Հոդված 77.Օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին մասի՝

3) 1-ին կետի «բ.» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«բ ԵՏՄ անդամ պետությունից ապրանքի ներմուծման կամ ԵՏՄ անդամ պետություն

Deleted: » բառերից հետո լրացնել «(բացառությամբ ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորման ենթակա ապրանքների)» բառերը և նույն ենթակետում լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ.

Deleted: ենթակետում «

ապրանքի արտահանման գործառնությունների դեպքում՝ համապատասխանաբար ապրանքը Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու) կամ ապրանքը Հայաստանի Հանրապետությունից արտահանելու (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու) ամսաթվի դրությամբ՝ ելնելով այդ օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝



արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից: Այն դեպքում, երբ ապրանքը Հայաստանի Հանրապետության սահմանը հատում է օդային տրանսպորտով կամ փոստային օպերատորի կողմից մատուցվող փոստային ծառայության միջոցով, ԵՏՄ անդամ պետությունից ապրանքի ներմուծման կամ ԵՏՄ անդամ պետություն ապրանքի արտահանման գործառնությունների դեպքում ապրանքի հարկման բազան և սկզբնական արժեքը որոշվում են տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերի՝ կոնոսամենտում, բեռնագրում կամ այլ փաստաթղթերում նշված ամսաթվի դրությամբ՝ ելնելով այդ օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից ».

4)2-րդ կետում «կամ Հայաստանի Հանրապետությունում հաշվառված մշտական խաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի» բառերը հանել, իսկ «դուրս գրման ամսաթվի դրությամբ» բառերից հետո լրացնել «(անկախ հետազայում այդ գործարքների ճշգրտման արդյունքում Օրենսգրքով սահմանված կարգով ճշգրտող հաշվարկային փաստաթուղթ դուրս գրելու հանգամանքից կամ անկախ հետազայում այդ գործարքի մասով դուրս գրված հաշվարկային փաստաթուղթը չեղարկելու հանգամանքից)» բառերը:

**Հոդված 78.** Օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասից հանել «, բացառությամբ Օրենսգրքի 57-րդ գլխով սահմանված արտոնագրային հարկի, որի վճարումը կատարվում է մինչև հաշվետու ժամանակաշրջանը սկսելը» բառերը:

**Հոդված 79.** Օրենսգրքի 32-րդ հոդվածի 1-ին մասից հանել «, արտոնագրային հարկի» բառերը:

**Հոդված 80.** Օրենսգրքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի «բ» ենթակետում «(այդ թվում՝ համակարգչային ծրագրերի վերծանման նպատակով՝ համակարգչային տեխնիկա)» բառերը փոխարինել «(նյութական կրիչով տվյալ հարկային ստուգմանն առնչվող տեղեկատվություն պարունակող փաստաթղթերի կրկնօրինակ)» բառերով:

**Հոդված 81.** Օրենսգրքի 39-րդ հոդվածի՝

**Deleted:** <#>«ԵՏՄ անդամ պետությունից ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորման ենթակա ապրանքների ներմուծման դեպքում նշյալ ապրանքների հարկման բազաները և սկզբնական արժեքները որոշվում են նշյալ ապրանքները Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու) ամսաթվի դրությամբ (անկախ հետազայում այդ գործառնությունների մասով ապրանքի ներմուծման ճշտված հարկային հայտարարագիր ներկայացնելու հանգամանքից)՝ ելնելով այդ օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից.»»

**Deleted:** հաստատություն

**Deleted:**

9) 1-ին մասի 6-րդ կետում «1-4-րդ կետերով» բառերը փոխարինել «1-4-րդ կետերով և 2-րդ մասի 1-ին կետով» բառերով.

10) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման վայրը համարվում է Հայաստանի Հանրապետությունից դուրս եթե՝

1) կազմակերպությունը, որի գտնվելու վայրը, Օրենսգրքի 4-րդ գլխի համաձայն, չի համարվում Հայաստանի Հանրապետությունը կամ ֆիզիկական անձը, որի բնակության վայրը, Օրենսգրքի 4-րդ գլխի համաձայն, չի համարվում Հայաստանի Հանրապետությունը ընդունում կամ ստանում է սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում նշված աշխատանքները կամ ծառայությունները (բացառությամբ այն դեպքերի, երբ աշխատանքներն ուղղակիորեն ընդունում է կամ ծառայություններն ուղղակիորեն ստանում է ոչ ռեզիդենտ կազմակերպությունը կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձը, սակայն դրանց օգտագործումը (սպառումը) փաստացի կատարվում է դրանց մշտական հաստատության կողմից).

2) աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման վայրը, սույն հոդվածի 1-ին մասի համաձայն, չի համարվում Հայաստանի Հանրապետությունը:»:

**Հոդված 82.** Օրենսգրքի 53-րդ հոդվածի՝

1) 4-րդ մասը ուժը կորցրած ճանաչել.

12) 9-րդ մասի 4-րդ կետում «ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարության և ընտանեկան ձեռնարկատիրությունում ներգրավված անձանց՝ ընտանիքի անդամ լինելը հիմնավորող համապատասխան փաստաթղթերի ներկայացումը» բառերը փոխարինել «միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարության ներկայացումը» բառերով.

Deleted: վերաբերյալ

Deleted: ներկայացումը

13) 10-րդ մասի 3-րդ կետում «երեք տարի» բառերից հետո լրացնել «, բացառությամբ Օրենսգրքի 44-րդ հոդվածի 5-րդ մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքի» բառերը:

**Հոդված 83.** Օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասից հանել «, բացառությամբ Օրենսգրքի 278-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքերի» բառերը:

**Հոդված 84.** Օրենսգրքի 55-րդ հոդվածի՝

14) 10-րդ մասում «ոչ ռեզիդենտ կազմակերպության» բառերը փոխարինել «ոչ ռեզիդենտ կազմակերպությունից» բառերով, իսկ «ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի կողմից» բառերը՝ «ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձից» բառերով.

15) 11-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«11. Էլեկտրոնային առևտրի շրջանակներում կատարվող՝ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված գործարքները կարող են փաստաթղթավորվել վճարահաշվարկային ծառայություններ մատուցող կազմակերպությունների կողմից տրամադրվող փաստաթղթերով կամ այդ կազմակերպությունների կողմից կիրառվող՝ վճարային գործիքներ սպասարկող սարքավորումների միջոցով տպագրվող փաստաթղթերով:».

Deleted: տրամադրվող

Deleted: սպասարկող

16) 12-րդ մասում «վճարահաշվարկային համակարգի» բառերից հետո լրացնել «կամ վարկային» բառերը.

Deleted: վարկային

17) 13-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Կառավարությունը կարող է սահմանել սույն մասով սահմանված ծախսերի փաստաթղթավորման այլ կարգ:»:

Deleted: փաստաթղթավորման

**Հոդված 85.** Օրենսգրքի 11-րդ, 14-րդ, 55-րդ, 75-րդ և 77-րդ գլուխներում «ընտանեկան ծեռնարկատիրության սուբյեկտ» բառերը՝ համապատասխան հոլովածներով, փոխարինել «միկրոծեռնարկատիրության սուբյեկտ» բառերով՝ համապատասխան հոլովածներով:

Deleted: միկրոծեռնարկատիրության

**Հոդված 86.** Օրենսգրքի 59-րդ հոդվածի 5-րդ մասի երկրորդ պարբերությունում «Օրենսգրքի 60-րդ հոդվածով» բառերը փոխարինել «Օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով» բառերով:

**Հոդված 87.** Օրենսգրքի 59-րդ, 254-րդ և 255-րդ հոդվածներում «58,35 միլիոն» բառերը փոխարինել «115 միլիոն» բառերով:

**Հոդված 88.** Օրենսգրքի 62-րդ հոդվածում՝

18) 11-րդ մասի երկրորդ պարբերությունում «ենթակա չէ ԱԱՀ-ով հարկման» բառերից հետո լրացնել «կամ ենթակա է ԱԱՀ-ի 0 տոկոս դրույքաչափով հարկման» բառերը.

19) 19-րդ մասի 3-րդ կետում «դրամական արտահայտությամբ» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև վարկերի (փոխառությունների) տրամադրման պահին միանվագ գանձվող՝ վարկի (փոխառության) տրամադրման վճարը, վարկի սպասարկման (այդ թվում՝ մոնիտորինգի)»

Deleted: մոնիտորինգի

համար որոշակի պարբերականությամբ գանձվող վճարները, վարկային հայտի [ուսումնասիրության](#) համար գանձվող վճարը, վարկային հաշիվների բացման, վարման և սպասարկման համար գանձվող վճարները» բառերը.

Deleted: ուսումնասիրության

[20](#))լրացնել հետևյալ բովանդակությամբ 20-րդ մաս.

«20. Օրենսգրքի 88-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով նախատեսված՝ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների օտարման դեպքում ԱԱՀ-ով հարկման բազան որոշվում է Օրենսգրքի 61-րդ հոդվածով և սույն հոդվածով սահմանված կարգով, բայց ոչ պակաս, քան դրանց համար Օրենսգրքի 88-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասով սահմանված [օտարման](#) նվազագույն գների (ներառյալ ակցիզային հարկը) չափով՝ առանց ԱԱՀ-ի»:

Deleted: իրացման

[Հոդված 89.](#) Օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասում՝

[21](#))23-րդ կետում «ծառայությունների մատուցումը» բառերից հետո լրացնել «, ազատ [տնտեսական](#) գոտու կազմակերպչի և ազատ տնտեսական գոտու շահագործողի համար [աշխատանքների](#) կատարումը» բառերը.

Deleted: տնտեսական

Deleted: աշխատանքների

[22](#))30-րդ կետում «(այդ թվում՝ ինտերնետ շահումով խաղերի)» բառերից հետո լրացնել «, տոտալիզատորի և ինտերնետ տոտալիզատորի» բառերը.

[23](#))լրացնել հետևյալ բովանդակությամբ [54](#)-րդ կետ.

Deleted: 52

«[54](#)) «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19.7-րդ [և 19.8-րդ հոդվածներով սահմանված գործունեության տեսակների շրջանակներում ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը և \(կամ\)](#) ծառայությունների մատուցումը»:

Deleted: 52

Deleted: հոդվածի համաձայն հարկային մարմնից միջմարզային, ներմարզային և ներքաղաքային երթուղու շահագործման

Deleted: թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրումների կազմակերպման արտոնագիր ստացած անձանց կողմից ուղևորափոխադրումների

[Հոդված 90.](#) Օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերության 5-րդ կետից հանել «կամ արտոնագրային հարկ վճարող՝ արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակների մասով» բառերը:

[Հոդված 91.](#) Օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «գ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«գ. ԵՏՍ միասնական մաքսային օրենսդրությամբ կամ Օրենսգրքով սահմանված կարգով ապրանքների ներմուծման ճշտված հարկային հայտարարագիր ներկայացնելու դեպքում՝ ներմուծման ճշտված հարկային հայտարարագրի ներկայացման և ԱԱՀ-ի լրացուցիչ գումարների վճարման օրերն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի, իսկ այդ օրերը տարբեր հաշվետու ժամանակաշրջաններում ներառված լինելու դեպքում՝ դրանցից վերջինը ընդգրկող հաշ-

վետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով՝ հաշվանցման (պակասեցման) ենթակա ԱԱՀ-ի լրացուցիչ գումարի մասով, եթե սույն ենթակետով այլ բան սահմանված չէ: ԵՏՄ միասնական մաքսային օրենսդրությամբ կամ Օրենսգրքով սահմանված կարգով ապրանքների ներմուծման ճշտված հարկային հայտարարագիրը մինչև հաշվետու ժամանակաշրջանի համար ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի ներկայացման համար Օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վերջնաժամկետի օրը ներառյալ ներկայացնելու և մինչև այդ օրը ԱԱՀ-ի լրացուցիչ գումարները վճարված լինելու դեպքում ներմուծման ճշտված հարկային հայտարարագրով արտացոլված ԱԱՀ-ի լրացուցիչ գումարները հաշվանցվում են տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով.»:»:

**Հոդված 92.** Օրենսգրքի 74-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերությունում, 348-րդ հոդվածի 1-ին և 8-րդ մասերում և 449-րդ հոդվածի 1-ին մասում «կիսամյակին» բառը փոխարինել «եռամյակին» բառով:

**Հոդված 93.** Օրենսգրքի 85-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Հոդված 85. Ակցիզային հարկով հարկման բազան**

1. Օրենսգրքի 84-րդ հոդվածով սահմանված՝ ակցիզային հարկով հարկման օբյեկտ համարվող գործարքների և (կամ) գործառնությունների դեպքում ակցիզային հարկով հարկման բազա է համարվում ապրանքի քանակը (ծավալը)՝ արտահայտված Օրենսգրքի 88-րդ հոդվածով սահմանված՝ չափման բնաիրային միավորներով.»:»:

**Հոդված 94.** Օրենսգրքի 88-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Հոդված 88. Ակցիզային հարկի դրույքաչափերը**

8. Օրենսգրքի 84-րդ հոդվածով սահմանված՝ ակցիզային հարկով հարկման օբյեկտ համարվող գործարքների ու գործառնությունների (բացառությամբ սույն մասի աղյուսակի 1-ին, 2-րդ, 11-րդ և 21-րդ տողերով նախատեսված ապրանքային դիրքերին դասվող ապրանքների մասով իրականացվող գործարքների և գործառնությունների) հարկման բազայի նկատմամբ ակցիզային հարկը հաշվարկվում է սույն մասով սահմանված դրույքաչափերի և սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ ակցիզային հարկի հաշվարկման գործակցի արտադրյալով: ԱՏԳ ԱԱ 2207, 2208 (բացառությամբ 2208 90 330 0, 2208 90 380 0, 2208 90 480 0, 2208 20, 2208 30, 2208 40), 2402 (բացառությամբ 2402 10 00011, 2402 90 00011, 2402 10 00012

Deleted: 22

2402 90 00012) և 2403 99 90 090 ապրանքային դիրքերին դասվող ապրանքների մասով իրականացվող գործարքների և գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ակցիզային հարկը հաշվարկվում է սույն մասով սահմանված դրույթաչափերով:

Ապրանքի ծածկագիրը՝ ըստ ԱՏԳԱԱ-ի	Ապրանքախմբի անվանումը	Հարկման բազայի չափման միավորը	Ակցիզային հարկի դրույթաչափերը (դրամ)			
			2020 թվականի հունվարի 1-ից	2021 թվականի հունվարի 1-ից	2022 թվականի հունվարի 1-ից	2023 թվականի հունվարի 1-ից
2207	էթիլային սպիրտ	1 լիտր (100 տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով)	2600	3380	4400	5700
2208 (բացառությամբ 2208 90 330 0 2208 90 380 0 2208 90 480 0 2208 20 2208 30 2208 40)	սպիրտային խմիչքներ	1 լիտր	1560	2030	2640	3430
2208 90 330 0 2208 90 380 0 2208 90 480 0	պտուղներից և (կամ) հատապտուղներից պատրաստված օղի	1 լիտր	800			
2208 20	կոնյակ, բրենդի և այլ սպիրտային թրմեր	1 լիտր (100-տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով)	ա. 1-ից մինչև 3 տարի, ներառյալ՝ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 3000 բ. 4-ից մինչև 5 տարի, ներառյալ՝ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 3500 գ. 6-ից մինչև 10 տարի, ներառյալ՝ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 6000 դ. 11-ից մինչև 15 տարի, ներառյալ՝ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 8500 ե. 16-ից մինչև 19 տարի, ներառյալ՝ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 14000 զ. 20 և ավելի տարի հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 22000			
2208 30 2208 40	վիսկի, ռոմ և այլ սպիրտային թրմեր	1 լիտր	7000			
2203	գարեջուր	1 լիտր	130			
2204	խաղողի գինի	1 լիտր	150			
2205	վերմուտ և խաղողի այլ գինիներ	1 լիտր	1000			
2206 (բացառությամբ 2206 00 390 2206 00 590 2206 00 890)	խմորման ենթարկված այլ ըմպելիքներ (խնձորի սիդր, պերրու (տանձի սիդր), մեղրարմպելիք), բացառությամբ պտղային, հատապտղային, մրգային գինիների և գինեյուրի	1 լիտր	270			
2206 00 390 2206 00 590 2206 00 890	պտղային, հատապտղային, մրգային և այլ գինիներ	1 լիտր	150			
2402	ծխախոտի	1000 հատ	9625	11070	12730	14640

(բացառությամբ 2402 10 00011 2402 90 00011 2402 10 00012 2402 90 00012)	արտադրանք					
2402 10 00011 2402 90 00011	սիգար	1000 հատ	605000			
2402 10 00012 2402 90 00012	սիգարեղա	1000 հատ	16500			
2403 (բացառությամբ 2403 99 90 090)	ծխախոտի արդյունաբերական փոխարինիչներ	1 կգ	1500			
2710 19 710 2710 19 980 3403 19 100 0, 3403 19 900 0, 3403 99 000 0	քսայուղ	1 կգ	500			
2710 12	բենզին	1 տոննա	40000			
2710 (բացառությամբ 2710 12 2710 19 710 2710 19 980)	դիզելային վառելիք	1 տոննա	13000			
2709	հում նավթ, նավթամթերքներ	1 տոննա	27000			
2711 (բացառությամբ 2711 11 2711 21)	նավթային գազեր և գազանման այլ ածխաջրածիններ	1 տոննա	1000			
2711 21	սեղմված բնական գազ	1 տոննա	34000			
2403 99 90 090	ծխախոտի արտադրանք	1000 հատ	2000	2300	2700	3100

Deleted: –

Deleted: –

9. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերում հիմք են ընդունվում ակցիզային հարկի հաշվարկման հետևյալ գործակիցները.

	2020 թվականի հունվարի 1-ից	2021 թվականի հունվարի 1-ից	2022 թվականի հունվարի 1-ից	2023 թվականի հունվարի 1-ից
Ակցիզային հարկի հաշվարկման գործակից	1.0	1.03	1.06	1.09

Deleted: 04

Deleted: 08

Deleted: 12

10. ԱՏԳ ԱԱ 2208 ծածկագրին դասվող՝ 40 տոկոսից բարձր սպիրտայնությամբ ապրանքների համար սպիրտայնության 40 տոկոսը գերազանցող յուրաքանչյուր ամբողջական տոկոսային կետի համար ակցիզային հարկի դրույքաչափն ավելացվում է 7.5 դրամով (բացառությամբ կոնյակի սպիրտի), իսկ մինչև ինը տոկոս (ներառյալ) սպիրտայնությամբ ապրանքների համար ակցիզային հարկը յուրաքանչյուր լիտրի համար սահմանվում է 100 դրամ:

11. Ակցիզային հարկ վճարողների, ինչպես նաև ակցիզային հարկ վճարող չհամարվող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ԱՏԳ ԱԱ 2207 ծածկագրին դասվող՝ շշայցված ապրանքների և ԱՏԳ ԱԱ 2208 ծածկագրին դասվող ապրանքների (բացառու-

թյամբ 40 տոկոս և բարձր սպիրտայնությամբ չշալցված կոնյակի, չշալցված կոնյակի սպիրտի և ԱՏԳ ԱԱ 2208 20 ծածկագրին դասվող՝ շալցված ապրանքների) [օտարման](#) դեպքում՝ այդ [ապրանքների օտարման](#) գինը (ներառյալ՝ ակցիզային հարկը և ավելացված արժեքի հարկը) չի կարող պակաս լինել մեկ լիտրի համար 6000 դրամից՝ 100-տոկոսանոց սպիրտի [վերահաշվարկով](#):

- Deleted: իրացման
- Deleted: (
- Deleted: թվում՝ անհատույց) այդ ապրանքների իրացման
- Deleted: վերահաշվարկով

12. Ակցիզային հարկ վճարողների կողմից ԱՏԳ ԱԱ 2208 20 ծածկագրին դասվող՝ շալցված ապրանքների [օտարման](#) դեպքում՝ այդ ապրանքների [օտարման](#) գինը (առանց ակցիզային հարկի և ավելացված արժեքի հարկի) 100-տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով չի կարող պակաս լինել մեկ լիտրի համար՝

- Deleted: իրացման
- Deleted: (այդ թվում՝ անհատույց)
- Deleted: իրացման

6) մինչև 3 տարի, ներառյալ՝ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 5000 դրամից.

7) 4-ից մինչև 5 տարի, ներառյալ՝ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 5500 դրամից.

8) 6-ից մինչև 7 տարի, ներառյալ՝ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 6000 դրամից.

9) 8-ից մինչև 10 տարի, ներառյալ՝ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 9000 դրամից.

10) 11 և ավելի տարի հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 14000 դրամից:

13. ԱՏԳԱԱ 220820 ծածկագրին դասվող կոնյակ ներմուծող, արտադրող և (կամ) տարա-յավորող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը պարտավոր են կոնյակի տարայի վրա Կառավարության սահմանած կարգով մակնշել դրա հնացման աստիճանը՝ ըստ տարիների: ԱՏԳԱԱ 220820 ծածկագրին դասվող կոնյակի հնացման աստիճանի վերաբերյալ տարայի վրա մակնշման բացակայության դեպքում ակցիզային հարկը հաշվարկվում է սույն հոդվածի 1-ին մասի աղյուսակի՝ ԱՏԳԱԱ 220820 ծածկագրին վերաբերող տողի «գ» ենթակետով սահմանված դրույքաչափից ոչ պակաս չափով:

14. Բենզինի մեկ տոննայի համար սահմանված ակցիզային հարկի և Օրենսգրքի 4-րդ բաժնով սահմանված կարգով հաշվարկված ԱԱՀ-ի հանրագումարը 135000 դրամի և սույն հոդվածի 2-րդ մասով յուրաքանչյուր տարվա համար սահմանված՝ ակցիզային հարկի հաշվարկման գործակցի արտադրյալից պակաս լինելու դեպքում ակցիզային հարկն ավելացվում է այն չափով, որ բենզինի մեկ տոննայի համար ակցիզային հարկի և ԱԱՀ-ի հանրագումարը հավասարվի 135000 դրամի և սույն հոդվածի 2-րդ մասով յուրաքանչյուր տարվա համար սահմանված՝ ակցիզային հարկի հաշվարկման գործակցի արտադրյալին:»:

**Հոդված 95.** [Օրենսգրքի 89-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ](#)



## խմբագրությամբ

«3) ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների մատակարարումը անմաքս առևտրի խանութի կազմակերպչին, ինչպես նաև կենտրոնացված մատակարարումների կազմակերպման շրջանակներում անմաքս առևտրի խանութում վաճառքի համար նախատեսված ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների մատակարարումը կենտրոնացված մատակարարին: Ընդ որում, կենտրոնացված մատակարար պարտավոր է ձեռք բերելուց հետո՝ 60 օրացուցային օրվա ընթացքում, սույն կետում նշված ապրանքները մատակարարել անմաքս առևտրի խանութի կազմակերպչին: Հարկ վճարողին կենտրոնացված մատակարարի կարգավիճակը տրամադրում է անմաքս առևտրի խանութի կազմակերպիչը: Անմաքս առևտրի խանութի կազմակերպիչ կողմից հարկ վճարողին կենտրոնացված մատակարարի կարգավիճակ տրամադրելու մասին հարկային մարմնին տեղեկացնելու, ինչպես նաև կենտրոնացված մատակարարի մոտ սույն կետում նշված ապրանքների հաշվառման կարգը սահմանում է Կառավարությունը.»:

**Հոդված 96.** Օրենսգրքի 92-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «գ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«գ. ԵՏՄ միասնական մաքսային օրենսդրությամբ կամ Օրենսգրքով սահմանված կարգով հումքի ներմուծման ճշտված հարկային հայտարարագիր ներկայացնելու դեպքում՝ ներմուծման ճշտված հարկային հայտարարագրի ներկայացման և ակցիզային հարկի լրացուցիչ գումարների վճարման օրերն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի, իսկ այդ օրերը տարբեր հաշվետու ժամանակաշրջաններում ներառված լինելու դեպքում՝ դրանցից վերջինը ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով՝ հաշվանցման (պակասեցման) ենթակա ակցիզային հարկի լրացուցիչ գումարի մասով, եթե սույն ենթակետով այլ բան սահմանված չէ: ԵՏՄ միասնական մաքսային օրենսդրությամբ կամ Օրենսգրքով սահմանված կարգով հումքի ներմուծման ճշտված հարկային հայտարարագիրը մինչև հաշվետու ժամանակաշրջանի համար ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի ներկայացման համար Օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վերջնաժամկետի օրը ներառյալ ներկայացնելու և մինչև այդ օրը ակցիզային հարկի լրացուցիչ գումարները վճարված լինելու դեպքում ներմուծման ճշտված հարկային հայտարարագրով արտացոլված ակցիզային հարկի լրացուցիչ գումարները հաշ-

[վանցվում են տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով.»:](#)

**Հոդված 97.** Օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 19-րդ կետ.

«19) «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19.7-րդ [1](#) [19.8-րդ հոդվածներով սահմանված գործունեության տեսակներից](#) ստացվող եկամուտները:»:

**Deleted:** հոդվածի համաձայն հարկային մարմնից միջմարդային, ներմարդային և ներքաղաքային երթուղու շահագործման կամ թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրումների կազմակերպման արտոնագիր ստացած անձանց կողմից ուղևորափոխադրումների ծառայություններից

**Հոդված 98.** Օրենսգրքի 109-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետում «առևտրային կազմակերպությունների» բառերից հետո լրացնել «, անհատ ձեռնարկատերերի և նոտարների» բառերը:

**Հոդված 99.** Օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասում մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 14-րդ կետ.

«14) «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19.7-րդ [1](#) [19.8-րդ հոդվածներով սահմանված գործունեության տեսակների գծով կատարվող](#) ծախսերը:»:

**Deleted:** հոդվածի համաձայն հարկային մարմնից միջմարդային, ներմարդային և ներքաղաքային երթուղու շահագործման կամ թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրումների կազմակերպման արտոնագիր ստացած անձանց կողմից ուղևորափոխադրումների ծառայությունների հետ կապված

**Հոդված 100.** Օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ.» պարբերությունում և 2-րդ կետում «տարբերություն» բառից առաջ լրացնել «բացասական» բառը:

**Հոդված 101.** Օրենսգրքի 123-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում լրացնել հետևյալ [բովանդակությամբ](#) նոր պարբերություն.

**Deleted:** բովանդակությամբ

«Սույն կետի կիրառության իմաստով՝ 100 հազար դրամը գերազանցող ընդհանուր գումարով դեբիտորական պարտքը համարվում է անհուսալի դեբիտորական պարտքի գումարը բռնագանձելու պահանջը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ դատական ակտի (վճռի, որոշման կամ կարգադրության, բացառությամբ դեբիտորական պարտքի գումարը ներելու կամ այն որևէ հիմքով չպահանջելու վերաբերյալ կայացված վճռի, որոշման կամ կարգադրության) օրինական ուժի մեջ մտնելու օրվանից:»:

**Հոդված 102.** Օրենսգրքի 125-րդ հոդվածի՝

[24](#))1-ին մասում «20» բառը փոխարինել «18» բառով.

[25](#))4-րդ մասում՝

ա. 2-րդ կետում «3-րդ և 4-րդ կետերով» բառերը փոխարինել «[3](#), 1-ին և 4-րդ կետերով»

**Deleted:** -րդ, 3

բառերով.

բ. ուժը կորցրած ճանաչել 3-րդ կետը.

գ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին կետ.

«3.1) շահաբաժինների մասով՝ հինգ տոկոս.»:»

Deleted: .

Deleted: բ

Deleted: սույն մասի 3-րդ կետում չնշված

**Հոդված 103.** Օրենսգրքի 135-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում «կամ արտոնագրային հարկի գումարներում» բառերը փոխարինել «գումարում» բառով:

**Հոդված 104.** Օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով» բառերը փոխարինել «Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով նախատեսված՝ ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող ավտոմեքենայի օտարումից ստացվող եկամուտների մասով» բառերով:

**Հոդված 105.** Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասում՝

26) 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) բոլոր տեսակի կենսաթոշակները (այդ թվում՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կուտակային բաղադրիչի շրջանակներում ստացվող կուտակային կենսաթոշակները, այլ պետությունների օրենսդրության շրջանակներում ստացվող կենսաթոշակները և այլ պետությունների կենսաթոշակային ապահովության համակարգի շրջանակներում ստացվող համանման վճարները), բացառությամբ սահմանված կարգով կամավոր կենսաթոշակային բաղադրիչին մասնակցության շրջանակներում ստացվող կենսաթոշակների.».»

27) 12-րդ կետում «նորմաների» բառից հետո լրացնել «(չափերի). Հայաստանի Հանրապետության տարածքում և Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործուղման դեպքում Օրենսգրքի 117-րդ հոդվածով սահմանված չափերը չգերազանցող գումարների» բառերը.

28) 16-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«16) սեփականության իրավունքով իրենց պատկանող գույքի (բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի) օտարումից անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանցից ստացվող եկամուտները: Սույն կետի կիրառության իմաստով՝

ա. ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի օտարում է համարվում ավտոմեքենայի օտարումը, եթե ավտոմեքենան օտարվում է ձեռք բերելուց հետո 365 օրվա ընթացքում,

Deleted: անձնական օգտագործման

Deleted: անձնական օգտագործման

բ. նվազեցվող եկամուտներ չեն համարվում Օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ կառուցապատող համարվող ֆիզիկական անձին պատկանող գույքի օտարումից հարկային գործակալ չհանդիսացողներից ստացվող եկամուտները,

գ. գույք ձեռք բերել չի համարվում գույքի՝ ժառանգությամբ կամ նվիրատվությամբ ստացումը,

դ. եթե ավտոմեքենան օտարվել է օտարման օրվա դրությամբ այդ ավտոմեքենայի շուկայական գնից ողջամիտ չհամարվող ցածր գնով, ապա ավտոմեքենայի օտարման գին է համարվում օտարման օրվա դրությամբ դրա շուկայական գնի 80 տոկոսը.»

29) 22-րդ կետի «տոտալիզատորի մասնակիցների դրամական և իրային շահումները» բառերից հետո լրացնել «կամ խաղատներում, շահումով խաղերում և (կամ) ինտերնետ ~~շահումով~~ խաղերում ստացված շահումները» բառերը.

Deleted: շահումով

30) 28-րդ կետում «պետության կամ համայնքների կարիքների համար» բառերից հետո լրացնել «~~Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով~~ սեփականության ~~օտարման~~ մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով» բառերը.

Deleted: Հասարակության և պետության կարիքների համար

Deleted: օտարման

31) լրացնել հետևյալ բովանդակությամբ 38-րդ և 39-րդ կետեր.

«38) հողամասի (անկախ հողամասի նպատակային նշանակությունից) օտարումից ~~ստացվող~~ եկամուտները.

Deleted: ստացվող

39) առևտրի իրականացման վայրերում (ոսկու շուկաներում) վաճառատեղանների կամ վաճառակետերի միջոցով թանկարժեք մետաղների, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի կամ թանկարժեք քարերի առք ու վաճառքի գործունեություն իրականացնող հարկային գործակալին օտարվող ոսկու և թանկարժեք քարերի դիմաց ստացվող եկամուտները:»:

**Հոդված 106.** Օրենսգրքի 150-րդ հոդվածում՝

32) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Եթե սույն հոդվածի 2-15-րդ մասերով այլ բան սահմանված չէ, ապա հարկման բազայի նկատմամբ եկամտային հարկը հաշվարկվում է հետևյալ դրույքաչափերով.

Ժամանակահատված	Եկամտային հարկի դրույքաչափը
2020 թվականի հունվարի 1-ից	23 տոկոս
2021 թվականի հունվարի 1-ից	22 տոկոս
2022 թվականի հունվարի 1-ից	21 տոկոս
2023 թվականի հունվարի 1-ից	20 տոկոս

».

33) 7-րդ մասում «58,35» թիվը փոխարինել «60» թվով.

34) 8-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8. Շահաբաժինների մասով եկամտային հարկը հաշվարկվում է հինգ տոկոս դրույքա-

Deleted: դրույքաչափով:».

չափով:»

35) 9-րդ մասից հանել «10-րդ մասի 2-րդ կետով և» բառերը.

36) 10-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10. Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի «ա» ենթակետով սահմանված դեպքում ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի օտարումից (այդ թվում՝ նաև այն դեպքում, երբ գույքն օտարվում է անհատ ձեռնարկատեր և նուտար չհանդիսացող ֆիզիկական անձանցից տարբերվող և հարկային գործակալ չհանդիսացող անձի) ստացվող ամբողջ եկամուտների մասով եկամտային հարկը հաշվարկվում է 1 տոկոս դրույքաչափով, բայց ոչ պակաս, քան ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի շարժիչի յուրաքանչյուր ձիաուժ հզորության համար 150 դրամից: Շարժիչի հզորությունը կիրառված արտահայտված լինելու դեպքում համապատասխան հզորության նկատմամբ կիրառվում է 1.36 գործակից:».

Deleted: գնորդի

Deleted: կիրառվում

Deleted: :»:

Deleted: <#>||

37) 15-րդ մասում «20» թիվը փոխարինել «10» թվով:

**Հոդված 107.** Օրենսգրքի 153-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետից հանել «, ինչպես նաև խաղատներում, շահումով խաղերում և (կամ) ինտերնետ շահումով խաղերում ստացված շահումներին» բառերը:

**Հոդված 108.** Օրենսգրքի 168-րդ հոդվածում՝

38) 1-ին մասի 2-րդ կետի՝

ա. աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Ավտոտրանսպորտային միջոցի արտադրության տարին								
Շարժիչի հզորություն	1-ին տարի՝ յուրաքանչյուր ձիաուժի մասով	2-րդ տարի՝ յուրաքանչյուր ձիաուժի մասով	3-րդ տարի՝ յուրաքանչյուր ձիաուժի մասով	4-րդ տարի՝ յուրաքանչյուր ձիաուժի մասով	5-րդ տարի՝ յուրաքանչյուր ձիաուժի մասով	6-րդ տարի՝ յուրաքանչյուր ձիաուժի մասով	7-րդ տարի՝ յուրաքանչյուր ձիաուժի մասով	8-րդ և դրան հաջորդող յուրաքանչյուր տարի՝ յուրաքանչյուր ձիաուժի մասով

մինչև 50 ծիաուժ	2.5 դրամ	2.5 դրամ	2.5 դրամ	3 դրամ	3.5 դրամ	4 դրամ	4.5 դրամ	5 դրամ
51-80 ծիաուժ	5 դրամ	5 դրամ	5 դրամ	6 դրամ	7 դրամ	8 դրամ	9 դրամ	10 դրամ
81-100 ծիաուժ	7.5 դրամ	7.5 դրամ	7.5 դրամ	9 դրամ	10.5 դրամ	12 դրամ	13.5 դրամ	15 դրամ
101-150 ծիաուժ	10 դրամ	10 դրամ	10 դրամ	12 դրամ	14 դրամ	16 դրամ	18 դրամ	20 դրամ
151-200 ծիաուժ	12.5 դրամ	12.5 դրամ	12.5 դրամ	15 դրամ	17.5 դրամ	20 դրամ	22.5 դրամ	25 դրամ
201-250 ծիաուժ	15 դրամ	15 դրամ	15 դրամ	18 դրամ	21 դրամ	24 դրամ	27 դրամ	30 դրամ
251-300 ծիաուժ	17.5 դրամ	17.5 դրամ	17.5 դրամ	21 դրամ	24.5 դրամ	28 դրամ	31.5 դրամ	35 դրամ
301 և ավելի ծիաուժ	25 դրամ	25 դրամ	25 դրամ	30 դրամ	35 դրամ	40 դրամ	45 դրամ	50 դրամ

բ. երկրորդ պարբերությունում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Սույն կետի կիրառության իմաստով՝ այլ ինքնագնաց մեքենաների և մեխանիզմների, ինչպես նաև լողամիջոցների համար բնապահպանական հարկի դրույթաչափը սահմանվում է սույն կետի աղյուսակի վերջին սյունով սահմանված համապատասխան (ըստ շարժիչի հզորության) դրույթաչափի կրկնապատիկի չափով:».

39)2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 109. Օրենսգրքի 181-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «բ» ենթակետում «տարեկան բնապահպանական հարկի գումարի կրկնապատիկի» բառերը փոխարինել «երկու հարկային տարիների տարեկան բնապահպանական հարկի գումարների հանրագումարի» բառերով:

Deleted: տարեկան

Հոդված 110. Օրենսգրքի 187-րդ հոդվածի 5-րդ մասում «2-րդ և 3-րդ մասերի» բառերը փոխարինել «2-րդ մասի» բառերով:

Հոդված 111. Օրենսգրքի 254-րդ հոդվածում

Deleted: հոդվածի

40)1-ին մասից հանել «(անկախ բացառապես արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակներ իրականացնելու հանգամանքից)» բառերը.

41)2-րդ մասի 1-ին կետից հանել «արտոնագրային հարկի և (կամ)» բառերը.

42)3-րդ մասի՝

ա. 1-ին և 2-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել,

բ. 3-րդ կետում «շահումով խաղերի» բառերից հետո լրացնել «, տոտալիզատորի և

ինտերնետ տոտալիզատորի» բառերը.

43) 4-րդ մասից հանել «, բացառությամբ գործունեության այն տեսակների, որոնք համար-

վում են արտոնագրային հարկով հարկման օբյեկտ» բառերը\_\_

Deleted: ինտերնետ

Deleted: :

44) 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Սույն գլխով սահմանված պայմանները չբավարարող (բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով սահմանված դեպքերի)՝ հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերում և ժամկետներում (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու դեպքի) կարող են համարվել շրջանառության հարկ վճարող սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետներում հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնելու համար շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հարկային մարմնի հաստատած ձևով հայտարարություն հարկային մարմին ներկայացնելու դեպքում՝ անկախ սույն գլխով սահմանված սահմանափակումներից:».

Deleted: <#>¶

45) լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ և 8-րդ մասեր.

«7. Հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարող այն ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը (բացառությամբ սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված դեպքերի), որոնց տվյալ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը գերազանցել է 115 միլիոն դրամը կամ տվյալ հարկային տարվա ընթացքում տեղի է ունեցել Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 4-7-րդ կետերում նշված փաստերից որևէ մեկը, իրացման շրջանառության՝ սույն մասով սահմանված չափը գերազանցելու կամ Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 4-7-րդ կետերում նշված փաստերից որևէ մեկը տեղի ունենալու օրվանից մինչև այդ օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնելու համար շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հարկային մարմնի հաստատած ձևով հայտարարություն հարկային մարմին ներկայացնելու դեպքում կարող են այդ օրվանից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու դեպքի) շարունակել

համարվել շրջանառության հարկ վճարող՝ անկախ սույն գլխով սահմանված սահմանափակումներից (բազառությամբ սույն հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով սահմանված դեպքերի):

8. Սույն բաժնի կիրառության իմաստով՝ հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեություն է համարվում խոհարարական արտադրանքի օտարումը (այդ թվում՝ առաքմամբ) և (կամ) սպառման կազմակերպումը: Այդ գործունեությունը ներառում է նաև խոհարարական արտադրանքի սպառման կազմակերպման հետ անմիջականորեն կապված ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը, ծառայությունների մատուցումը, մասնավորապես՝ սպասարկումը, մուտքի թույլտվությունը:»:

**Հոդված 112.** Օրենսգրքի 255-րդ հոդվածի 1-ին մասի՝

6) «Շրջանառության հարկ վճարողը դադարում է» բառերից հետո լրացնել «(բազառությամբ Օրենսգրքի 254-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով սահմանված դեպքերի)» բառերը.

7) 5-րդ կետի 2-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետում նշված որոշումը դատական կարգով բողոքարկվելու դեպքում առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները շարունակում են համարվել շրջանառության հարկ վճարողներ, իսկ Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետում նշված որոշումն անվավեր չճանաչելու վերաբերյալ դատարանի վճիռն ուժի մեջ մտնելու դեպքում փոխկապակցված ճանաչված առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները դադարում են համարվել շրջանառության հարկ վճարողներ սույն կետում սահմանված ժամկետից:»:

**Հոդված 113.** Օրենսգրքի 256-րդ հոդվածում «և (կամ) ծառայությունների մատուցումը» բառերից հետո լրացնել «, բազառությամբ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19.7-րդ և 19.8-րդ հոդվածներով սահմանված գործունեության տեսակների շրջանակներում ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը և (կամ) ծառայությունների մատուցումը» բառերը, իսկ «համարվում նաև» բառերից հետո լրացնել «ոչ նյութական ակտիվների օտարման գործարքները, ինչպես նաև» բառերը:

**Հոդված 114.** Օրենսգրքի 257-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«3. Վիճակախաղերի կազմակերպման գործունեությունից ստացվող եկամուտների հաշվառման ու դրա նկատմամբ հսկողության իրականացման կարգը սահմանում է Կառավարությունը:»:



Հոդված 115. Օրենսգրքի 258-րդ հոդվածի՝

Deleted:

46) 1-ին մասում «հաշվի առնելով սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով» բառերը փոխարինել «հաշվի առնելով սույն հոդվածի 2-4-րդ մասերով» բառերով.

47) 1-ին մասի աղյուսակի «Հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողների կողմից Հայաստանի Հանրապետությունում կիրառվող՝ տնտեսական գործունեության դասակարգչի «Հանրային սննդի կազմակերպում» հատվածում չներառվող՝ այլ ակտիվների օտարումից, հնչյաես նաև այլ գործունեությունից ստացվող եկամուտներ» տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնելու համար շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հարկային մարմնի հաստատած ձևով հայտարարություն ներկայացրած շրջանառության հարկ վճարողների կողմից Հայաստանի Հանրապետությունում կիրառվող՝ տնտեսական գործունեության դասակարգչի «Հանրային սննդի կազմակերպում» հատվածում չներառվող՝ այլ ակտիվների օտարումից, հնչյաես նաև այլ գործունեությունից ստացվող եկամուտներ».

48) 1-ին մասի աղյուսակի «Հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից ստացվող եկամուտներ» տողի 2-րդ սյունակի «8» թիվը փոխարինել «6» թվով.

Deleted: եկամուտներ

49) 2-րդ մասում «հաշվարկված մաքսատուրքի ԱԱՀ-ի» բառերից հետո լրացնել «. ակցիզային հարկի» բառերը, «ԱԱՀ-ով հարկման բազայի, հաշվարկված ԱԱՀ-ի» բառերից հետո լրացնել «. ակցիզային հարկի» բառերը.

Deleted: :

50) 3-րդ մասում «հինգ» բառը փոխարինել «երեք» բառով.

Deleted: <#>¶

51) լրացնել հետևյալ խմբագրությամբ 4-րդ մաս

«4. Հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնելու համար շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հարկային մարմնի հաստատած ձևով հայտարարություն ներկայացրած շրջանառության հարկ վճարողները շրջանառության հարկը հաշվարկում են միայն սույն հոդվածի 1-ին մասի 8-րդ և 9-րդ տողերով սահմանված համապատասխան դրույթաչափերով:»:

**Հոդված 116.** Օրենսգրքի 261-րդ հոդվածում լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ.

«Օրենսգրքով 84-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և (կամ) 4-րդ կետերով սահմանված հարկման օբյեկտների մասով ակցիզային հարկ վճարող համարվելու դեպքում շրջանառության հարկ վճարողները մինչև յուրաքանչյուր հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ՝ [Օրենսգրքի](#) 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկ:»:

Deleted: Օրենսգրքի

**Հոդված 117.** Օրենսգրքի 267-րդ հոդվածի 2-րդ մասում, 5-րդ մասի 7-րդ կետում և 268-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «18» բառը փոխարինել «24» բառով:

**Հոդված 118.** Օրենսգրքի 56-րդ գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

#### «Գ Լ ՈՒ Խ 56

#### ՄԻԿՐՈԶԵՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

#### Հոդված 266. Միկրոձեռնարկատիրությունը

2. Միկրոձեռնարկատիրություն է համարվում սույն գլխով սահմանված չափանիշներին բավարարող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունների և ֆիզիկական անձանց կողմից ձեռնարկատիրական եկամուտ ստանալու նպատակով իրականացվող գործունեությունը:

#### Հոդված 267. Միկրոձեռնարկատիրության սուբյեկտները

6. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված պայմանը բավարարող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը (բացառությամբ սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքերի) միկրոձեռնարկատիրության սուբյեկտներ են համարվում հետևյալ դեպքերում և ժամկետներում.

8) տվյալ հարկային տարվա հունվարի 1-ից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 254-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու կամ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքերի), եթե հարկ վճարողը մինչև տվյալ հարկային տարվա փետրվարի 20-ը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն.

9) հարկային տարվա ընթացքում պետական գրանցում ստացած առևտրային կազմա-

կերպությունը կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված ֆիզիկական անձը՝ համապատասխանաբար, որպես կազմակերպություն պետական գրանցման կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման օրվանից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 254-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու կամ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքերի), եթե հարկ վճարողը մինչև համապատասխանաբար՝ որպես կազմակերպություն պետական գրանցման կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն: Սույն կետի կիրառության իմաստով՝ վերակազմակերպման արդյունքում նոր ստեղծվող կազմակերպության կամ կազմակերպությունների (բացառությամբ միացման ձևով վերակազմակերպման դեպքում այն կազմակերպության, որին միանում են այլ կազմակերպություն կամ կազմակերպություններ և առանձնացման ձևով վերակազմակերպման դեպքում այն կազմակերպության, որից առանձնանում են այլ կազմակերպություն կամ կազմակերպություններ) համար պետական գրանցում է համարվում նաև կազմակերպությունների վերակազմակերպման պետական գրանցումը.

10)մինչև հարկային տարվա փետրվարի 20-ը ներառյալ գործունեություն չիրականացրած (գործունեությունը դադարեցրած) առևտրային կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը գործունեությունը վերսկսելու օրվանից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 254-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու կամ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքերի), եթե հարկ վճարողը մինչև գործունեությունը վերսկսելու օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն.

11)մինչև տվյալ հարկային տարին սկսվելը պետական հաշվառումից դուրս եկած անհատ ձեռնարկատերը տվյալ հարկային տարում կրկին որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվելու օրվանից մինչև հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 254-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու կամ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքերի), եթե հարկ վճարողը մինչև կրկին որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվելու օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն.

12) հարկային տարվա ընթացքում պետական հաշվառումից դուրս եկած անհատ ձեռնարկատերը տվյալ հարկային տարում կրկին որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվելու օրվանից մինչև հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 254-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու կամ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքերի), եթե հարկ վճարողը մինչև կրկին որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվելու օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն, բացառությամբ այն դեպքերի, երբ անհատ ձեռնարկատերը տվյալ հարկային տարվա ընթացքում՝ մինչև պետական հաշվառումից դուրս գալը, Օրենսգրքի 254-րդ հոդվածի համաձայն, համարվել է շրջանառության հարկ վճարող, կամ Օրենսգրքի 59-րդ հոդվածի համաձայն, համարվել են ԱԱՀ վճարող:

7. Սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված պայմանները բավարարող անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը միկրոձեռնարկատիրության սուբյեկտ է համարվում, եթե հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն: Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարությունը ներկայացնում է գործունեության իրականացման որևէ ժամանակահատվածի (հարկային տարվա ընթացքում ընտրված ցանկացած հաշվետու ամսվա կամ մեկից ավելի հաշվետու ամիսների կամ հարկային տարվա կամ հարկային տարիների) համար մինչև տվյալ գործունեության տեսակն իրականացնելը կամ տվյալ գործունեության տեսակը շարունակելը: Հարկային մարմինը միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացրած անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձին միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարությունը ներկայացնելու օրվան հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է իր կողմից սահմանված ձևով միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ արտոնագիր:

Deleted: համարվելու

8. Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ կարող է համարվել այն ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը և անհատ ձեռնարկատերը, որի նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը չի գերազանցել 24 միլիոն դրամը, ինչպես նաև անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այն ֆիզիկական անձը, որի նախորդ հարկային տարվա ընթացքում Օրենսգրքի բաղկացուցիչ մասը կազմող հավելված 3-ով սահմանված գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը չի գերազանցել է 24 միլիոն դրամը: Սույն մասի կիրառության առումով՝

Deleted: համակարգի

3) իրացման շրջանառությունը ներառում է նաև շրջանառության հարկով հարկման համակարգի շրջանակներում իրականացվող գործունեության տեսակներին վերագրվող իրացման շրջանառությունը.

4) առևտրային կազմակերպությունների վերակազմակերպման դեպքում հաշվի են առնվում հետևյալ առանձնահատկությունները.

ա. բաժանման ձևով կազմակերպության վերակազմակերպման դեպքում նոր ստեղծված կազմակերպություններից յուրաքանչյուրի համար նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառություն է համարվում բաժանման ձևով վերակազմակերպված կազմակերպության նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը,

բ. առանձնացման ձևով կազմակերպության վերակազմակերպման դեպքում ինչպես այն կազմակերպության համար, որից առանձնացել են այլ կազմակերպություն կամ կազմակերպություններ, այնպես էլ առանձնացված կազմակերպության կամ կազմակերպություններից յուրաքանչյուրի համար նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառություն է համարվում վերակազմակերպված կազմակերպության նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը,

գ. միաձուլման ձևով կազմակերպությունների վերակազմակերպման դեպքում նոր ստեղծված կազմակերպության համար նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառություն է համարվում միաձուլված կազմակերպությունների նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունների ամբողջությունը,

դ. միացման ձևով կազմակերպությունների վերակազմակերպման դեպքում այն կազմակերպության համար, որին միացել են այլ կազմակերպություն կամ կազմակերպություններ, նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառություն է համարվում տվյալ կազմակերպության նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության և միացած կազմակերպության կամ կազմակերպությունների նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունների ամբողջությունը:

9. Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը կարող է համարվել միկրո-ձեռնարկատիրության սուբյեկտ, եթե զբաղվում է բացառապես Օրենսգրքի բաղկացուցիչ մասը կազմող հավելված 3-ով սահմանված գործունեության տեսակներով:

10. Միկրոձեռնարկատիրության սուբյեկտներ չեն կարող համարվել`

11) բանկերը, վարկային կազմակերպությունները, ապահովագրական ընկերությունները,

ներդրումային ընկերությունները, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցները, գրավատները, արտարժույթի առք ու վաճառքի, արտարժույթի դիլերային-բրոկերային առք ու վաճառքի գործունեություն իրականացնողները, ներդրումային ֆոնդերը, ֆոնդերի կառավարիչները, վճարահաշվարկային կազմակերպությունները, նոտարները, խաղատների, շահումով խաղերի կամ վիճակախաղերի կազմակերպման գործունեություն իրականացնողները.

Deleted: կառավարիչները  
Deleted: շահումով  
Deleted: իրականացնողները

12)խորհրդատվական, իրավաբանական, հաշվապահական, աուդիտորական, ինժեներական, գովազդային, դիզայներական, մարկետինգային, թարգմանչական, փորձագիտական, բժշկական, ատամնատեխնիկական ծառայություններ, տեղեկատվության մշակման (այդ թվում՝ տեղեկատվության հավաքման ու ընդհանրացման) և փոխանցման (հաղորդման), գիտահետազոտական, փորձարարական-կոնստրուկտորական և փորձարարական-տեխնոլոգիական (տեխնոլոգիական) աշխատանքներ, կատարողները, հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնողները (բացառությամբ Օրենսգրքի հավելված 3-ով նախատեսված՝ գրոսաշրջային տների միջոցով մատուցվող՝ հյուրանոցային ծառայությունների հետ անմիջականորեն կապված՝ հանրային սննդի (նախաճաշ, ճաշ, ընթրիք) ոլորտի գործունեության), ինչպես նաև սույն ենթակետում նշված աշխատանքներին կամ ծառայություններին համանման այլ աշխատանքներ կատարողները կամ ծառայություններ մատուցողները.

Deleted: բժշկական  
Deleted: տեղեկատվության  
Deleted: գիտահետազոտական  
Deleted: տեխնոլոգիական  
Deleted: ,

13)Երևան քաղաքի վարչական սահմաններում առևտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ զբաղվող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը, Երևան քաղաքի վարչական սահմաններից դուրս՝ առևտրի իրականացման վայրերում, առևտրի կենտրոններում և տոնավաճառներում առևտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ զբաղվող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը, ինչպես նաև անձնական օգտագործման ավտոմեքենաների առևտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ կամ էլեկտրոնային առևտրի շրջանակներում առևտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ զբաղվող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը.

Deleted: ավտոմեքենաների  
Deleted: կազմակերպություններն

14)«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19.7-րդ և 19.8-րդ հոդվածներով սահմանված գործունեության տեսակներով զբաղվող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը՝ այդ գործունեության տեսակների մասով.

15)հարկային տարվա ընթացքում հսկիչ դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների երրորդ խախտումը կատարած կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը՝ խախտումն արձանագրելու օրվանից մինչև այդ օրը ներառող հարկային տարվան հաջորդող հարկային տարվա ավարտը.

Deleted: ձեռնարկատերերը  
Deleted: հաջորդող

16)Օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխկապակցված համարվող կազմակերպությունները և ֆիզիկական անձինք, բացառությամբ այն դեպքերի, երբ, Օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, նրանց փոխկապակցված կազմակերպությունները և

(կամ) ֆիզիկական անձինք հարկային մարմին են ներկայացրել գործունեությունը դադարեցնելու մասին հայտարարություն և հայտարարությունը ներկայացնելու օրվանից հետո, իսկ հայտարարությունում գործունեությունը դադարեցնելու այլ օր նշելու դեպքում՝ այդ օրվանից հետո փաստացի գործունեություն չեն իրականացրել:

17) Օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փոխկապակցված համարվող կազմակերպությունները և ֆիզիկական անձինք, եթե հարկային մարմնի ղեկավարի որոշմամբ փոխկապակցված ճանաչված առևտրային կազմակերպությունների և ֆիզիկական անձանց նախորդ հարկային տարվա կամ ընթացիկ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունների հանրագումարը գերազանցում է 24 միլիոն դրամը:

18) Օրենսգրքի 31-րդ հոդվածով սահմանված՝ համատեղ գործունեության պայմանագրի, ինչպես նաև ապրանքների մատակարարման՝ կոմիսիայի կամ ապրանքների մատակարարման՝ գործակալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրի կողմ հանդիսացող կազմակերպությունները և ֆիզիկական անձինք:

19) իրենց գործունեության ընթացքում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այլ ֆիզիկական անձանց աշխատանքն օգտագործող անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք:

20 կազմակերպություններին կամ անհատ ձեռնարկատերերին ապրանքների մատակարարման գործարքներ իրականացրած՝ առևտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ զբաղվող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը:

### **Հոդված 268. Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարելը**

3. Միկրոձեռնարկատիրության սուբյեկտը դադարում է այդպիսին համարվելուց, եթե՝

6) կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը հարկային մարմին է ներկայացրել հայտարարություն՝ նշում կատարելով ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու մասին՝ հայտարարությունում նշված օրվանից (բայց հայտարարությունը ներկայացնելու օրվան նախորդող 20-րդ օրվանից ոչ շուտ) մինչև հայտարարությունում նշված հարկային տարվա ավարտը կամ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն՝ այդ հայտարարությունում նշված օրվանից (բայց հայտարարությունը ներկայացնելու օրվան նախորդող 20-րդ օրվանից ոչ շուտ) մինչև տվյալ հարկային տարվա ավարտը:

7) ընթացիկ հարկային տարում կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ գործունեության բոլոր տեսակների, իսկ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի դեպքում՝ Օրենսգրքի բաղկացուցիչ մասը կազմող հավելված 3-ով սահմանված գործունեու-

թյան բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը գերազանցել է 24 միլիոն դրամը՝ գերազանցելու պահից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը.

8) տեղի է ունեցել Օրենսգրքի 267-րդ հոդվածի 5-րդ մասի 1-3-րդ, ~~6-րդ~~, ~~8-րդ~~ կամ ~~9-րդ~~ կետերում նշված փաստերից որևէ մեկը՝ այդ փաստը տեղի ունենալու օրվանից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը.

Deleted: 5  
Deleted: 7  
Deleted: 8

9) տեղի է ունեցել Օրենսգրքի 267-րդ հոդվածի 5-րդ մասի ~~5-րդ~~ և ~~10-րդ~~ կետերում նշված փաստերից որևէ մեկը տեղի ունենալու օրվանից մինչև այդ օրը ներառող հարկային տարվան հաջորդող հարկային տարվա ավարտը.

Deleted: 4  
Deleted: 9

10) տեղի է ունեցել Օրենսգրքի 267-րդ հոդվածի 5-րդ մասի ~~7-րդ~~ կետում նշված փաստը՝ այդ փաստը տեղի ունենալու օրը ներառող հարկային տարվա սկզբից, իսկ եթե հարկ վճարողը պետական գրանցում է ստացել կամ հաշվառվել է ավելի ուշ, ապա պետական գրանցման կամ հաշվառման օրվանից: Օրենսգրքի 267-րդ հոդվածի 5-րդ մասի ~~7-րդ կետում նշված որոշումը~~ [դատական կարգով բողոքարկվելու դեպքում առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք շարունակում են համարվել միկրոձեռնարկատիրության սուբյեկտներ, իսկ Օրենսգրքի 267-րդ հոդվածի 5-րդ մասի 7-րդ կետում նշված որոշումն](#) [անվավեր չճանաչելու վերաբերյալ](#) դատարանի ~~վճիռն~~ ուժի մեջ մտնելու [դեպքում փոխկապակցված](#) ճանաչված [առևտրային](#) կազմակերպությունները և [ֆիզիկական անձինք դադարում են համարվել միկրոձեռնարկատիրության սուբյեկտներ սույն կետում սահմանված ժամկետից](#):

Deleted: 6

Deleted: 6

Deleted: անվավեր համարելու մասին

Deleted: վճիռ

Deleted: դեպքում փոխկապակցված

Deleted: առևտրային

Deleted: անհատ ձեռնարկատերերը կրկին համարվում են միկրոձեռնարկատիրության սուբյեկտներ՝ այդպիսին համարվելուց դադարելու օրվանից

4. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերով միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարած անհատ ձեռնարկատերը և անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը նույն մասով նախատեսված՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարելու համապատասխան ժամկետներում զրկվում է համապատասխանաբար՝ որպես անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ կամ որպես անհատ ձեռնարկատեր միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու իրավունքից:

#### **Հոդված 269. Միկրոձեռնարկատիրության սուբյեկտների կողմից հարկերի և վճարների հաշվարկումը և վճարումը**

3. Միկրոձեռնարկատիրության սուբյեկտներն ազատվում են միկրոձեռնարկատիրության մասով առաջացող բոլոր պետական հարկերի հաշվարկման և պետական բյուջե վճարման պարտավորությունից (այդ թվում՝ որպես հարկային գործակալ՝ հարկը հաշվարկելու, պահելու և պետական բյուջե փոխանցելու պարտավորությունից, ինչպես նաև Օրենսգրքի 135-րդ հոդվածով սահմանված՝ շահութահարկի կանխավճարների կատարման պարտավորությունից), բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի:

4. Միկրոձեռնարկատիրության սուբյեկտները չեն ազատվում՝



4) Հայաստանի Հանրապետություն ներմուծվող (այդ թվում՝ ԵՏՄ անդամ պետություններից) ապրանքների մասով Օրենսգրքով սահմանված կարգով հարկերի հաշվարկման և պետական բյուջե վճարման պարտավորությունից.

5) միկրոձեռնարկատիրության մեջ ներգրավված վարձու աշխատողներին հարկային [գործակալի](#) կողմից վճարվող (հաշվարկվող) հարկվող եկամուտներից յուրաքանչյուր վարձու [աշխատողի](#) համար ամսական հինգ հազար դրամի չափով եկամտային հարկ հաշվարկելու և [վճարելու](#) պարտավորությունից (այդ թվում՝ ոչ ամբողջական ամսվա համար), որը այդ [եկամուտների](#) մասով համարվում է եկամտային հարկի գծով վերջնական հարկային [պարտավորություն](#).

- Deleted: գործակալի
- Deleted: աշխատողի
- Deleted: վճարելու
- Deleted: եկամուտների
- Deleted: պարտավորություն

6) Օրենսգրքով սահմանված կարգով ակցիզային հարկի, բնապահպանական հարկի և (կամ) ճանապարհային հարկի հաշվարկման և պետական բյուջե վճարման պարտավորությունից:

### Հոդված 270. Միկրոձեռնարկատիրության սուբյեկտների կողմից հարկային հաշվարկներ ներկայացնելը

4. Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը (բացառությամբ բացառապես Օրենսգրքի բաղկացուցիչ մասը կազմող հավելված 3-ով սահմանված գործունեության տեսակների մասով միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվող անհատ ձեռնարկատերերի) մինչև հարկային տարվան հաջորդող հարկային տարվա փետրվարի 1-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում հաշվետվություն՝ նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության վերաբերյալ:

5. Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը մինչև յուրաքանչյուր հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում [Օրենսգրքի](#) 156-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ եկամտային հարկի հաշվարկ՝ [միկրոձեռնարկատիրությունում](#) ներգրավված վարձու աշխատողների համար:

- Deleted: Օրենսգրքի
- Deleted: միկրոձեռնարկատիրությունում

6. Միկրոձեռնարկատիրության սուբյեկտներն ազատվում են հարկային մարմին Օրենսգրքով սահմանված այլ հարկային հաշվարկներ ներկայացնելուց, բացառությամբ՝

- 1) Օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված փաստաթղթերի.
- 2) Օրենսգրքի 67-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներից որևէ մեկի խախտմամբ դուրս գրված հարկային հաշվում առանձնացված ԱԱՀ-ի գումարն արտացոլող՝ ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի.

3) Օրենսգրքով 84-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և (կամ) 4-րդ կետերով սահմանված հարկման օբյեկտների մասով Օրենսգրքով սահմանված կարգով ակցիզային հարկ վճարող համարվելու դեպքում՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ հարկային մարմին ներկայացվող՝ ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի:

4) Օրենսգրքի 180-րդ հոդվածով սահմանված՝ բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների միասնական հարկային հաշվարկի:

**Հոդված 271. Միկրոձեռնարկատիրության սուբյեկտների կողմից հարկերի և վճարների վճարումը**

2. Օրենսգրքի 269-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված՝ միկրոձեռնարկատիրության մեջ ներգրավված վարձու աշխատողներին հարկային գործակալի կողմից վճարվող (հաշվարկվող) հարկվող եկամուտներից յուրաքանչյուր վարձու աշխատողի համար ամսական հինգ հազար դրամի չափով եկամտային հարկի գումարները հաշվարկվում և պետական բյուջե են վճարվում մինչև եկամուտների վճարման (հաշվարկման) ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

**Հոդված 272. Միկրոձեռնարկատիրության համակարգից շրջանառության հարկի համակարգին կամ հարկման ընդհանուր համակարգին անցումը**

4. Ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը և անհատ ձեռնարկատերը միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարելու պահից՝

1) շրջանառության հարկի համակարգ անցնելու դեպքում տվյալ հարկային տարվա մնացած ժամանակահատվածում (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքերի) հարկային պարտավորությունները հաշվարկում և կատարում են Օրենսգրքի 55-րդ գլխով սահմանված կարգով՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարելու պահից հետո ձևավորվող հարկման բազաների մասով:

2) հարկման ընդհանուր համակարգ անցնելու դեպքում տվյալ հարկային տարվա մնացած ժամանակահատվածում հարկային պարտավորությունները հաշվարկում և կատարում են Օրենսգրքով սահմանված կարգով՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարելու պահից հետո ձևավորվող հարկման բազաների մասով:

5. Միկրոձեռնարկատիրության համակարգից հարկման ընդհանուր համակարգ անցնելու դեպքում հարկ վճարողի համախառն եկամտից նվազեցվում են մինչև միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելը և (կամ) միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու ժամա-

նակահատվածում կատարված՝ հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ ձեռք բերելու ծախսերը՝ Օրենսգրքով սահմանված կարգով: Սույն մասի կիրառության իմաստով՝ միկրոձեռնարկատիրության համակարգից հարկման ընդհանուր համակարգ անցնելու դեպքում՝

1) հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը որոշելու համար հաշվի են առնվում միկրոձեռնարկատիրության համակարգում հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մասով Օրենսգրքի 121-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկվող ամորտիզացիոն մասհանումները.

2) հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մասով Օրենսգրքի 121-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկվող ամորտիզացիոն մասհանումների գծով ծախսերը համախառն եկամտից նվազեցվում են միկրոձեռնարկատիրության համակարգից հարկման ընդհանուր համակարգ անցնելու օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 1-ից.

3) Օրենսգրքի 121-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված և միկրոձեռնարկատիրության համակարգից հարկման ընդհանուր համակարգ անցնելու օրն ընդգրկող ամսվան վերաբերող՝ վարչական, իրացման, ոչ արտադրական բնույթի այլ, ինչպես նաև ֆինանսական ծախսերը (այն մասով, որը, նույն մասի համաձայն, նվազեցվում է այն հարկային տարվա ընթացքում, որին այն վերաբերում է) համախառն եկամտից նվազեցվում են միկրոձեռնարկատիրության համակարգից հարկման ընդհանուր համակարգ անցնելու օրվանից մինչև այդ օրն ընդգրկող ամսվա վերջը եղած օրերի՝ տվյալ ամսվա բոլոր օրերի կառուցվածքում ունեցած տեսակարար կշռին համապատասխանող չափով:

6. Միկրոձեռնարկատիրության համակարգից հարկման ընդհանուր համակարգ անցնելու դեպքում հարկ վճարողի համախառն եկամտից նվազեցվում են մինչև միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելը և (կամ) միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու ժամանակահատվածում կատարված՝ սույն հոդվածի 2-րդ մասում չնշված ակտիվների սկզբնական արժեքները՝ Օրենսգրքով սահմանված կարգով:

Ցանկ

գործունեության տեսակների, որոնք կարող են իրականացվել միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվող՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից

Գործունեության տեսակները	
14.	Բնակչության պատվերով կատարվող՝
1)	կոշիկի և կաշվե գալանտերեայի և համանման այլ արտադրատեսակների արտադրություն, կոշիկի և կաշվե գալանտերեայի պարագաների արտադրություն, կոշիկի և կաշվե արտադրատեսակների նորոգում
2)	հագուստի արտադրություն և նորոգում
3)	գլխարկների արտադրություն և նորոգում
4)	գորգերի և գորգագործական արտադրատեսակների արտադրություն և նորոգում
5)	փայտյա իրերի պատրաստում, կահույքի և տան կահավորանքի նորոգում
6)	ոչ թանկարժեք զարդերի արտադրություն և նորոգում
7)	համակարգչային տեխնիկայի, հեռուստացույցների, լվացքի մեքենաների, օդորակիչների և այլ կենցաղային տեխնիկայի նորոգում, ծրագրային սպասարկում
8)	հեծանիվների և հաշմանդամների սայլակների արտադրություն, անձնական օգտագործման և կենցաղային այլ արտադրատեսակների նորոգում
9)	տնտեսական և գեղագարդ խեցեգործական արտադրատեսակների արտադրություն
10)	այլ ձենապակե և խեցեգործական արտադրատեսակների արտադրություն
11)	թիթեղագործական գործունեություն
15.	ժամացույցների, ժամանակաչափ սարքերի նորոգում, երաժշտական գործիքների նորոգում
16.	Նեղ մասնագիտական գիտելիքների ձեռքբերման այլ դասընթացներ
17.	Լեզուների ուսուցման դասընթացներ
18.	Բարձրագույն և այլ հաստատություններ ընդունվելու համար նախապատրաստական դասընթացներ
19.	Պարեր, երգեցողություն դասավանդողների գործունեություն
20.	Կատարողական արվեստի բնագավառում գործունեություն, կատարողական արվեստի բնագավառում օժանդակ գործունեություն
21.	Ստեղծագործական գործունեություն

22.	Խնջույքավարների գործունեություն
23.	Կրթական գործունեություն և արտադարձական դաստիարակություն մարմնամարզության և սպորտի բնագավառում
24.	Մասնավոր տնային տնտեսություններում ծառայությունների մատուցում (առանց տարբերակման) սեփական սպառման համար
25.	Ղարբնոցային գործունեություն
26.	Զբոսաշրջային տների միջոցով հյուրանոցային ծառայությունների մատուցում ( <a href="#">այդ թվում՝ այդ ծառայությունների հետ անմիջականորեն կապված՝ հանրային սննդի (նախաճաշ, ճաշ, ընթրիք) ոլորտի գործունեությունը</a> )

»:

**Հոդված 119.** Օրենսգրքի 314-րդ հոդվածի 4-րդ մասում՝

52)1-ին կետում «կազմակերպության» բառից հետո լրացնել «(բացառությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի)» բառերը, [իսկ «, իսկ առկայության դեպքում՝ նաև օտարերկրյա պետությունում եկամուտների ստացումը հիմնավորող փաստաթղթերի պատճենը» բառերը փոխարինել «, ինչպես նաև օտարերկրյա պետությունում եկամուտների ստացումը հիմնավորող փաստաթղթերի պատճենը՝ եկամուտների առկայության դեպքում» բառերով.](#)

53)լրացնել հետևյալ խմբագրությամբ 1.1-ին կետ.

«1.1) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի դեպքում՝ դիմում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտի կարգավիճակի հաստատման տեղեկանք ստանալու վերաբերյալ».

54)2-րդ կետի «ա» ենթակետում «, իսկ առկայության դեպքում՝ նաև օտարերկրյա պետությունում եկամուտների ստացումը հիմնավորող փաստաթղթերի պատճենը» բառերը փոխարինել «, ինչպես նաև օտարերկրյա պետությունում եկամուտների ստացումը հիմնավորող փաստաթղթերի պատճենը՝ եկամուտների առկայության դեպքում» բառերով:

Deleted: .»:  
Deleted: <#>¶

**Հոդված 120.** Օրենսգրքի 343-րդ հոդվածի 5-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ կետ

«7) կենտրոնացված մատակարարի կողմից անմաքս առևտրի խանութի կազմակերպչին ապրանքների մատակարարման ժամկետի խախտում հայտնաբերելու դեպքում:»:

**Հոդված 121.** Օրենսգրքի 380-րդ, 381-րդ, 384-րդ և 416-րդ հոդվածներում «պլաստիկ քարտերի» բառերը փոխարինել «վճարային քարտերի կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքների» բառերով:

**Հոդված 122.** Օրենսգրքի 386-րդ հոդվածի՝

3) 3-րդ մասը չարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված սահմանափակումների կիրառության իմաստով՝

1) կանխիկ դրամով վճարում է համարվում ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման յուրաքանչյուր գործարքի դիմաց կատարվող բոլոր վճարումների (այդ թվում՝ կանխավճարների, մասնակի վճարումների) հանրագումարը.

2) կանխիկ դրամով վճարում չի համարվում այն վճարումը, որի մասով դուրս է գրվել Օրենսգրքի 381-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերության 4-րդ կետով սահմանված ապրանք ձեռք բերող, աշխատանք ընդունող և (կամ) ծառայություն ստացող կազմակերպության, անհատ ձեռնարկատիրոջ կամ նուտարի հարկ վճարողի հաշվառման համարը պարունակող՝ հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոն:»:

4) 4-րդ մասից հանել «գյուղատնտեսական արտադրանք նթերող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից» բառերը:

Deleted: կազմակերպություններ  
ի

**Հոդված 123.** Օրենսգրքի 390-րդ հոդվածի 3-րդ մասում «ԱՏԳ ԱԱ 0405,» բառերից հետո լրացնել «0406,» թիվը:

**Հոդված 124.** Օրենսգրքի 392-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «ապրանքները» բառից հետո լրացնել «, ինչպես նաև անմաքս առևտրի խանութում վաճառքի համար նախատեսված դրոշմավորման ենթակա ապրանքները» բառերը:

**Հոդված 125.** Օրենսգրքի 393-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետում «20» թիվը փոխարինել «30» թվով:

3) 1-ին պարբերությունում «կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի» բառերից առաջ լրացնել «ավելացված արժեքի հարկ վճարող համարվող» բառերը.

4) 4-րդ պարբերությունում «պետական կառավարչական հիմնարկների» բառերը փոխարինել «պետական մարմինների» բառերով:

Deleted: պարբերությունից հանել «Ավելացված արժեքի հարկ վճարող համարվողների կողմից» բառերը, իսկ

Deleted:

**Հոդված 5.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 6.** «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-243-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 29-րդ հոդվածի 1-ին մասի՝

5) 1-ին կետում «(վարձու աշխատանք կատարելու, այդ թվում՝ 2018 թվականի հունվարի 1-ից հետո ընտանեկան ձեռնարկատիրության մեջ ներգրավված վարձու աշխատող համարվելու)» բառերը փոխարինել «(վարձու աշխատանք կատարելու, 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ընտանեկան ձեռնարկատիրության մեջ, իսկ 2020 թվականից հունվարի 1-ից հետո միկրոձեռնարկատիրության մեջ ներգրավված վարձու աշխատող համարվելու)» բառերով.

6) 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) անհատ ձեռնարկատեր լինելու, որպես նոտար պաշտոնավարելու, 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում արտոնագրային հարկ (մինչև 2018 թվականի հունվարի 1-ը՝ արտոնագրային վճար) վճարելու ժամանակահատվածները, բացառությամբ այն ժամանակահատվածների, երբ անհատ ձեռնարկատերը համարվել է բացառապես միկրոձեռնարկատիրության (մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը՝ ընտանեկան ձեռնարկատիրության) սուբյեկտ կամ օգտվել է «Սահմանամերձ բնակավայրերում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կամ ինքնազբաղված անձանց հարկային արտոնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հարկային արտոնություններից.»

Deleted: ժամանակահատվածների

Deleted: ինքնազբաղված

7) 4-րդ մասում «արտոնագրային վճար» բառերը փոխարինել «2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում արտոնագրային հարկ (մինչև 2018 թվականի հունվարի 1-ը՝ արտոնագրային վճար)» բառերով:

**Հոդված 7.** Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում արտոնագրային հարկ (մինչև 2018 թվականի հունվարի 1-ը՝ արտոնագրային վճար) վճարողների դեպքում՝ նաև հարկային մարմնում գրանցվելու օրը, ամիսը և տարին, արտոնագրային հարկ (արտոնագրային վճար) վճարելու ժամանակահատվածները:»:

**Հոդված 8.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ

«ԺԱՄԱՆԱԿԱԿՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՄ ԵՎ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ  
ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի հոկտեմբերի 27-ի ՀՕ-160-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի՝

8) 1-ին մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) գործատուների հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող ֆիզիկական անձինք, բացառությամբ միկրոձեռնարկատիրության մեջ ներգրավված վարձու աշխատողների կամ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը՝ ընտանեկան ձեռնարկատիրության մեջ ներգրավված՝ վարձու աշխատող հանդիսացող ընտանիքի անդամների (այսուհետ՝ վարձու աշխատողներ)».

9) 3.1-ին մասի՝

ա. 2-րդ կետում «ընտանեկան ձեռնարկատիրության» բառերը փոխարինել «միկրոձեռնարկատիրության (մինչև 2020 թվականի հունվարի 1-ը՝ ընտանեկան ձեռնարկատիրության)» բառերով,

բ. 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) «Սահմանամերձ բնակավայրերում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (մինչև 2020 թվականի հունվարի 1-ը՝ նաև «Ինքնագրաված անձանց հարկային արտոնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով) սահմանված հարկային արտոնություններից օգտվելու ժամանակահատվածում».

10)4-րդ մասում «ձեռնարկատիրական գործունեության դադարեցումը» և «ապահոված անձին» բառերից հետո լրացնել «(բացառությամբ՝ սույն հոդվածի 3.2-րդ մասում նշված դեպքի)» բառերը:

**Հոդված 2.** Օրենքի 22-րդ հոդվածի 11-րդ մասում «և արտոնագրային հարկի համակար-

գերում հարկվող գործունեության տեսակների մասով» բառերը փոխարինել «համակարգի շրջանակում» բառերով:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ  
ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-154-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 23.1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.**

«Սույն օրենքի 23.1-ին և 23.2-րդ հոդվածների իմաստով չաշխատող անձ է համարվում նաև միկրոձեռնարկատիրության մեջ ներգրավված՝ վարձու աշխատողը (մինչև 2020 թվականի հունվարի 1-ը՝ ընտանեկան ձեռնարկատիրության մեջ ներգրավված՝ վարձու աշխատող հանդիսացող ընտանիքի անդամը), բացառապես միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվող՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը, քաղաքացիաիրավական պայմանագրի հիման վրա աշխատանքների կատարման (ծառայությունների մատուցման) դիմաց գործատուից եկամուտ ստացող անձը:»:

**Օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.**

«4. Սույն օրենքի 27-րդ, 28-րդ, 28.1-ին հոդվածների դրույթները չեն տարածվում միկրո-ձեռնարկատիրության վարձու աշխատողների (մինչև 2020 թվականի հունվարի 1-ը՝ ընտանեկան ձեռնարկատիրության մեջ ներգրավված՝ վարձու աշխատող հանդիսացող ընտանիքի անդամների) վրա:»:

**Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:**

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և 2018 թվականի հունիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և 2017 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-266-Ն օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-338-Ն օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի և հարակից օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների, դրանց ընդունման կամ չընդունման վերաբերյալ

Առարկության, առաջարկության հեղինակը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
<p>ՀՀ ԱԺ «Լուսավոր Հայաստան» խմբակցություն</p>	<p>Նախագծի 14-րդ հոդվածով առաջարկվում է փոփոխություններ կատարել Օրենսգրքի 55-րդ հոդվածում, 44-րդ հոդվածով առաջարկվում է փոփոխություններ կատարել Օրենսգրքի 381-րդ հոդվածում: Այդ կապակցությամբ, առաջարկվում է Նախագծի 14-րդ և 44-րդ հոդվածներով խմբագրել Օրենսգրքի 55-րդ</p>	<p>Չի ընդունվել</p>	<p>Բեռնափոխադրումներ իրականացնող տնտեսավարող սուբյեկտների կողմից արտասահմանում կատարվող ծախսերը փաստաթղթավորելու մասով ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ նախատեսող օրենքի նախագծով արդեն իսկ առաջարկվում է համապատասխան լուծում: Մասնավորապես, նախատեսվում է, որ նախագիծն ընդունելուց հետո ՀՀ կառավարության որոշմամբ կսահմանվի այդ ծախսերի</p>

հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 381-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետերը: Մասնավորապես, օանհ ոո աոոժոո կառոսավոոմամո

<p>կազմակերպությունները, աշխատելով նաև արտասահմանում, չեն կարողանում ապահովել ՀՎՀՀ-ն նշելու պահանջն այլ պետություններում (դա կախված է միայն համապատասխան պետության օրենսդրական կարգավորումներից), այսպիսով չեն կարողանում ծախսագրել իրականում ծախսագրման ենթակա բավականին մեծ ծախսեր: Այստեղ խոսքը հատկապես դիզելային վառելիքի և ավտոմասերի ձեռքբերման մասին է: Ընդ որում, խնդիրը չի կարող լուծվել նաև փոխանցումների միջոցով աշխատելու դեպքում, քանի որ հավելյալ ծախսերն այդ քանակի մեջ բավականին զգալի են: Այսպես, դիզելային վառելիքը Ռուսաստանի Դաշնությունում կանխիկով գնելու դեպքում 1 լիտրի արժեքը 36 ռուբլի է, իսկ եթե այն ձեռք է բերվում փոխանցումով, ապա ընդհանուր փաստացի արժեքը 1 լիտրի համար կազմում է 39 ռուբլի: Ըստ այդմ, առաջարկվում է բեռնափոխադրող և նմանատիպ այլ կազմակերպությունների մասով Օրենսգրքի 381-րդ հոդվածի 3-րդ մասում նախատեսել հատուկ նորմ, որով</p>	<p>փաստաթղթավորման կարգ: Ինչ վերաբերում է մյուս ոլորտներում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների համար գնորդի ՀՎՀՀ չպարունակող ՀԴՄ կտրոնները որպես ծախսը հիմնավորող փաստաթուղթ դիտարկելու առաջարկությանը, ապա հայտնում ենք, որ նշյալ առաջարկությունն ընդունելի չէ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ դեպքում հնարավոր չի լինում ձեռնարկատիրական նպատակով ձեռքբերումները տարանջատել անձնական սպառման համար կատարվող ձեռքբերումներից: Մյուս կողմից, անհասկանալի է նաև ներկայիս գործող կարգավորումների պայմաններում առաջացող խնդիրների բովանդակությունը՝ հաշվի առնելով այն</p>
---	--

	<p>շրջանառության 40%-ը ծախսագրվում է որպես դիզելային վառելիքի և ավտոմատների ձեռքբերում:</p> <p>Նույն խնդիրն առկա է նաև այլ տեսակի տնտեսական գործունեություն իրականացնող սուբյեկտների մոտ՝ նրանք ևս չեն կարողանում ծախսագրել ծախսագրման ենթակա բազմաթիվ ծախսեր, քանի որ գործող կարգավորումն առաջացնում է մի շարք տեխնիկական խնդիրներ:</p> <p>ՀՂՄ կտրոնը ծախսագրման հիմք հանդիսացող փաստաթուղթ ճանաչելը ժամանակին հանդիպեց հակափաստարկի՝ դրանով ավելացվում են այդ կտրոնի ոչ նպատակային օգտագործման և միտումնավոր թյուր տեղեկատվության շնորհիվ ավել ծախսագրումների և արդյունքում հարկի նվազեցման ռիսկերը: Պետք է նշել, որ գրեթե բոլոր տնտեսվարողների, այլ ոչ միայն ՓՄՁ-ների համար խնդիր հանդիսացող այս երևույթը գործնականում մեծ բաժին չունի կազմակերպությունների ծախսերի կառուցվածքում, սակայն մի շարք</p>	<p>հանգամանքը, որ նույնիսկ ՀՂՄ-ների միջոցով հնարավոր է դուրս գրել հարկային հաշիվներ կամ հաշիվ ապրանքագրեր, որոնք կարող են առանց որևէ խոչընդոտի օգտագործվել որպես ծախսը հիմնավորող փաստաթղթեր: Ստացվում է, որ բոլոր այս հնարավորությունների առկայության պայմաններում առաջարկվում է հնարավորություն տալ «անդեմ» փաստաթղթերով հարկի գումարները նվազեցնել, ինչը նպատակահարմար համարվել չի կարող:</p> <p>Միևնույն ժամանակ, հայտնում ենք, որ նախագծի՝ Ազգային ժողովի տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովում քննարկումների ժամանակ հանձնաժողովի նախագահի կողմից առաջարկ է ներկայացվել կատարելագործել գնորդի ՀՎՀՀ-</p>
--	--	--



<p>դեպքերում ՀԴՄ կտրոնը կարող է հանդիսանալ միակ հիմնավորող փաստաթուղթը: Այս առումով, եթե հնարավոր են չարաշահումներ ոչ նպատակային օգտագործման մասով, ապա ՀԴՄ կտրոնի կիրառման օրենսդրությամբ թույլատրվող դեպքում (կտրոնի վրա գնորդի ՀՎՀՀ-ի առկայության դեպքում կտրոնը կարող է կիրառվել ծախսագրման նպատակով) նույնպես կարող են լինել չարաշահումներ: Բացի դրանից, ներկայումս ՀՎՀՀ-ի առկայությունը կտրոնի վրա հնարավորություն է տալիս տնտեսավարողին հիմնավորել ծախսերը, սակայն հնարավորություն չի տալիս հաշվանցել ԱԱՀ-ն:</p> <p>Այս խնդրի լուծման նպատակով առաջարկվում է ՀԴՄ կտրոնների ծախսագրման համար սահմանել ամսական թույլատրելի չափ, որից ավել գումարի չափի կտրոնները չեն հանդիսանա ծախսագրման հիմք հարկային առումով, կամ հիմնավորվող ծախսերի կառուցվածքում տոկոս կամ համամասնություն, կամ էլ երկուսը միասին,</p>	<p>ի նշումով ՀԴՄ կտրոնների հիման վրա ծախսագրումների կատարման համակարգը, ինչի կապակցությամբ</p> <p>Կառավարությունը, որպես լուծում, առաջարկել է նախագծով սահմանել, որ կանխիկ գործառնությունների առավելագույն սահմանաչափերը (միանվագ գործարքի համար՝ 300 հազ. դրամ, ամսական այդպիսի գործարքների համար՝ 3 մլն. դրամ) չեն տարածվում այն ՀԴՄ կտրոններով փաստաթղթավորվող գործարքների վրա, որոնցում նշվում է գնորդի ՀՎՀՀ-ն: Այդ լրացումն արդեն իսկ կատարվել է նախագծում:</p>
---	--

<p>օրինակ՝ 10%, բայց ոչ ավելի, քան 1 մլն ՀՀ դրամը:</p> <p>Նախագծի 2-րդ հոդվածով, ի թիվս այլ կարգավորումների, առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել Օրենսգրքի 189-րդ հոդվածը: Խնդիրն այն է, որ 2018 թվականից սկսած, ըստ նշյալ հոդվածի, Հայաստանի Հանրապետությունում գրանցված (հաշվառված) բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար ճանապարհային հարկը հաշվարկվում է տարեկան մինչև 480.000 հայկական դրամ դրույքաչափերով՝ կախված թույլատրելի առավելագույն զանգվածից: Նախկին կարգավորման համեմատ՝ այս թիվը 2.6 անգամ ավելի է և փաստացի ոչ արդարացված, քանի որ երկրում ճանապարհների վիճակն այդ ընթացքում առանձնապես չի բարելավվել: Ընդ որում, ընթացիկ կարգավորման մեջ նման հարկ նախատեսված չէ:</p> <p>Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է ներել Օրենսգրքի 189-րդ</p>	<p>Չի ընդունվել</p>	<p>2018 թվականի հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվարկված ճանապարհային հարկի պարտավորությունների ներումը անհավասար և անարդար հարկման պայմաններ կստեղծի պարտավորությունները բարեխղճորեն կատարած հարկ վճարողների և պարտավորությունները չկատարած հարկ վճարողների համար, ինչը նպատակահարմար չէ:</p> <p>Ինչ վերաբերում է 2018 թվականի ընթացքում ճանապարհային հարկի բեռի ավելացմանը, ապա միանշանակ չէ այն դիտարկումը, որ բեռն ավելացրել է:</p> <p>Բացի այդ, ոլորտի տնտեսավարող սուբյեկտների և նրանց միության հետ մեր բազմաթիվ հանդիպումների</p>
--	---------------------	--

	<p>հողվածով հաշվարկման ենթակա չվճարված ճանապարհային հարկը:</p>		<p>ընթացքում դժգոհությունը կապված է եղել ոչ այնքան ճանապարհային հարկի դրույքաչափերի հետ, որքան ճանապարհային հարկը ամբողջ տարվա համար միանգամից վճարելու օրենսդրական պահանջի հետ: Այս առումով, հարկ է նկատել, որ 2018 թվականն արդեն ավարտվել է և եթե անգամ նախատեսված լիներ, որ ճանապարհային հարկը վճարվում է ըստ ամիսների, 2018 թվականի 12 ամիսների համար ճանապարհային հարկը վաղուց պետք է ամբողջությամբ վճարված լիներ:</p> <p>Տեղեկացվում է նաև, որ նախագծով առաջարկվում է 2019 թվականի հունվարի 1-ից ընդհանրապես հանել Հայաստանի Հանրապետությունում հաշվառված բեռնատար ավտոմեքենաների</p>
--	--	--	---

	<p>Նախագծի 23-րդ հոդվածի և Օրենսգրքի 88-րդ հոդվածի կապակցությամբ՝ առաջարկվում է ոչ միայն չբարձրացնել գինու գործող ակցիզային հարկի դրույքաչափերը, այլ նվազեցնել դրանք առնվազն 50%-ով, քանի որ գինին ռազմավարական ապրանք է, գինու արտադրությունն ունի խթանման կարիք, որպեսզի այն նաև ավելի մեծ ծավալներով արտահանվի: Ընդ որում, հարևան Վրաստանն արդեն փաստացի հանել է իր գինիների ակցիզային հարկը, ինչը մեծ առավելություն է տալիս նրանց ինչպես իրենց ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում:</p>	<p>Չի ընդունվել</p>	<p>Ճանապարհային հարկը:</p> <p>Մեծապես կարևորելով գինեգործության զարգացման անհրաժեշտությունը մեր երկրում՝ այդուհանդերձ գտնում ենք, որ ներկայացված առաջարկության ընդունումը այդ խնդրի լուծման լավագույն ճանապարհը չէ, ինչը հիմնավորվում է հետևյալ հիմնական նկատառումներով.</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Նախ, հարկ է նկատել, որ նախագծով գինու համար առաջարկվող ակցիզային հարկի դրույքաչափը նույնիսկ ավելի ցածր է, քան նախորդ տարիների տվյալներով գինու համար հաշվարկված ակցիզային հարկի արդյունավետ դրույքաչափն է:</li> <li>2. Երկրորդ, նախագծով գինու համար առաջարկվող ակցիզային հարկի դրույքաչափի կիրառությունը նշանակում է, որ հայկական գինեգործության ավանդույթներն իրապես ներկայացնող, բարձրորակ և միջին ու բարձր գին ունեցող գինու համար դրույքաչափը ոչ միայն չի բարձրացել, այլ նաև էականորեն նվազել է:</li> <li>3. Գինու ակցիզային հարկի դրույքաչափերի նվազեցումը որևէ կերպ չի կարող նպաստել</li> </ol>
--	---	---------------------	---

			<p>գինու արտահանման ծավալների աճին, քանի որ, միևնույն է, արտահանումն ազատված է ակցիզային հարկից:</p> <p>4. Գինու ակցիզային հարկի դրույքաչափի նվազեցումը նշանակում է, որ նվազեցված դրույքաչափը պետք է հավասարապես կիրառվի ոչ միայն տեղական արտադրության, այլ նաև ներմուծվող գինու համար, ինչն էլ, իր հերթին, նշանակում է, որ ներմուծվող գինին ներքին շուկայում սկսելու է ավելի ազդեցիկ ձևով մրցակցել հայկական գինու հետ:</p>
	<p>Առաջարկվում է ձեռնպահ մնալ ակցիզային հարկի տարեկան 4% բարձրացում նախատեսող կարգավորումից, քանի որ դա տանելու է մի շարք ապրանքների գների բարձրացման:</p>	<p>Ընդունվել է մասնակի</p>	<p>Ակցիզային հարկի հաստատուն դրույքաչափերը յուրաքանչյուր տարի 4 տոկոսով բարձրացնելու առաջարկությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ նախագծով առաջարկվում է ընդհանրապես հրաժարվել ակցիզային հարկի արժեքային դրույքաչափերի կիրառությունից: Վերջինս նշանակում է, որ այլ հավասար պայմաններում, գնաճով պայմանավորված, ակցիզային հարկի մասնաբաժինը</p>

		<p>շարունակաբար նվազելու է ապրանքների գնի կառուցվածքում: Այս առումով, գոյություն ունի խնդրի լուծման երկու ճանապարհ: Առաջին, մի քանի տարի հետո կտրուկ բարձրացնել ակցիզային հարկի դրույքաչափերը՝ դրանով իսկ տնտեսավարող սուբյեկտներին պահելով մշտական անորոշությունների մեջ և անկանխատեսելի միջավայրում, իսկ շուկան ենթարկել ցնցումների: Եվ երկրորդ, նախագծի ընդունմամբ հայտարարել ակցիզային հարկի գծով քաղաքականության մասին՝ դրանով իսկ երկարաժամկետ հեռանկարում տնտեսավարող սուբյեկտների համար ձևավորելով կանխատեսելի հարկային միջավայր, ապահովելով ակցիզային հարկի դրույքաչափերի սահուն և փոքր տեմպերով բարձրացում, շուկան</p>
--	--	--

			<p>գերծ պահելով ցնցումներից: Միևնույն ժամանակ, տեղեկացվում է, որ առաջարկության ընդունումը կնշանակի պետական բյուջեի հարկային եկամուտների կորուստն ավելացնել տարեկան կտրվածքով ևս 2 մլրդ. դրամով: Այդուհանդերձ, հաշվի առնելով ԱԺ պատգամավորների մտահոգությունները, Կառավարությունն առաջարկում է փոխզիջումային տարբերակ, այն է՝ 4 տոկոսը փոխարինել 3 տոկոսով:</p>
	<p>Ինչպես նշվել է մասնագետների կողմից, եկամտային հարկի 23% դրույքաչափի սահմանումը չի լուծում գերփոքր տնտեսվարողների մոտ վարձու աշխատողներին գրանցելու, ստվերից դուրս</p>	<p>Չի ընդունվել</p>	<p>Եթե խոսքը վերաբերում է նվազագույն աշխատավարձը չհարկելուն, ապա անհրաժեշտ է նկատի ունենալ, որ «Նվազագույն աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ նույն օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձը հարկման ենթակա չէ:</p> <p>Ինչ վերաբերում է</p>

բերելու հարցը, քանի որ նրանց մեծ մասը ստանում է մինչև 150.000 ՀՀ դրամ աշխատավարձ: Խնդրահարույց է նաև

<p>գործատուի մոտ գրանցման հարցը՝ հարկման բարձր դրույքաչափի տեսանկյունից: Սեզոնային աշխատողների հարցը այս կամ այն սրությամբ առկա է նաև այլ ոլորտներում: Եկամտային հարկի բեռը բոլոր ժամանակներում եղել է բավականին բարձր բոլոր տնտեսավարողների տեսանկյունից: Աշխատողների գրանցման հարցը ստվերի և չարաշահումների հիմնական բաղադրիչներից է եղել, ներկայացված օրենսդրական նախաձեռնությունը հնարավորություն չի տալիս վստահաբար խուսափել չարաշահումներից: Նվազագույն չհարկվող շեմի գոյությունը հնարավորություն կտա գրանցելու բոլոր աշխատողներին (նաև սեզոնային կամ գործարքային) և նաև հնարավորություն ներկայացնելու ճշգրիտ տվյալներ արդեն գրանցված աշխատողների աշխատավարձի վերաբերյալ:</p> <p>Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է Նախագծի 32-րդ հոդվածը խմբագրել՝ նախատեսելով աշխատավարձի չհարկվող շեմ՝ օրենքով սահմանվող</p>	<p>նվազագույն չհարկվող շեմ կիրառելու առաջարկությանը, ապա մեր կողմից կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ նվազագույն ամսական աշխատավարձի չափով չհարկվող շեմի սահմանումը պետական բյուջեի հարկային եկամուտները կկրճատի տարեկան առնվազն 91 մլրդ. դրամով, ինչը հարկաբյուջետային կայունության ապահովման տեսանկյունից խիստ անկառավարելի ռիսկ է:</p> <p>Միևնույն ժամանակ, տեղեկացնում ենք, որ եկամտային հարկի համահարթ դրույքաչափերի կիրառության և դրույքաչափը շարունակաբար նվազեցնելու քաղաքականությունը նպատակ ունի ոչ միայն կրճատել թաքնված զբաղվածությունն ու ստվերային աշխատավարձերի</p>
--	--



	<p>նվազագույն աշխատավարձի չափով, ինչպես նաև նույն տրամաբանությամբ՝ եթե անձն ստանում է նվազագույն աշխատավարձ, ապա այն չպետք է հարկվի:</p>		<p>մեծությունը, այլ նաև նպատակ ունի նպաստել արտադրողական և բարձրորակ աշխատանքի խթանմանը, տնտեսական ակտիվության աստիճանի բարձրացմանը, արտահանմանը կողմնորոշված տնտեսությունների զարգացմանը, երկարաժամկետ և կայուն տնտեսական աճի ապահովման նախադրյալների ձևավորմանը:</p>
	<p>Առաջարկվում է Նախագծի 39-րդ հոդվածով նախատեսվող՝ Օրենսգրքի 258-րդ հոդվածի փոփոխություններով սահմանել նաև, որ հանրային սննդի ոլորտի ձեռնարկությունների կողմից փաստացի նույն վայրում նաև այլ գործունեությամբ զբաղվելու դեպքում 20% հարկային շեմը չեղարկվում է:</p>	<p>Ընդունվել է</p>	<p>Ներկայացված խնդիրը կարգավորվել է ԱԺ պատգամավոր Եղիշե Սողոմոնյանի կողմից ներկայացված առաջարկության հիման վրա:</p>
	<p>Առաջարկվում է Նախագծի 42-րդ հոդվածով նախատեսվող՝ Օրենսգրքի 267-րդ հոդվածի 5-րդ մասից հանել 3-րդ կետը:</p>	<p>Չի ընդունվել</p>	<p>Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ շուրջ 41 հազ. շրջանառության հարկ վճարողներ զբաղվում են</p>

Դրանով հնարավորություն կտրվի միկրոձեռնարկատիրությանը վերաբերող

	<p>արտոնյալ պայմանների ռեժիմը տարածել նաև մայրաքաղաքում միևնույն տեսակի գործունեության վրա: Առաջարկը հիմնավորվում է նրանով, որ մայրաքաղաքում վաստակած նույն գումարով ապրելն ավելի բարդ է, քան մարզերում: Միևնույն ժամանակ, նախաձեռնության սոցիալական բնույթը հաշվի առնելով, պետք է նշել, որ ըստ վիճակագրության՝ Երևան քաղաքի աղքատության նվազեցման տեմպը մոտ 6 անգամ գիջում է Հայաստանի այլ քաղաքների աղքատության նվազման տեմպին, իսկ ընդհանուր աղքատ բնակչության 28%-ը ապրում է Երևանում՝ ավելի քան կրկնակի գերազանցելով ամենաաղքատ համարվող Շիրակի մարզում բնակվող աղքատների ցուցանիշը (մոտ 12%):</p>		<p>առևտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ: Ընդ որում, նրանց տարեկան իրացման շրջանառության միջին մեծությունը կազմում է ընդամենը 10.7 մլն. դրամ: Այս առումով, առաջարկության ընդունումը գործնականում նշանակում է նշյալ տնտեսավարող սուբյեկտների հիմնական մասին տեղափոխել միկրոձեռնարկատիրության հարկման արտոնյալ համակարգ, ինչն ընդունելի չէ՝ հետևյալ հիմնական նկատառումներով.</p> <ol style="list-style-type: none"> <li>1) առաջարկության ընդունման դեպքում կստացվի, որ ներքին շուկայում առևտրական գործունեությունը, միտված չլինելով արտահանմանը, հիմնական մասով ազատվում է հարկերից, ինչը որևէ տնտեսագիտական հիմնավորում չունի,</li> <li>2) կխաթարվի միկրոձեռնարկատիրության հարկման արտոնյալ համակարգի հասցեականությունը,</li> <li>3) կմեծանա ամեն գնով իրացման շրջանառությունները</li> </ol>
--	---	--	--

			<p>թերհայտարարագրելու և միկրոձեռնարկատիրության հարկման արտոնյալ համակարգում անարդարացիորեն «տեղավորվելու» տնտեսական շարժառիթը:</p>
	<p>Առաջարկվում է առհասարակ չհարկել շահաբաժինները՝ հաշվի առնելով այն, որ՝</p> <p>1) շահաբաժինների հարկումով հարկայինը հնարավորություն է ստանում շրջհարկով աշխատողների մոտ կատարել համալիր ստուգում՝ ծախսային փաստաթղթերի մանրակրկիտ ստուգման միջոցով, իսկ չհիմնավորված շահաբաժինը կհարկվի որպես այլ եկամուտ՝ ավելի բարձր տոկոսադրույքով: Փաստացի շրջանառության հարկով հարկվողները կհարկվեն համապատասխան տոկոսադրույքով, իսկ շահաբաժիններ ստանալիս կհարկվեն եկամտային հարկի դրույքաչափերով: Շրջանառության հարկի հիմնական նպատակը ՓՄՁ-ներին փաստաթղթավորման պահանջից ազատումն է, սակայն ՓՄՁ-ին նորից դրվում է ճշգրիտ որոշումներ կատարելու պահանջը:</p>	<p>Չի ընդունվել</p>	<p>Շահաբաժինները չհարկելու առաջարկությունը ընդունելի չէ՝ հետևյալ հիմնական նկատառումներով.</p> <p>ա. միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պոտենցիալ ներդրողների համար ներդրում կատարելու որոշումների կայացման վրա ազդեցության տեսանկյունից շահաբաժինների՝ հարկման ենթակա լինելու հանգամանքը վճռորոշ չէ,</p> <p>բ. եթե անգամ որոշ պոտենցիալ ներդրողների (տվյալ դեպքում՝ ոչ ռեզիդենտ կազմակերպություններ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք) համար ներդրում կատարելու որոշումների կայացման վրա ազդեցության տեսանկյունից</p>

	<p>դժգոհության առարկա: Սակայն ամեն դեպքում Ֆրանսիան չունի ներդրումների խթանման խնդիր, ինչպես Հայաստանը: Այժմ Հանրապետությունում գերխնդիր է ինչպես օտարերկրյա, այնպես էլ ներպետական մակարդակով ներդրումների ծավալի ավելացումը: Այստեղ ուսանելի և կիրառելի է Վրաստանի նոր օրենսդրության օրինակը, որտեղ 2017 թվականից հարկվում են շահաբաժինները՝ եկամտային հարկով, սակայն չի հարկվում կազմակերպության շահույթը՝ շահութահարկով: Նման մոտեցումը խթանում է միջոցները բիզնեսում պահելն ու շրջանառելը՝ փաստացի խթանելով ներդրումները,</p> <p>3) ի վերջո, Հայաստանի Հանրապետությունը բազմաթիվ, այդ թվում նաև զարգացած տնտեսություն ունեցող երկրների հետ չունի կրկնակի հարկումը բացառելու մասին համաձայնագրեր, ինչը նշանակում է պակաս շահագրգռվածություն այդ երկրների ռեզիդենտների կողմից Հայաստանի տնտեսության մեջ ներդրումներ կատարելու համար:</p>		<p>շահաբաժինների՝ հարկման ենթակա լինելու հանգամանքը վճռորոշ լինի, ապա, միևնույն է, ներդրողին հետաքրքրում է շահաբաժնի մասով վճարվելիք հարկերի ընդհանուր մեծությունը՝ անկախ այն հանգամանքից, թե հարկերի որ մասն է վճարվելու շահաբաժնի վճարման աղբյուր համարվող երկրում, և որ մասը՝ ռեզիդենտության երկրում,</p> <p>գ. մյուս կողմից, հարկ է նկատել, որ ոչ ռեզիդենտ կազմակերպությունների և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց՝ հայաստանյան աղբյուրներից ստացվող շահաբաժինների հարկման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են նաև կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերով: Ընդ որում, հաճախ համաձայնագրերով նախատեսված են շահաբաժինների հարկման՝</p>
--	--	--	--

			<p>ազգային օրենսդրությամբ սահմանված դրույքաչափերից ավելի ցածր դրույքաչափեր կամ շահութահարկից առհասարակ ազատում,</p> <p>դ. բացի այդ, անցած տարիների փորձը ցույց է տալիս, որ շահաբաժինների հարկումից ազատումը ոչ թե ծառայում է ներդրումների ներհոսքին կամ տնտեսական աճին, այլ հիմնականում ծառայում է որպես գործիք՝ հարկումից խուսափելու տարբեր մեխանիզմներ կիրառելու և ֆիզիկական անձանց կողմից ստացվող եկամուտները չհարկելու համար,</p> <p>ե. գործող Հարկային օրենսգրքով հնարավորություն է ընձեռված հետ ստանալ շահաբաժնից վճարված հարկը՝ այդ չափով վերաներդրում կատարելու պարագայում: Սա ուղղակի խթան է ներդրումներ ներգրավելու առումով,</p>
--	--	--	--

		<p>գ. Եթե անգամ որոշ երկրների հետ մեր երկիրը չունի կրկնակի հարկումը բացառող համաձայնագրեր, պետք է նկատել, որ նախագծով արդեն իսկ առաջարկվում է նվազեցնել ոչ ռեզիդենտ կազմակերպությունների և օտարերկրյա քաղաքացիների ստացած շահաբաժինների հարկման դրույքաչափերը:</p> <p>Ինչ վերաբերում է ՓՄՁ սուբյեկտների մասով մատնանշված խնդրին, ապա հայտնում ենք, որ շահաբաժինից հարկերը հաշվարկվում են ֆինանսական հաշվառման կանոններով հաշվարկվող շահույթից և ֆինանսական հաշվետվությունների ոլորտը կարգավորող օրենսդրության համաձայն՝ բոլոր կազմակերպությունները պարտավոր են վարել հաշվապահական հաշվառում՝</p>
--	--	--

			<p>միջազգայնորեն ընդունված ստանդարտներին համապատասխան: Հետևաբար, գտնում ենք, որ ՓՄՁ սուբյեկտների մասով խնդիրը պետք է կարգավորել վերջիններիս համար ֆինանսական հաշվառման ավելի պարզեցված ընթացակարգեր սահմանելու ճանապարհով, ինչը Կառավարության ուշադրության կենտրոնում է:</p>
	<p>Առաջարկվում է «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ֆինանսական կառույցների պետական տուրքերի բարձրացման հարցը քննարկել առանձին՝ որպես ոլորտի բարեփոխման հարց, քանի որ այն բավական խնդրահարույց է, ինչպես նաև չի հանդիսանում հարկային բարեփոխումների մաս:</p>	<p>Չի ընդունվել</p>	<p>Ֆինանսավարկային հատվածի կազմակերպությունների գործունեության համար անհրաժեշտ լիցենզիայի համար վճարվող պետական տուրքի դրույքաչափերի վերանայման հարցն ուղղակիորեն կապված է շահութահարկի և եկամտային հարկի դրույքաչափերի նվազեցման հետ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ</p>

			<p>այս ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտները, որոնց գործունեությունը տնտեսության արտահանքի հատվածում է, չեն համարվում ուղղակի հարկերի գծով բեռի նվազեցման քաղաքականության շահառուներ: Հետևաբար, անհրաժեշտ է նրանց տնտեսած հարկերի որոշ մասը պետական տուրքի տեսքով հետ վերադարձնել պետական բյուջե: Այս մասին հստակ գրված է նաև նախագծերի փաթեթի ընդունման հիմնավորման մեջ:</p>
	<p>Գործող հարկային օրենսգրքի 390-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրոշմապիտակով դրոշմավորման ենթակա թռչնամսի պիտակավորման օրենսդրական պահանջը գործնականում կիրառելու հետ</p>	<p>Ընդունվել է</p>	<p>Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:</p>

կապված առաջ են եկել խնդիրներ, քանի որ երկարաժամկետ պահպանման համար անհրաժեշտ -18 աստիճան պայմաններում



	<p>բավարարող աշխատատեղեր և ընդունելի արտադրողականությամբ տեխնոլոգիական պրոցես: Հաշվի առնելով այս հանգամանքները, առաջարկվում է թույլատրվել է, որ պաղեցված թռչնամիսն առևտրային ցանցեր առաքվի արկղերի վրա սահմանված կարգով դրոշմապիտակով դրոշմավորված վիճակում:</p>		
	<p>Առաջարկվում է հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ նախատեսող նախագծի 57-րդ հոդվածի «շարունակում են համարվել» բառերը փոխարինել «չեն համարում» բառերով, քանի որ դա ավելի բարենպաստ լուծում է ՓՄՁ-ների գործունեության համար:</p>	<p>Չի ընդունվել</p>	<p>Նախ, մեր ունեցած տեղեկություններով, շատ չեն այն տնտեսավարող սուբյեկտները, որոնք իրենց իրացման շրջանառությամբ արդեն իսկ գերազանցել են 58.35 մլն. դրամի շեմը:</p> <p>Բացի այդ, ներկայացված առաջարկության ընդունումը նշանակում է, որ այն տնտեսավարող սուբյեկտները, որոնք 2019 թվականի անցած ամիսների ընթացքում գերազանցել են ԱԱՀ-ի 58,35 միլիոն դրամի շեմը և դարձել են ԱԱՀ վճարողներ, նախագծի ընդունումից հետո կրկին</p>

			<p>կհամարվեն շրջանառության հարկ վճարող: Վերոնշյալ առաջարկությունը անխուսափելիորեն ուղեկցվելու է մի շարք խնդիրներով՝ կապված այն հանգամանքի հետ, որ արդեն ԱԱՀ վճարող համարվող այդ տնտեսավարող սուբյեկտները հարկային հաշիվներ են դուրս գրել և գնորդ տնտեսավարող սուբյեկտներին ԱԱՀ գծով հաշվանցումներ կատարելու հնարավորություն են տվել: Այս պայմաններում, առաջարկության ընդունումը ենթադրում է գնորդ հարկ վճարողների համար լրացուցիչ հարկային պարտավորությունների (այդ թվում՝ տույժերի) ձևավորում, ինչը ոչնչով հիմնավորված համարվել չի կարող :</p>
	<p>Առաջարկվում է հիմնովին վերանայել վարկային կազմակերպությունների հիմնական գործունեության լիցենզիայի</p>	<p>Չի ընդունվել</p>	<p>Ինչպես վարկային կազմակերպությունների (այդ թվում՝ դրանց մասնաճյուղերի և</p>

	<p>պետական տուրքի միանգամից բազմապատիկ բարձրացման վերաբերյալ դրույթները: Այս որոշումն իր ազդեցությունն է թողնելու հատկապես փոքր վարկայինների վրա ու թանկացնելու է վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվող վարկերի տոկոսադրույթները: Սա իր հերթին տանելու է բանկերի և մեծ վարկային կազմակերպությունների կողմից ֆինանսական շուկայի մոնոպոլիզացմանը:</p> <p>Անհասկանալի է, թե ինչ հիմնավորմամբ և ինչ տնտեսական հաշվարկների հիման վրա է պետական տուրքը այդքան բարձրացվում վարկային կազմակերպությունների համար և ավելի փոքր չափով բանկերի համար, երբ բանկերի կապիտալը 30 մլրդ. դրամ է, իսկ վարկայիններինը՝ 150 մլն:</p> <p>Միաժամանակ, ընդունելի չէ վարկային կազմակերպությունների այն մասնաձյուղերի համար, որոնք զբաղվում են արտարժույթի առք ու վաճառքով, միանգամից 4 անգամ տուրքի բարձրացումը, երբ այդ մասնաձյուղերը</p>		<p>ներկայացուցիչների), այնպես էլ առհասարակ ֆինանսավարկային հատվածի կազմակերպությունների գործունեության համար անհրաժեշտ լիցենզիայի մասով վճարվող պետական տուրքի դրույթաչափերի հարցը բազմակողմանիորեն քննարկվել է ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նիստերում, այդ թվում՝ ոլորտի ներկայացուցիչների և Կենտրոնական բանկի ներկայացուցիչների մասնակցությամբ: Քննարկման արդյունքներով, հաշվի առնելով նաև ֆինանսավարկային հատվածի կազմակերպությունների առանձին խմբերի գործունեության ֆինանսական արդյունքները, կայացվել են համապատասխան որոշումներ, որոնք մեր կարծիքով</p>
--	--	--	---

	<p>գբաղվում են միայն վարկեր տրամադրելով և փոքր քանակի արտարժույթի փոխանակման գործառույթներով: Այստեղ էական է նաև, որ վարկայինների մասնաճյուղերը հիմնականում մայրաքաղաքից դուրս են գործում: Մյուս կողմից վարկային կազմակերպությունները 2006 թվից սկսած իրենց մասնաճյուղերի համար տարեկան վճարում են պետական տուրքեր:</p> <p>Ներկայացուցչությունների մասով պետական տուրք կիրառելը և առաջարկում ենք հանել, քանի որ ներկայացուցչությունները որևէ ֆինանսական գործունեություն չեն իրականացնում:</p>		<p>հավասարակշռված են, բխում են արդարության սկզբունքից և որոշակիորեն լուծում են նախագծերի փաթեթի ընդունման հիմնավորմամբ հետապնդվող նպատակներին հասնելու խնդիրը:</p>
<p>ՀՀ ԱԺ պատգամավոր, տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Բաբկեն Թունյան</p>	<p>Առաջարկվում է վերանայել ֆինանսավարկային ոլորտի կազմակերպությունների գործունեության համար նախատեսված պետական տուրքի դրույքաչափերի բարձրացման ռազմավարությունը՝ նպատակ ունենալով փոխանակման կետերի և գրավատների համար առաջարկվող պետական տուրքի դրույքաչափերը նվազեցնել և փոխարենը</p>	<p>Ընդունվել է</p>	<p>Տնտեսության ֆինանսավարկային հատվածի կազմակերպությունների գործունեության համար անհրաժեշտ լիցենզիայի մասով վճարվող պետական տուրքի դրույքաչափերի հարցը բազմակողմանիորեն քննարկվել է ԱԺ տնտեսական հարցերի</p>

	<p>հարկային եկամուտների ակնկալվող մեծությունը պահպանելու համար որոշակիորեն բարձրացնել ոլորտի ինստիտուցիոնալ միավորների (բանկեր, վարկային կազմակերպություններ, ապահովագրական ընկերություններ) համար նախագծով առաջարկվող դրույքաչափերը</p>		<p>մշտական հանձնաժողովի նիստերում, այդ թվում՝ ոլորտի ներկայացուցիչների և Կենտրոնական բանկի ներկայացուցիչների մասնակցությամբ: Քննարկման արդյունքներով, հաշվի առնելով նաև ֆինանսավարկային հատվածի կազմակերպությունների առանձին խմբերի գործունեության ֆինանսական արդյունքները, կայացվել են համապատասխան որոշումներ, որոնք մեր կարծիքով հավասարակշռված են, բխում են արդարության սկզբունքից և որոշակիորեն լուծում են նախագծերի փաթեթի ընդունման հիմնավորմամբ հետապնդվող նպատակներին հասնելու խնդիրը:</p>
	<p>Առաջարկվում է կենտրոնացված մատակարարումների կազմակերպման շրջանակներում անմաքս առևտրի խանութի</p>	<p>Ընդունվել է</p>	<p>Նախագծում կատարվել են համապատասխան լրացումներ:</p>

	<p>կազմակերպչին ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների մատակարարման գործարքներն ազատել ակցիզային հարկից և ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորումից:</p>		
<p>ՀՀ ԱԺ պատգամավոր Հայկ Սարգսյան</p>	<p>Հարկային օրենսգրքի 258-րդ հոդվածի համաձայն՝ հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից ստացվող եկամուտները հարկվում են շրջանառության հարկի 8 տոկոս, իսկ հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողների կողմից Հայաստանի Հանրապետությունում կիրառվող՝ տնտեսական գործունեության դասակարգչի «Հանրային սննդի կազմակերպում» հատվածում չներառվող՝ այլ ակտիվների օտարումից, ինչպես նաև այլ գործունեությունից ստացվող եկամուտները՝ 20 տոկոս դրույքաչափով: Վերոնշյալը լուրջ խնդիր է առաջացնում շրջանառության հարկով աշխատող հյուրանոցային ծառայություններ իրականացնող կազմակերպությունների համար:</p> <p>Անկախ ընդհանուր հասույթի մեջ հանրային սննդի ծառայություններից</p>	<p>Ընդունվել է</p>	<p>Ներկայացված խնդիրը կարգավորվել է ԱԺ պատգամավոր Եղիշե Սողոմոնյանի կողմից ներկայացված առաջարկության հիման վրա:</p>

ստացվող իրացման շրջանառության ունեցած տեսակարար կշիռը՝ հյուրանոցային ծառայություններ մատուցող կազմակերպությունները հանրային սննդի հետ առնչություն ունենալու դեպքում, պետք է հյուրանոցային և այլ ծառայությունների իրացման շրջանառությունը հարկեն 20 %-ով:

Օրինակ՝ <<Ծաղկահովիտ>> ՍՊԸ-ի հիմնական գործունեությունը հանդիսանում է Ծաղկաձոր քաղաքում համալիր հյուրանոցային ծառայության մատուցումը և, այդ ծառայությունը լիարժեք մատուցելու նպատակով, կազմակերպությունը հյուրերին տրամադրում է նաև սնունդ իր տարածքում գտնվող ճաշարանում և բարում՝ օգտագործելով տնտեսական գործունեության ՏԳՏԴ 156.29.1 հանրային սննդի ծառայության մատուցման դասակարգիչը: Ստորև ներկայացվում է կազմակերպության իրացումից հասույթի տեսակարար կշիռները.

		Հյու րանոցայի ն	Հ անրայի ն սննդի
--	--	-----------------------	------------------------

	ծա ռայությու ն	ծառայո ւթյուն
2018թ-ի 1-ին եռամսյակ	79	2 1
2018թ-ի 2-րդ եռամսյակ	54	4 6
2018թ-ի 3-րդ եռամսյակ	64	3 6
2018թ-ի 4-րդ եռամսյակ	71	2 9
<b>Միջին տարեկան տեսակարար կշիռը 2018թ-ին</b>	<b>67</b>	<b>3 3</b>
2019թ-ի 1-ին եռամսյակ	74	2 6

Վերոգրյալով պայմանավորված՝ առաջարկվում է Հարկային օրենսգրքի 258-րդ հոդվածը լրացնել 4-րդ մասով հետևյալ խմբագրությամբ.

«4. Հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողների կողմից



	<p>Հայաստանի Հանրապետությունում կիրառվող՝ տնտեսական գործունեության դասակարգչի «Հանրային սննդի կազմակերպում» հատվածում չներառվող՝ այլ ակտիվների օտարումից, ինչպես նաև այլ գործունեությունից ստացվող եկամուտների նկատմամբ հաշվարկվող սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափը (տոկոսը) չի կիրառվում, եթե հաշվետու ժամանակահատվածում այդ եկամուտները ստացվել են հիմնական գործունեության իրականացման արդյունքում: Սույն մասի կիրառության իմաստով՝ հիմնական գործունեություն է համարվում գործունեության այն տեսակը, որը հաշվետու ժամանակաշրջանում ստացված եկամտի ընդհանուր ծավալում փաստացի ունեցել է առավել մեծ տեսակարար կշիռ:»</p> <p>Վերոնշյալ դրույթը չընդունելու հետևանքով, խնդրո առարկայի հետ առնչվող կազմակերպություններն ստիպված վարձակալության են հանձնում սննդի կազմակերպման ծառայությունները, որն իր հետ բերում է բազմաթիվ կազմակերպական խնդիրներ (օրինակ՝</p>		
--	--	--	--

	<p>տուրիստական կազմակերպությունները միևնույն հաճախորդի հանգստի կազմակերպման նպատակով ստիպված են լինելու ամրագրում կատարել 2 տարբեր կազմակերպություններում, վճարում կատարել մասնատված և այլն):</p>		
<p>ՀՀ Աժ պատգամավոր Արկադի Խաչատրյան</p>	<p>Առանց Օրենսգրքի նոր հայեցակարգի մշակման, հանրային և գործարար շրջանակների հետ քննարկման և առանց հանրային համաձայնության Օրենսգրքի նախագծի ներկայացումը համարվում է անընդունելի:</p> <p>Օրենսգրքի հայեցակարգով պետք է հստակ սահմանվեն հարկային և մաքսային քաղաքականության հիմնական նպատակները, սկզբունքները, քայլերը, դրանց հերթականությունն ու ժամկետները, որով պետք է իրականացվեն բարեփոխումները: Սկզբունքները պետք է հանդիսանան այն ֆիլտրը, որով պետք է իրականացվեն հետագա օրենսդրական փոփոխությունները, ընդ որում պետք է հետագայում բացառվի հռչակված նպատակներին և սկզբունքներին հակասող դրույթների սահմանում Օրենսգրքով:</p>	<p>Ընդունվել է ի գիտություն</p>	<p>Ներկայացվել է հայեցակարգային բնույթի առաջարկություն: Համաձայն ենք այն դիտարկման հետ, որ օրենսդրական համակարգային փոփոխություններին պետք է նախորդեն քննարկված և հաստատված հայեցակարգերը: Կառավարությունը հենց այդ ճանապարհով էլ գնացել է: Մասնավորապես, մինչև նախագծերի փաթեթի մշակումը, նախ, կատարվել են լայնամասշտաբ ու բազմակողմ ուսումնասիրություններ և վերլուծություններ, այնուհետև դրանց արդյունքներով պատրաստվել է ուղենիշային փաստաթուղթ: Ընդ որում, այդ</p>

	<p>Անընդունելի է համարվում «պահի տակ», «ոտքի վրա», իրավիճակային կամ կարճաժամկետ ֆիսկալ խնդիրներ լուծելու նպատակով որոշումների կայացումը և Օրենսգրքում փոփոխությունների կատարումը: Այդպիսի վարքագիծը պարունակում է հեղինակության ռիսկեր Կառավարության համար, խաթարում է վստահության մթնոլորտը, մեծացնում է անորոշության և անկանխատեսելիության ռիսկերը բիզնեսի համար, որի համար չափազանց կարևոր է կայունությունը, կանխատեսելիությունը և ի դեմս պետության վստահելի գործընկեր ունենալու հանգամանքը:</p>	<p>Ընդունվել է ի գիտություն</p>	<p>բոլոր փաստաթղթերը հանրայնացվել են:</p> <p>Ներկայացվել է հայեցակարգային բնույթի առաջարկություն: Մինևույն ժամանակ, հարկ է նկատել, որ նախագծերի փաթեթը ոչ մի դեպքում չի կարող որակվել որպես հապճեպ կայացված որոշումների վրա հիմնված՝ հենց միայն այն պատճառով, որ նախագիծն անցել է աննախադեպ քննարկումների բոլոր հնարավոր փուլերը և շուրջ 1 տարի քննարկվել է բոլոր հնարավոր շահագրգիռ կողմերի հետ: Նախագիծն ԱԺ-ում քննարկվում է արդեն ավելի քան 2.5 ամիս:</p>
	<p>Հարկային և մաքսային քաղաքականությունը պետք է թիրախավորի ոչ միայն զուտ ֆիսկալ՝ «բյուջե լցնելու» խնդիր, այլ նախ և առաջ՝ բարենպաստ գործարար և գրավիչ ներդրումային միջավայրի ձևավորման և երկրի կայուն</p>	<p>Ընդունվել է ի գիտություն</p>	<p>Ներկայացվել է հայեցակարգային բնույթի առաջարկություն: Ընդ որում, նույն սկզբունքներն արտացոլված են նաև Կառավարության կողմից</p>

	<p>տնտեսական զարգացման խնդիր:</p> <p>Հարկային և մաքսային համակարգերը պետք է ապահովեն երեք խնդիրների լուծում՝ գործարար բարենպաստ միջավայրի ձևավորում, ստվերի դեմ արդյունավետ պայքար, եկամուտների կայունության ապահովում: Այդ համակարգերը պետք է լինեն արդյունավետ, պարզ, հասկանալի և կանխատեսելի հարկ վճարողի համար: Հարկային օրենսդրության, հարկման շեմերի և հարկային ռեժիմների հաճախակի փոփոխությունը մեծացնում է անորոշությունը և անկանխատեսելիությունը բիզնեսի համար, ինչը չի կարող նպաստել վստահության մթնոլորտի ձևավորմանը գործարար աշխարհի և պետության միջև:</p> <p>Հարկային բեռի նվազեցումը, վարչարարության արդյունավետության բարձրացումը, «մահակի» քաղաքականությունից գործընկերության քաղականությանն անցումը, ինչպես նաև տնտեսության մրցունակության բարձրացումը, արտահանելի հատվածի, այդ թվում՝ զբոսաշրջության համար, փոքր և</p>	<p>Ընդունվել է ի գիտություն</p>	<p>պատրաստված և հրապարակված այն ուղենիշային փաստաթղթում, որը հիմք է հանդիսացել նախագծերի փաթեթի մշակման համար:</p> <p>Ներկայացվել է հայեցակարգային բնույթի առաջարկություն: Ընդ որում, նույն սկզբունքներն արտացոլված են նաև Կառավարության կողմից պատրաստված և հրապարակված այն ուղենիշային</p>
--	--	-------------------------------------	--

	<p>միջին բիզնեսի, տարածքային համաչափ զարգացման, ներառական տնտեսական աճի համար բարենպաստ պայմանների ստեղծումը պետք է հանդիսանան կարևորագույն խնդիրները, որոնք պետք է լուծվեն Օրենսգրքում փոփոխություններ մշակելիս:</p>		<p>փաստաթղթում, որը հիմք է հանդիսացել նախագծերի փաթեթի մշակման համար:</p>
	<p>Պետք է սովորել հարկ վճարել և պետք է ձևավորել հարկ վճարելու մշակույթ: Դրա վրա ազդում են երկու կարևոր հանգամանք՝ վճարված հարկերի թափանցիկ, նպատակային և արդյունավետ ծախսումը և հարկերը հավաքագրելիս արդարության և բոլոր հարկ վճարողների՝ օրենքի առջև հավասար լինելու սկզբունքի ապահովումը:</p>	<p>Ընդունվել է ի գիտություն</p>	<p>Ներկայացվել է հայեցակարգային բնույթի առաջարկություն: Ընդ որում, նույն սկզբունքներն արտացոլված են նաև Կառավարության կողմից պատրաստված և հրապարակված այն ուղենիշային փաստաթղթում, որը հիմք է հանդիսացել նախագծերի փաթեթի մշակման համար:</p>
	<p>Պետք է ներողամիտ կամ մեղմ գտնվել անզգուշությամբ կատարված խախտումների նկատմամբ, և խիստ՝ հարկերից չարամտորեն խուսափողների նկատմամբ: Քրեական օրենսգրքով նախատեսված համապատասխան դրույթները (205-րդ հոդվածը) ենթակա են</p>	<p>Ընդունվել է ի գիտություն</p>	<p>Ներկայացվել է հայեցակարգային բնույթի առաջարկություն, որը, սակայն, քննարկման ներկայացված նախագծերի փաթեթի հետ ուղղակի առնչություն չունի:</p>

	<p>վերանայման: Ստվերային տնտեսության համար հարմարեցված այդ դրույթը պետք է փոխարինվի տնտեսական (ֆինանսական) պատասխանատվության խիստ միջոցներով:</p>		
	<p>Պետք է փոխվի հարկային ծառայողի վերաբերմունքը հարկ վճարողի նկատմամբ: Անհրաժեշտ է հաստատել գործընկերային հարաբերություններ գործարարի հետ, որովհետև պետությունը պակաս շահագրգռված չէ գործի զարգացման, աշխատատեղերի ստեղծման հարցում, քան ինքը՝ գործարարը: Պետք է անցում կատարել պատժիչ քաղաքականությունից կանխարգելիչ, համագործակցող քաղաքականության:</p> <p>Անհրաժեշտ է վերանայել նաև հարկային և մաքսային ծառայողների վարձատրության համակարգը:</p> <p>Գործարարության զարգացումը հանդիսանում է երկրի տնտեսական զարգացման, գործազրկության կրճատման, եկամուտների ավելացման, սոցիալական խնդիրների լուծման հիմնական ուղին: Հետևաբար, գործարարությունը,</p>	<p>Ընդունվել է ի գիտություն</p>	<p>Ներկայացվել է հայեցակարգային բնույթի առաջարկություն, որը, սակայն, քննարկման ներկայացված նախագծերի փաթեթի հետ ուղղակի առնչություն չունի:</p>

	<p>գործարարներն ու ներդրողները պետք է գտնվեն պետության հոգատար ուշադրության կենտրոնում:</p>		
	<p>Անհրաժեշտ է գերծ մնալ արտադրության գործոնների (հումք, սարքավորումներ, տեխնոլոգիաներ, վառելիք (բենզին, դիզելային վառելիք, սեղմված բնական գազ), քսայուղեր և այլն) հարկման բեռի ավելացումից, ինչից զգալիորեն կախված են տեղական արտադրողի մրցունակությունը, տրանսպորտային ծախսերը, բեռնափոխադրումների արժեքը, գյուղատնտեսական տեխնիկայի շահագործման ծախսերը և այլն, ինչպես, նաև, առհասարակ, հասարակության լայն շերտերի սոցիալական վիճակը:</p> <p>Հարկային բեռը կարող է տեղափոխվել դեպի վերջնական սպառման այնպիսի ապրանքներ և ծառայություններ, որոնք չեն հանդիսանում առաջին անհրաժեշտության և սոցիալական նշանակության ապրանքներ կամ չեն հանդիսանում այնպիսի ծառայություններ, որոնցից օգտվում են առավելապես փոքր և միջին բիզնեսները:</p>	<p>Ընդունվել է ի գիտություն</p>	<p>Հարկ է նկատել, որ առաջարկությամբ ներկայացված ապրանքների մասով նախագծով առաջարկվող ակցիզային հարկի դրույքաչափերը ենթադրում են ոչ թե հարկային բեռի ուղղակի բարձրացում, այլ ներկայումս կիրառվող խառը համակարգից (տոկոսային և հաստատուն դրույքաչափեր) միայն հաստատուն դրույքաչափերի կիրառության վրա հիմնված համակարգին անցում՝ հիմքում ունենալով յուրաքանչյուր ապրանքի համար հաշվարկված՝ ակցիզային հարկի հաստատուն դրույքաչափերը:</p> <p>Ինչ վերաբերում է ակցիզային հարկի դրույքաչափերը տարեկան 4 տոկոս ավելացնելու առաջարկության</p>

	<p>Ցանկացած այդպիսի ապրանքի թանկացումը կարող է բերել առանձին ճյուղի մրցունակության անկման, հանրության լայն խավերի, հատկապես սոցիալապես խոցելի խավերի աղքատացման և կյանքի կենսամակարդակի էլ ավելի անկման, փոքր և միջին բիզնեսի վիճակի վատթարացման: Մինչդեռ տնտեսական հեղափոխությունը և ներառական տնտեսական աճը ճիշտ հակառակի մասին է:</p> <p>Այս առումով, առանձնահատուկ զգուշավորություն է պետք ցուցաբերել արտահանելի առաջնահերթ ոլորտի արտադրանք հանդիսացող և դեռևս ներքին մրցունակության խնդիր ունեցող առանձին արտադրանքների նկատմամբ (այդ թվում՝ առանձին գնային սեգմենտներին պատկանելիության մասով): Այս համատեքստում, նշվում է, որ գինեգործությունը որպես առաջնահերթ ճյուղ դիտարկող երկրում առնվազն չպետք է հարկային բեռ ավելացվի այդ ճյուղի արտադրանքի (գինու) վրա, մինչդեռ անհրաժեշտ է քննարկել ճիշտ հակառակը՝</p>		<p>հիմնավորումներին, ապա այդ կապակցությամբ հայտնում ենք, որ դրանք ներկայացվել են «Լուսավոր Հայաստան» խմբակցության նույնաբովանդակ առաջարկության շրջանակներում:</p>
--	---	--	---



	<p>ակցիզային հարկը նվազեցնելու հարցը:          Հաշվի առնելով վերոգրյալը՝ անընդունելի է համարվում առաջիկա տարիներին տարեկան 4%-ով ակցիզային հարկի բարձրացումը՝ պտուղներից և հատապտուղներից պատրաստված օղու, կոնյակի, բրենդիի, գարեջրի, գինիների, քսայուղի, բենզինի , դիզելային վառելիքի, սեղմված բնական գազի և նավթամթերքի համար:</p>		
	<p>Պետք է բարենպաստ պայմաններ ստեղծվեն արտահանելի հատվածի զարգացման համար (SS, արդյունաբերություն, գյուղատնտեսություն, զբոսաշրջություն) ոչ արտահանելի հատվածի (առևտուր, ծառայություններ) համեմատ:          Մինևույն ժամանակ, նշվում է, որ հանրային սնունդը, հյուրանոցային ծառայությունները և այլ հարակից ծառայություններն արտահանելի են և կարևոր են զբոսաշրջության զարգացման համար:</p>	<p>Ընդունվել է          ի գիտություն</p>	<p>Ներկայացվել է          հայեցակարգային բնույթի առաջարկություն: Ընդ որում, նույն սկզբունքներն արտացոլված են նաև Կառավարության կողմից պատրաստված և հրապարակված այն ուղենիշային փաստաթղթում, որը հիմք է հանդիսացել նախագծերի փաթեթի մշակման համար:          Ինչ վերաբերում է հանրային սննդի և հյուրանոցային գործունեության համար նպաստավոր</p>

			<p>պայմանների ձևավորմանը, ապա հայտնում ենք, որ նախագծերի փաթեթով այս ոլորտների համար նույնպես կատարվում են էական բարելավումներ:</p>
	<p>Անհրաժեշտ է նախատեսել նպատակային ներդրումային քաղաքականությանը նպաստող դրույթներ՝ առաջնահերթությունը տալով իրենց հետ նոր տեխնոլոգիաներ և գիտելիք բերող ներդրողներին, նախ և առաջ տրանսնացիոնալ կորպորացիաներին և այլ ինստիտուցիոնալ ներդրողներին:</p>	<p>Ընդունվել է ի գիտություն</p>	<p>Ներկայացվել է հայեցակարգային բնույթի առաջարկություն, որի վերաբերյալ առարկություններ չկան:</p>
	<p>Բարենպաստ պայմաններ (այդ թվում՝ հարկային խթաններ) պետք է ստեղծել արդյունաբերության, արտադրական պրոցեսների տեխնոլոգիական վերազինման համար, բարձր արտադրողական գյուղատնտեսության անցում կատարելու համար:</p>	<p>Ընդունվել է ի գիտություն</p>	<p>Ներկայացվել է հայեցակարգային բնույթի առաջարկություն, որի վերաբերյալ առարկություններ չկան:</p>
	<p>Երկրի տարածքային համաչափ զարգացմանը և ներառական տնտեսական աճին նպաստելու համար նպատակահարմար է ստեղծել նաև հարկային խթաններ ներդրումները դեպի</p>	<p>Առաջին առաջարկությունն ընդունվել է ի գիտություն</p>	<p>Գործող օրենսդրության համաձայն՝ սահմանամերձ համայնքների համար սահմանված է հարկերից ազատման արտոնության լայն</p>

	<p>մարզեր ուղղորդելու համար: Պետք է աջակցել մարզերում տնտեսական զարգացմանը և ներառական տնտեսական աճին նպաստող բիզնես ծրագրերին:</p> <p>Ելնելով այն հանգամանքից, որ մարզերում իրականացվող լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները իրենց շրջանառությամբ և ծավալներով համադրելի չեն Երևանում, իսկ առանձին դեպքերում հատկապես Երևանի կենտրոնում իրականացվող նույն գործունեության հետ, անհրաժեշտ է տվյալ գործունեությամբ զբաղվելու համար լիցենզիայի կամ թույլտվության համար նախատեսված պետական տուրքը օրենքով սահմանել՝ տրոհելով այն ըստ գործունեության վայրերի (Երևան, մարզկենտրոններ, այլ քաղաքներ, գյուղական համայնքներ, սահմանամերձ համայնքներ, սահմանապահ համայնքներ):</p>	<p>Երկրորդ առաջարկությունն ընդունելի չէ</p>	<p>շրջանակ:</p> <p>Ինչ վերաբերում է պետական տուրքին, ապա պետք է նկատի ունենալ, որ պետական տուրքը պետական մարմինների կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճար է: Հետևաբար, ներկայացված առաջարկության ընդունումը կնշանակի, որ պետական միևնույն մարմինը մարզերում գրանցված տնտեսավարող սուբյեկտներին մատուցում է այլ ծառայություններ, ինչը տրամաբանական չէ: Բացի այդ, տնտեսական ակտիվության աստիճանից կախված՝ հարկային պարտավորությունների մեծությունն արդեն փոխվում է, հետևաբար տնտեսապես ակտիվ գոտում և ոչ ակտիվ գոտում միևնույն գործունեությունն իրականացնող տնտեսավարող սուբյեկտներն արդեն իսկ</p>
--	--	---	---

	<p>Նպատակահարմար է քննարկել պետական բյուջե գանձվող հարկերի առանձին տեսակի կամ տեսակների (օրինակ՝ շրջանառության հարկի և (կամ) շահութահարկի) մի մասը համապատասխան համայնքային բյուջե ուղղելու հարցը (բացառությամբ՝ համակարգաստեղծ կազմակերպությունների շահութահարկի, որոնց ցանկը կարող է սահմանել Կառավարությունը), որը կլուծի համայնքների ֆինանսական անկախության և ինքնուրույնության, հետևաբար նաև անկախության հարցը, ինչպես նաև կստեղծի լրացուցիչ խթաններ համայնքի կողմից ներդրումների ներգրավման, ձեռնարկատիրության զարգացման, համայնքային հողի և այլ գույքի տրամադրման միջոցով բիզնեսի հետ գործընկերության հաստատման, համատեղ ծրագրեր իրականացնելու և համայնքի եկամուտները ավելացնելու ուղղությամբ: Սա կարող է լինել երկրի տարածքային</p>	<p>Ընդունվել է ի գիտություն</p>	<p>գտնվում են տարբեր հարկային բեռի միջավայրում:</p> <p>Ներկայացվել է հայեցակարգային բնույթի առաջարկություն, որը, սակայն, քննարկման ներկայացված նախագծերի փաթեթի հետ ուղղակի առնչություն չունի:</p>
--	---	---------------------------------	--

	<p>համաչափ զարգացմանն ուղղված գործուն քայլ:</p> <p>Համահարթ եկամտային հարկի ներդրման նպատակն է բարձր արտադրողական և բարձր վարձատրվող աշխատանքի խթանումը, ինչպես նաև ստվերային աշխատավարձերի կրճատման կամ ստվերից դուրս բերելու համար խթանների ստեղծումը:</p> <p>Այդ կապակցությամբ, նշվում է, որ միայն համահարթ եկամտային հարկի սահմանումը բավարար խթաններ չի ստեղծելու իրական աշխատավարձերը ստվերից դուրս բերելու համար: Հետևաբար անհրաժեշտ են նաև լրացուցիչ գործիքներ: Այդպիսինն է նվազագույն աշխատավարձի բարձրացումը, սահմանելով այն առնվազն նվազագույն սպառողական զանբյուղի չափով, որի միջոցով կարող ենք լուրջ քայլ կատարել հետևյալ հարցերի լուծման ուղղությամբ.</p> <p>1)ապահովել որոշակի սոցիալական արդարություն տասնյակ հազարավոր քաղաքացիների համար, որոնք ստանում են աղքատության շեմից ցածր աշխատավարձ՝ ավելացնելով նրանց եկամուտը,</p> <p>2)կրճատել երկրում առկա աղքատության ծավալները,</p>	<p>Ընդունվել է ի գիտություն</p>	<p>Ներկայացվել է հայեցակարգային բնույթի առաջարկություն, որը, սակայն, քննարկման ներկայացված նախագծերի փաթեթի հետ ուղղակի առնչություն չունի:</p> <p>Մինևույն ժամանակ, տեղեկացվում է, որ Համաշխարհային բանկի կողմից կատարված վերլուծությունների համաձայն՝ նախագծերի փաթեթի ընդունումը միջին և երկար ժամկետում, այլ հավասար պայմաններում, կնպաստի աղքատության մակարդակը 2 տոկոսային կետով կրճատելու համար:</p>
--	--	-------------------------------------	--

	<p>3) հաղթահարել այնպիսի մի խայտառակ երևույթ, որը կոչվում է աշխատող մարդու աղքատություն,</p> <p>4) լրացուցիչ խթաններ ստեղծել ՀՀ-ում ձևավորված աշխատավարձերի մակարդակները (հատկապես ստորին հատվածում) դեպի վերև տեղաշարժելու համար, ինչի արդյունքում հնարավոր է եկամտային հարկով հարկման բազայի ընդլայնում և պետական բյուջեի մուտքերի որոշակի չափով ավելացում:</p>		
	<p>Եկամտային հարկի դրույքաչափի նվազեցմանը զուգահեռ պետք է ներդրվի նոր միասնական գույքահարկի համակարգը, որի պարագայում գույքահարկը կհաշվարկվի անշարժ գույքի շուկայականին մոտ հաշվարկված կադաստրային արժեքի հիման վրա հարկման պրոգրեսիվ սանդղակով, ինչը կապահովի արժեքին համապատասխան գույքի արդարացումը հարկումը և համայնքային բյուջեների եկամուտների ավելացումը:</p>	<p>Ընդունելի է</p>	<p>Եկամտային հարկի համահարթ մոդելի ներդրման համատեքստում Կառավարությունը մեծապես կարևորում է գույքային հարկերի համակարգային բարեփոխումների կատարման անհրաժեշտությունը՝ միտված բարձրարժեք գույքի համարժեք հարկման մեխանիզմների ներդրմանը, ինչը նաև հնարավորություն կընձեռի արդյունավետ ձևով իրականացնել պետության վերաբաշխիչ գործառույթը:</p> <p>Այս առումով, տեղեկացվում է, որ առաջիկայում Կառավարությունը</p>

			<p>նախատեսում է հանդես գալ համապատասխան օրենսդրական փոփոխություններ կատարելու առաջարկությամբ:</p>
	<p>Անհրաժեշտ է քննարկել Հայաստանում չշահագործվող արտադրական նշանակության շենքերի և շինությունների, չմշակվող գյուղատնտեսական նշանակության հողերի և առանձին տեսակի անավարտ շինարարության օբյեկտների լրացուցիչ միասնական գույքահարկ և հողի հարկ սահմանելու նպատակահարմարությունը:</p>	<p>Ընդունվել է ի գիտություն</p>	<p>Հաշվի առնելով այն, որ ներկայացված առաջարկությունը նախագծի կարգավորման առարկային չի առնչվում, առաջարկում ենք այս հարցը քննարկել գույքային հարկերի համակարգի վերանայմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների շրջանակներում:</p>
	<p>Առանձին գործունեության տեսակով զբաղվելու համար լիցենզիայի կամ թույլտվության համար նախատեսված պետական տուրքի տնտեսագիտորեն չհիմնավորված բարձրացումը կարող է դիտարկվել որպես խոչընդոտ տվյալ շուկա մուտք գործելու համար: Այն կարող է բերել շուկայի փոքր և միջին մասնակիցների փակմանը կամ կլանմանը խոշորների կողմից, ինչպես նաև այդ գործունեության առհասարակ դադարեցմանը մարզերում,</p>	<p>Չի ընդունվել</p>	<p>Եթե դիտարկումը վերաբերում է տնտեսության ֆինանսավարկային հատվածի կազմակերպությունների գործունեության համար անհրաժեշտ լիցենզիայի մասով վճարվող պետական տուրքի դրույքաչափերին, ապա տեղեկացվում է, որ այդ հարցը բազմակողմանիորեն քննարկվել է ԱԺ տնտեսական հարցերի</p>

	<p>ինչն ուղղակիորեն հակասում է Կառավարության հռչակած ազատ մրցակցության խթանման, փոքր և միջին ձեռներեցության զարգացման և տարածքային համաչափ զարգացման հռչակված նպատակներին:</p>		<p>մշտական հանձնաժողովի նիստերում, այդ թվում՝ ոլորտի ներկայացուցիչների և Կենտրոնական բանկի ներկայացուցիչների մասնակցությամբ: Քննարկման արդյունքներով, հաշվի առնելով նաև ֆինանսավարկային հատվածի կազմակերպությունների առանձին խմբերի գործունեության ֆինանսական արդյունքները, կայացվել են համապատասխան որոշումներ, որոնք մեր կարծիքով հավասարակշռված են, բխում են արդարության սկզբունքից և որոշակիորեն լուծում են նախագծերի փաթեթի ընդունման հիմնավորմամբ հետապնդվող նպատակներին հասնելու խնդիրը:</p>
	<p>Նպատակահարմար է քննարկել հարկային խթաններ ստեղծելու հարցը (եկամտային հարկի արտոնյալ դրույքաչափ</p>	<p>Ընդունվել է ի գիտություն</p>	<p>Գործող օրենսդրության համաձայն՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում</p>



	<p>սահմանելու միջոցով) մարզային համայնքներում, սահմանամերձ և սահմանապահ համայնքներում աշխատող բժիշկների և այլ մասնագետների համար, որոնց պահանջված լինելու հանգամանքը և մասնագիտությունների ցանկը հաստատված կլինի Կառավարության կողմից, ինչպես նաև նշված համայնքներում գրանցված և այնտեղ գործող SS ոլորտի սկսնակ ընկերություններում աշխատող մասնագետների համար:</p> <p>Ընդ որում, նշյալ առաջարկի նպատակը երկրի տարածքային համաչափ զարգացմանը, մասնագետների պակասի խնդրի լուծմանը նպաստելն է, ինչպես նաև պայմանների ստեղծումն է մարզային համայնքներում SS ոլորտում նորարարական գաղափարների առաջացման, մասնագիտական կարողությունների զարգացման և դրանց իրացման համար լրացուցիչ հնարավորություններ և ներդրումային գրավչություն ձևավորելու համար:</p>		<p>գործող՝ սկսնակ տնտեսավարող սուբյեկտները, անկախ տարածքային պատկանելիությունից, արդեն իսկ օգտվում են լայն շրջանակի հարկային արտոնություններից:</p> <p>Ինչ վերաբերում է որոշակի ոլորտներում և որոշակի համայնքներում իրականացվող աշխատանքի դիմաց ստացվող եկամուտները տարբերակված՝ եկամտային հարկի ավելի ցածր դրույքաչափով հարկելու առաջարկությանը, ապա գտնում ենք, որ այն խնդրի լուծման լավագույն ճանապարհը չէ, քանի որ հակադրվում է հարկման արդարության ու հավասարության սկզբունքներին: Այս առումով, կարծում ենք, որ բարձրացված խնդրի լուծման հնարավորությունները պետք է քննարկել ավելի հասցեական՝ բյուջետային աջակցության գործիքակազմի համատեքստում:</p>
--	--	--	---

	<p>Նպատակահարմար է քննարկել նաև հարկային խթաններ ստեղծելու հարցը (եկամտային հարկի արտոնյալ դրույքաչափ սահմանելու միջոցով) մայրերի աշխատանքը խթանելու համար (ընդ որում՝ արտոնյալ դրույքաչափը կարող է կախվածության մեջ դրվել, օրինակ՝ անչափահաս երեխաների քանակից), ինչպես գործազուրկ անձանց աշխատանքը ժամանակավորապես խթանելու համար (օրինակ՝ 6 ամիս եկամտային հարկի արտոնյալ դրույքաչափով հարկելու դրույթի սահմանում):</p>	<p>Ընդունելի չէ</p>	<p>Մայրերի և գործազուրկների աշխատանքը խթանելու համար աշխատանքի դիմաց ստացվող եկամուտները տարբերակված՝ եկամտային հարկի ավելի ցածր դրույքաչափով հարկելու առաջարկությունն ընդունելի չէ, քանի որ հակադրվում է հարկման արդարության ու հավասարության սկզբունքներին: Այս առումով, կարծում ենք, որ բարձրացված խնդրի լուծման հնարավորությունները պետք է քննարկել ավելի հասցեական՝ բյուջետային աջակցության գործիքակազմի համատեքստում՝ սոցիալական աջակցության ծրագրերի շրջանակներում:</p>
	<p>Անհրաժեշտ է հարկային խթաններ ստեղծել ինժեներական, գիտահետազոտական, փորձարարական-կոնստրուկտորական և փորձարարական-տեխնոլոգիական աշխատանքներ կատարելու համար երկրի նորարարական,</p>	<p>Ընդունելի չէ</p>	<p>Առաջարկությամբ ներկայացված գործունեության տեսակները չեն բնութագրվում միկրոձեռնարկատիրության հատկանիշներով:  Բացի այդ,</p>

	<p>ստեղծարար և տեխնոլոգիական զարգացումն ապահովելու նպատակով:</p> <p>Նախագծի 42-րդ հոդվածով լրացվող Օրենսգրքի 267-րդ հոդվածի 5-րդ մասի 2)-րդ կետի համաձայն՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտներ չեն կարող համարվել ի թիվս այլ ծառայություններ մատուցողների՝ նաև ինժեներական, տեղեկատվության մշակման և փոխանցման, գիտահետազոտական, փորձարարական-կոնստրուկտորական և փորձարարական-տեխնոլոգիական աշխատանքներ կատարողները:</p> <p>Նշվում է, որ բարձր տոխնոլոգիաների ոլորտի զարգացումը տնտեսական զարգացման առաջնահերթություն հռչակած երկրում պետք է ավելի բարենպաստ պայմաններ ստեղծվեն հատկապես նշյալ աշխատանքների կատարման համար: Հետևաբար, առաջարկվում է Նախագծից նշյալ աշխատանքների մասով սահմանված սահմանափակումը հանել:</p>		<p>գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքներ իրականացնողների և այդ աշխատանքների արդյունքներից օգտվողների համար Հարկային օրենսգրքով արդեն իսկ սահմանված է հարկային արտոնությունների բավական լայն շրջանակ: Մասնավորապես՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1) այդ աշխատանքների կատարումն ազատված է ԱԱՀ-ից,</li> <li>2) այդ աշխատանքների վրա կատարվող ծախսերը հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցվում են կատարման տարվա ընթացքում ամբողջությամբ,</li> <li>3) այդ աշխատանքների արդյունքում ստեղծվող ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն նվազագույն ժամկետները որոշում են հարկատուները:</li> </ol>
	<p>Նախագծի 42-րդ հոդվածով լրացվող Օրենսգրքի 267-րդ հոդվածի 5-րդ մասի 8)-րդ կետի համաձայն՝</p>	<p>Ընդունելի է</p>	<p>Առաջարկության ընդունման դեպքում աշխատանքի ընդունված</p>

<p>միկրոձեռնարկատիրության սուբյեկտներ չեն կարող համարվել իրենց գործունեության ընթացքում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այլ ֆիզիկական անձանց աշխատանքն օգտագործող անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք:</p> <p>Այդ կապակցությամբ, նշվում է, որ խնդրո առարկա սահմանափակումը հիմնավորված չէ Օրենսգրքի 3-րդ հավելվածով սահմանված ցանկում ընդգրկված գործունեության մի շարք տեսակների իրականացման մասով, որոնք, ի դեպ, կարող են լինել իրականացվել միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվող՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից, և որոնց պարագայում հաճախ օգտագործվում է ընտանիքի անդամների աշխատանքը (օրինակ՝ դարբնոցային գործունեության, զբոսաշրջային տների միջոցով հյուրանոցային ծառայությունների մատուցման և այլ դեպքերում): Հետևաբար, առաջարկվում է Նախագծով նախատեսված նշյալ սահմանափակումը</p>	<p>ֆիզիկական անձի մասով առաջանալու են եկամտային հարկի և սոցիալական վճարի պարտավորություններ, որոնց հաշվարկումն ու վճարումը այդ ֆիզիկական անձը պետք է կատարի ինքնուրույնաբար, քանի որ իր գործատուն նույնպես անհատ ձեռնարկատեր չհամարվող ֆիզիկական անձ է, հետևաբար չի կարող հանդես գալ որպես հարկային գործակալ:</p> <p>Հարկ է նկատի ունենալ նաև «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» ՀՀ օրենքով, «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով սահմանված նպաստների (այդ թվում՝ մայրության նպաստի) հետ կապված խնդիրները, արձակուրդային գումարների, վերջնահաշվարկների, գործուղումների հավելումների հարցերը, որոնք</p>
--	---

	<p>չտարածել ընտանիքի անդամների աշխատանքը օգտագործելու դեպքերի վրա:</p>		<p>անխուսափելիորեն առաջանալու են ներկայացված առաջարկությունն ընդունելու պարագայում: Մյուս կողմից, առաջարկում ենք հաշվի առնել այն, որ խնդիրն ունի շատ պարզ ու արագ լուծում, այն է՝ գործատուն հաշվառվում է որպես անհատ ձեռնարկատեր և խնդիրը լուծվում է նախագծով առաջարկվող կարգավորումների շրջանակներում:</p>
	<p>Օրենսգրքի 3-րդ հավելվածով սահմանված է այն գործունեության տեսակների ցանկը, որոնք կարող են իրականացվել միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվող՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից: Նշյալ ցանկի 13-րդ կետով նախատեսված է զբոսաշրջային տների միջոցով հյուրանոցային ծառայությունների մատուցման գործունեությունը:</p> <p>Այդ կապակցությամբ, նշվում է, որ հատկապես գյուղական բնակավայրերում զբոսաշրջային տների միջոցով</p>	<p>Ընդունվել է մասնակի</p>	<p>Նախաճաշի, ճաշի և ընթրիքի մասով նախագծում կատարվել են համապատասխան լրացումներ:</p>

	<p>հյուրանոցային ծառայությունների մատուցման հետ մեկտեղ զբոսաշրջիկներին մատուցվում են նաև նախաճաշ, ճաշ և ընթրիք, ինչպես նաև բազմաթիվ այլ հարակից ծառայություններ:</p> <p>Միկրոձեռնարկատիրության շրջանակներում զբոսաշրջային տների գործունեության հետ մեկտեղ նշյալ ծառայությունների համալիր մատուցման հնարավորության ընձեռումը թույլ կտա զարգացնել գյուղական և էկոտուրիզմը, ներքին զբոսաշրջությունը, ինչպես նաև կնպաստի երկրի տարածքային համաչափ զարգացմանը:</p> <p>Մինչդեռ, գյուղական համայնքում զբոսաշրջային տանը հանգրվանած զբոսաշրջիկին նախաճաշի մատուցումը որպես հանրային սննդի օբյեկտի գործունեություն դիտարկելը և շրջանառության հարկով հարկելը համարվում է անընդունելի՝ հաշվի առնելով այն, որ դա արժեզրկում է զբոսաշրջային տներին, միկրոձեռնարկատիրության սուբյեկտի կարգավիճակ տալով, հարկային արտոնության տրամադրման</p>		
--	---	--	--

	<p>կարևորությունը:</p> <p>Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է նշյալ ցանկի 13-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«13. Ջրոսաշրջային տների միջոցով հյուրանոցային ծառայությունների մատուցում, իսկ գյուղական համայնքներում գտնվող զբոսաշրջային տների պարագայում նաև այդ զբոսաշրջային տանը հանգրվանած զբոսաշրջիկներին նախաճաշի, ճաշի կամ ընթրիքի մատուցում, ինչպես նաև հեծանիվների, ձիերի, ձկնորսության և այլ պարագաների վարձույթի, արդուկի, լվացքի, տարածքում էքսկուրսիաների, ավտոմեքենայով տրանսֆերի և հյուրանոցային ծառայություններին հարակից այլ ծառայությունների մատուցում:»:</p>		
	<p>Նախագծով չեն տրվում լուծումներ Աժ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից կազմակերպված քննարկումների ընթացքում ՓՄՁ սուբյեկտների ներկայացուցիչների կողմից բարձրացված մի շարք կարևոր խնդիրներին:</p>	<p>Ընդունվել է ի գիտություն</p>	<p>Ազգային ժողովի տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նիստերի ընթացքում խնդրո առարկա հարցերը մանրամասն քննարկվել են: Որոշ հարցերի մասով նախագծի լրամշակված</p>

			<p>տարբերակում առաջարկվում են կոնկրետ լուծումներ (օրինակ, նախագծով նախատեսվել է, որ կանխիկ վճարմամբ գործարքների կատարման սահմանափակումները չեն կիրառվում այն գործարքների մասով, որոնք կփաստաթղթավորվեն գնորդի ՀՎՀՀ-ի նշում պարունակող ՀԴՄ կտրոններով): Եղել են նաև այլ առաջարկություններ, որոնք չեն ընդունվել՝ պայմանավորված դրանց խնդրահարույց բնույթով, ինչպես նաև ընդհանուր քաղաքականությունից շեղվող հատկանիշներով:</p>
	<p>Նշվում է, որ չափազանց կարևորվում է ՀՀ ֆինանսների նախարարության կարողությունների զարգացումը, Կենտրոնական բանկի և միջազգային կառույցների աջակցությամբ մաթեմատիկական մոդելների մշակումը՝ ֆիսկալ քաղաքականության, հարկային և մաքսային դրույքաչափերի փոփոխության,</p>	<p>Ընդունվել է ի գիտություն</p>	<p>Ներկայացվել է հայեցակարգային բնույթի առաջարկություն, որը, սակայն, քննարկման ներկայացված նախագծերի փաթեթի հետ ուղղակի առնչություն չունի:</p>



	<p>հարկաբյուջետային այլ գործիքների կիրառման մակրոտնտեսական ազդեցությունը գնահատելու նպատակով, ինչը հնարավորություն կտա գնահատել այդ բնագավառում պետական քաղաքականության ազդեցությունը տնտեսության վրա:</p>		
	<p>Անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել կորպորատիվ կառավարման մշակույթի զարգացման և կազմակերպությունների թափանցիկությունը ապահովելու ուղղությամբ:</p>	<p>Ընդունվել է ի գիտություն</p>	<p>Ներկայացվել է հայեցակարգային բնույթի առաջարկություն, որը, սակայն, քննարկման ներկայացված նախագծերի փաթեթի հետ ուղղակի առնչություն չունի:</p>
<p>ՀՀ ԱԺ պատգամավոր Միքայել Մելքունյան</p>	<p>Առաջարկվում է նախագծի 21-րդ հոդվածից հետո լրացնել նոր հոդված հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«Հոդված 22. Օրենսգրքի 78-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>5. «Բաց թողնում` ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների համար Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված ԱԱՀ-ի գումարները</p>	<p>Չի ընդունվել</p>	<p>Նշյալ առաջարկության վերաբերյալ ՀՀ կառավարության դիրքորոշումը ներկայացվել է առաջարկության հեղինակի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված` «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (Պ-096-09.04.2019-ՏՀ-011/0)</p>

	<p>Հայաստանի Հանրապետության պետական բյուջե են վճարվում մինչև ապրանքները Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու) օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ՝ որպես հարկային մարմնին վճարվող գումարներ:»:</p>		<p>քննարկման շրջանակներում:</p>								
	<p>Առաջարկվում է նախագծի 32-րդ հոդվածով սահմանված Օրենսգրքի 150-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«1. Եթե սույն հոդվածի 2-15-րդ մասերով այլ բան սահմանված չէ, ապա հարկման բազայի նկատմամբ եկամտային հարկը հաշվարկվում է հետևյալ դրույքաչափերով.</p> <table border="1" data-bbox="506 935 1088 1401"> <thead> <tr> <th data-bbox="506 935 833 1088">Ժամանակահատված</th> <th data-bbox="833 935 1088 1088">Եկամտային հարկի դրույքաչափը</th> </tr> </thead> <tbody> <tr> <td data-bbox="506 1088 833 1193">2020 թվականի հունվարի 1-ից</td> <td data-bbox="833 1088 1088 1193">22 տոկոս</td> </tr> <tr> <td data-bbox="506 1193 833 1299">2021 թվականի հունվարի 1-ից</td> <td data-bbox="833 1193 1088 1299">21.33 տոկոս</td> </tr> <tr> <td data-bbox="506 1299 833 1401">2022 թվականի հունվարի 1-ից</td> <td data-bbox="833 1299 1088 1401">20.66 տոկոս</td> </tr> </tbody> </table>	Ժամանակահատված	Եկամտային հարկի դրույքաչափը	2020 թվականի հունվարի 1-ից	22 տոկոս	2021 թվականի հունվարի 1-ից	21.33 տոկոս	2022 թվականի հունվարի 1-ից	20.66 տոկոս	<p>Չի ընդունվել</p>	<p>Ներկայացված առաջարկությունը ենթադրում է եկամտային հարկի դրույքաչափերի՝ ավելի արագ նվազեցում, ինչը, բնականաբար, կարճաժամկետ հեռանկարում հանգեցնելու է պետական բյուջեի եկամուտների՝ ավելի մեծ չափով կորուստների: Հետևաբար, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ վերջնարդյունքում առաջարկվում է սահմանել եկամտային հարկի նույն դրույքաչափը (20 տոկոս)՝ գտնում ենք, որ նախագծով առաջարկվող մոտեցումն ավելի հավասարակշռված է հարկաբյուջետային</p>
Ժամանակահատված	Եկամտային հարկի դրույքաչափը										
2020 թվականի հունվարի 1-ից	22 տոկոս										
2021 թվականի հունվարի 1-ից	21.33 տոկոս										
2022 թվականի հունվարի 1-ից	20.66 տոկոս										

	2023 թվականի հունվարի 1-ից	20 տոկոս		կայունության տեսանկյունից:
	Առաջարկվում է նախագծի 41-րդ հոդվածով սահմանված «24» թիվը փոխարինել «34» թվով:		Չի ընդունվել	Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ շրջանառության հարկ վճարողների շուրջ 93 տոկոսի իրացման շրջանառության տարեկան մեծությունը չի գերազանցում 36 մլն. դրամը: Սա նշանակում է, որ առաջարկության ընդունման դեպքում, այլ հավասար պայմաններում, շուրջ 65 հազ. տնտեսավարող սուբյեկտներ շրջանառության հարկի համակարգից կարող են տեղափոխվել միկրոձեռնարկատիրության հարկման համակարգ: Եթե անգամ ենթադրենք, որ դրանց կեսը զբաղվում է այնպիսի գործունեության տեսակով, որը չի կարող լինել միկրոձեռնարկատիրության հարկման համակարգում, ապա,
	Առաջարկվում է նախագծի 42-րդ հոդվածով սահմանված Օրենսգրքի 56-րդ գլխի խմբագրության 267-րդ հոդվածի 3-րդ մասի «24» թվերը փոխարինել «34» թվերով:			

			<p>միննույն է, առաջարկությունը խիստ խնդրահարույց է:</p> <p>Բացի այդ, գտնում ենք, որ միկրոձեռնարկատիրության համակարգում թույլատրվող գործունեության տեսակների համար տարեկան կտրվածքով 24 մլն. դրամ իրացման շրջանառության առավելագույն շեմը ավելի քան հիմնավորված է՝ հաշվի առնելով մեկ օրվան բաժին ընկնող իրացման շրջանառության չափն ու վերոնշյալ գործունեության տեսակների միջին շահութաբերությունը:</p>
	<p>Առաջարկվում է նախագծի 42-րդ հոդվածով սահմանված Օրենսգրքի 56-րդ գլխի խմբագրության 267-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«3) առևտրի իրականացման վայրերում, առևտրի կենտրոններում և տոնավաճառներում առևտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ զբաղվող</p>	<p>Չի ընդունվել</p>	<p>Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ շուրջ 41 հազ. շրջանառության հարկ վճարողներ զբաղվում են առևտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ: Ընդ որում, նրանց տարեկան իրացման շրջանառության միջին</p>

	<p>կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը, ինչպես նաև անձնական օգտագործման ավտոմեքենաների առևտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ կամ էլեկտրոնային առևտրի շրջանակներում առևտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ զբաղվող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը.»»:</p>	<p>մեծությունը կազմում է ընդամենը 10.7 մլն. դրամ: Այս առումով, առաջարկության ընդունումը գործնականում նշանակում է նշյալ տնտեսավարող սուբյեկտների հիմնական մասին տեղափոխել միկրոձեռնարկատիրության հարկման արտոնյալ համակարգ, ինչն ընդունելի չէ՝ հետևյալ հիմնական նկատառումներով.</p> <p>1) առաջարկության ընդունման դեպքում կստացվի, որ ներքին շուկայում առևտրական գործունեությունը, միտված չլինելով արտահանմանը, հիմնական մասով ազատվում է հարկերից, ինչը որևէ տնտեսագիտական հիմնավորում չունի,</p> <p>2) կխաթարվի միկրոձեռնարկատիրության հարկման արտոնյալ համակարգի հասցեականությունը,</p> <p>3) կմեծանա ամեն գնով իրացման շրջանառությունները թերհայտարարագրելու և միկրոձեռնարկատիրության հարկման արտոնյալ համակարգում անարդարացիորեն «տեղավորվելու» տնտեսական</p>
--	--	---

<p>ՀՀ ԱԺ պատգամավոր Գևորգ Պապոյան</p>	<p>Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Օրենսգրքում կենսաբանական ակտիվների հետ կապված որևէ կարգավորում նախատեսված չէ, բացի այդ, Օրենսգրքի 121-րդ հոդվածում կենսաբանական ակտիվներից բանող անասունները և բազմամյա տնկիները ներառվում են հիմնական միջոցների կազմում և դրանց համար սահմանվում է նվազագույն ամորտիզացիոն ժամկետ՝ առաջարկվում է Օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«19) <b>հիմնական միջոց</b>՝ հաշվապահական հաշվառման համապատասխան միջազգային ստանդարտներով սահմանված հիմնական միջոց, կենսաբանական ակտիվ (բացառությամբ՝ սպառվող կենսաբանական ակտիվի) և ներդրումային գույք.»:</p>	<p>Ընդունվել է ի գիտություն</p>	<p>շարժառիթը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայացված առաջարկությունը բազմակողմանի քննարկում է ենթադրում, առաջարկում ենք առաջարկությանն անդրադառնալ հետագա օրենսդրական փոփոխությունների շրջանակում:</p>
	<p>Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Օրենսգրքում բնամթերային (ոչ դրամական) ձևով արտահայտված գործարքների ու գործառնությունների սահմանման բացակայությունը խնդիրներ է առաջացնում անհատ ձեռնարկատեր և նոտար</p>	<p>Ընդունվել է ի գիտություն</p>	<p>Գտնում ենք, որ բնամթերային (ոչ դրամական) ձևով արտահայտված գործարքների ու գործառնությունների՝ առաջարկվող սահմանումը</p>

	<p>չհանդիսացող ֆիզիկական անձանց բնամթերային (ոչ դրամական) ձևով վճարված եկամուտների մասով՝ առաջարկվում է Օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 67-րդ կետով.</p> <p>«67) բնամթերային (ոչ դրամական) ձևով արտահայտված գործարքներ ու գործառնությունների՝ անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց ակտիվների (բացառությամբ դրամական միջոցների) անհատույց օտարում, ծառայությունների անհատույց մատուցում, այդ ֆիզիկական անձանց համար աշխատանքների անհատույց կատարում, ինչպես նաև անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց ակտիվների (բացառությամբ՝ դրամական միջոցների) օտարում, ծառայությունների մատուցում, նրանց համար աշխատանքների կատարում՝ այդ գործարքների կատարման օրվա դրությամբ շուկայական գնից 20 տոկոս և ավելի ցածր գնով:»:</p>		<p>բնամթերային ձևով արտահայտված գործարքների ու գործառնությունների շրջանակն ամբողջությամբ չի ընդգրկում:</p> <p>Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք բնամթերային ձևով արտահայտված գործարքների ու գործառնությունների սահմանման հստակեցմանն անդրադառնալ հետագա օրենսդրական փոփոխությունների շրջանակներում:</p>
	<p>Հաշվապահական և հարկային</p>	<p>Չի</p>	<p>Եթե խնդիրն այն է, որ</p>

	<p>հաշվառման ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց եկամուտների հայտարարագրման, օրինական դաշտում գործող հաշվապահների և հարկային հաշվառում իրականացնողների համար արդար մրցակցային միջավայր ձևավորելու, ինչպես նաև պետական մարմիններում աշխատողների, մասնավորապես, հարկային ծառայողների կողմից ստվերային կարգով հարկ վճարողներին հաշվապահական և հարկային հաշվառման ծառայությունների մատուցման ռիսկը նվազեցնելու նպատակով առաջարկվում է Օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ.</p> <p>«Հարկ վճարողի (հարկային գործակալի) պաշտոնատար անձ կարող է հանդես գալ հարկ վճարողի (հարկային գործակալի) հետ քաղաքացիաիրավական պայմանագրով ծառայություններ մատուցող ֆիզիկական անձը կամ այդպիսի ծառայություններ մատուցող կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձը, ընդ որում՝</p>	<p>ընդունվել</p>	<p>սահմանափակվի հարկային ծառայողների կողմից ստվերային կարգով հարկ վճարողներին հաշվապահական և հարկային հաշվառման ծառայությունների մատուցման հնարավորությունը, ապա այդպիսի հնարավորությունը արդեն իսկ սահմանափակված է Օրենսգրքի 28-րդ հոդվածի 3-րդ մասով, որի համաձայն՝ «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ պետական կամ համայնքային պաշտոն զբաղեցնող անձինք չեն կարող հանդես գալ որպես հարկ վճարողի պաշտոնատար անձինք:</p>
--	---	------------------	---



	<p>այդ մասին պարտադիր պետք է նշվի սույն մասով նախատեսված լիազորագրում:»:</p>		
	<p>Առաջարկվում է Օրենսգրքի 55-րդ հոդվածի 10-րդ մասում «կազմակերպության» բառը փոխարինել «կազմակերպությունից» բառով, իսկ «ֆիզիկական անձի կողմից» բառերը փոխարինել «ֆիզիկական անձից» բառերով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս գործող խմբագրությամբ ստացվում է, որ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք են հանդիսանում ապրանք ձեռքբերող, աշխատանք ընդունող կամ ծառայություն ստացող, մինչդեռ խոսքը վերաբերում է ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանցից ձեռքբերումներին:</p>	<p>Ընդունվել է</p>	<p>Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:</p>
	<p>Առաջարկվում է Օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում «վարձույթով» բառից հետո ավելացնել «կամ վարձակալությամբ» բառերը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վարձակալության տրամադրման գործունեությունը վարձույթի գործունեությունից բովանդակային առումով</p>	<p>Չի ընդունվել</p>	<p>Կարծում ենք, որ վարձույթի և վարձակալության միջև, այնուամենայնիվ, առկա է բովանդակային տարբերություն: Մասնավորապես, վարձակալությունն առավելապես պասիվ գործունեություն է, մինչդեռ վարձույթն, ըստ էության,</p>

	<p>չի տարբերվում, վարձույթը, ըստ էության, կարճաժամկետ տրամադրումն է, իսկ վարձակալությունը՝ երկարաժամկետ:</p>		<p>բնութագրվում է ձեռնարկատիրական գործունեության հատկանիշներով: Ներկայացված առաջարկությունը ռիսկային է նաև հնարավոր չարաշահումների տեսանկյունից, քանի որ տրանսպորտային միջոցը կարելի է մեկ կամ մի քանի օրով տրամադրել վարձակալության, և դրա հետ կապված՝ ԱԱՀ-ի գծով հաշվանցումներ կատարել:</p>
	<p>Առաջարկվում է Օրենսգրքի 73-րդ հոդվածի 11-րդ մասի վերջին նախադասությունը ուժը կորցրած ճանաչել՝ հաշվի առնելով այն, որ դրանով սահմանված դրույթը հակասում է նույն հոդվածի 14-րդ մասին, որի համաձայն՝ վերաձևակերպումներ չեն կատարվում, եթե հարկ վճարողը չի համարվում ԱԱՀ վճարող, մինչդեռ Օրենսգրքի 73-րդ հոդվածի 11-րդ մասի վերջին նախադասությամբ նշվում է, որ նշյալ մասը կիրառվում է շրջանառության հարկ վճարող և ընտանեկան</p>	<p>Չի ընդունվել</p>	<p>Օրենսգրքի 73-րդ հոդվածի 11-րդ և 14-րդ մասերով կարգավորվում են տարբեր իրավահարաբերություններ: Մասնավորապես, Օրենսգրքի 73-րդ հոդվածի 11-րդ մասը վերաբերում է բոլոր այն դեպքերին, երբ անհատ ձեռնարկատերն այլևս գործունեություն չի իրականացնելու կամ նոտարը պաշտոնից ազատվելու է:</p>

	<p>ձեռնարկատիրության սուբյեկտ հանդիսացողներին, որոնք նույնպես ԱԱՀ չվճարող են:</p>		<p>Մինդե՝ Օրենսգրքի 73-րդ հոդվածի 14-րդ մասով սահմանված՝ ԱԱՀ վճարող չհամարվելու ժամանակաշրջանում վերաձևակերպումներ չկատարելու դրույթը վերաբերում է բոլոր այն դեպքերին, երբ կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը դադարում է համարվել ԱԱՀ վճարող, սակայն շարունակում է գործունեություն իրականացնել և համապատասխան ԱԱՀ դեբետային գումարները վերաձևակերպման ենթակա չեն, քանի որ հետագա գործունեության ընթացքում նորից ԱԱՀ վճարող համարվելու դեպքում այդ գումարները կարող են օգտագործվել հարկ վճարողի կողմից:</p>
	<p>Կոմիսիայի կամ գործակալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրերի</p>	<p>Ընդունվել է ի գիտություն</p>	<p>Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայացված առաջարկությունը</p>

	<p>շրջանակներում կոմիտենտի կամ պրինցիպալի կողմից ստացվող եկամտի հստակեցման նպատակով առաջարկվում է Օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր 2.1-ին կետով հետևյալ բովանդակությամբ.</p> <p>«2.1 Կոմիսիայի կամ գործակալի անունից հանդես եկող գործակալության պայմանագրերի հիման վրա ապրանքի մատակարարման կամ աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման դեպքերում կոմիտենտի կամ պրինցիպալի համար եկամուտ է համարվում մատակարարված ապրանքի կամ կատարված աշխատանքի կամ մատուցված ծառայության դիմաց ստացվող ընդհանուր եկամտի և կոմիսիոների կամ գործակալի համար սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով որոշվող եկամտի դրական տարբերությունը:»:</p>		<p>բազմակողմանի քննարկում է ենթադրում, առաջարկում ենք առաջարկությանն անդրադառնալ հետագա օրենսդրական փոփոխությունների շրջանակում:</p>
	<p>Առաջարկվում է Օրենսգրքի 121-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի աղյուսակի 6-րդ տողում «բանող անասուններ, բազմամյա տնկիներ» բառերը փոխարինել «կենսաբանական ակտիվներ</p>	<p>Ընդունվել է ի գիտություն</p>	<p>Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայացված առաջարկությունը բազմակողմանի քննարկում է ենթադրում, առաջարկում ենք</p>

	<p>(բացառությամբ՝ սպառվող կենսաբանական ակտիվների)» բառերով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների համաձայն՝ կենսաբանական ակտիվներ (բացառությամբ՝ սպառվող կենսաբանական ակտիվների) խումբը չի սահմանափակվում միայն բանող անասուններով և բազմամյա տնկիներով, կարող են լինել կաթնատու, սերնդատու, ձվատու, բրդատու կենդանիներ, ինչպես նաև սերմատու բույսեր:</p>		<p>առաջարկությանն անդրադառնալ հետագա օրենսդրական փոփոխությունների շրջանակում:</p>
	<p>Առաջարկվում է Օրենսգրքի 123-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում «տրամադրված ակտիվների», «կատարված աշխատանքների» և «մատուցված ծառայությունների» բառերից առաջ լրացնել «անհատույց» բառը՝ նշյալ կետով սահմանված արտոնյալ դրույթը հատուցմամբ կատարվող գործարքների դեպքում չկիրառելի դարձնելու նպատակով:</p>	<p>Ընդունվել է ի գիտություն</p>	<p>Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայացված առաջարկությունը բազմակողմանի քննարկում է ենթադրում, առաջարկում ենք առաջարկությանն անդրադառնալ հետագա օրենսդրական փոփոխությունների շրջանակում:</p>
	<p>Առաջարկվում է Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետում «նորմաների» բառից հետո լրացնել «(չափերի), Հայաստանի Հանրապետության</p>	<p>Ընդունվել է</p>	<p>Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:</p>

	<p>տարածքում և տարածքից դուրս գործուղման դեպքում Օրենսգրքի 117-րդ հոդվածով սահմանված չափերը չգերազանցող գումարների» բառերը:</p>		
	<p>Շրջանառության հարկի համակարգում գործունեություն իրականացնող հյուրանոցային տնտեսության օբյեկտների համար գործունեության նպաստավոր պայմաններ ապահովելու նպատակով առաջարկվում է Օրենսգրքի 254-րդ հոդվածի 6-րդ մասում «սպառման կազմակերպումը» բառերից հետո լրացնել «բացառությամբ այն դեպքերի, երբ խոհարարական արտադրանքի օտարումը (այդ թվում՝ առաքմամբ) և (կամ) սպառման կազմակերպումը ներառվում են Հայաստանի Հանրապետությունում կիրառվող՝ տնտեսական գործունեության դասակարգչի «Կացության կազմակերպում» հատվածում և սպառվում են բացառապես այդ հատվածի շրջանակում ծառայություններ ստացող անձանց կողմից» բառերը:</p>	<p>Ընդունվել է ի գիտություն</p>	<p>Ներկայացված խնդիրը կարգավորվել է ԱԺ պատգամավոր Եղիշե Սողոմոնյանի կողմից ներկայացված առաջարկության հիման վրա:</p>
	<p>Հաշվի առնելով այն, որ Օրենսգրքի 255-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով</p>	<p>Ընդունվել է</p>	<p>Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:</p>

	<p>սահմանված դրույթը հակասում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասին, ըստ որի, վիճարկման հայցի վարույթ ընդունելը կասեցնում է վիճարկվող վարչական ակտի կատարումը մինչև այդ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը՝ առաջարկվում է Օրենսգրքի 255-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետում նշված որոշումը Օրենսգրքի 398-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված երկամսյա ժամկետում դատական կարգով բողոքարկվելու դեպքում առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները շարունակում են համարվել շրջանառության հարկ վճարողներ, իսկ որոշումն անվավեր չճանաչելու վերաբերյալ դատարանի վճիռն ուժի մեջ մտնելու դեպքում փոխկապակցված ճանաչված առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները դադարում</p>		<p>Միաժամանակ, համարժեք լրացում է կատարվել նաև միկրո ձեռնարկատիրության մասով:</p>
--	--	--	---

	<p>են համարվել շրջանառության հարկ վճարողներ՝ սույն կետում սահմանված ժամկետից:»:</p>		
	<p>Շրջանառության հարկ վճարողների կողմից ոչ նյութական ակտիվների օտարման դեպքում դրանց օտարումից ստացվող եկամուտները շրջանառության հարկով հարկելու նպատակով առաջարկվում է Օրենսգրքի 256-րդ հոդվածի 1-ին մասում «ռոյալթի» բառից հետո լրացնել «ինչպես նաև ոչ նյութական ակտիվի օտարումը» բառերը:</p>	<p>Ընդունվել է</p>	<p>Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:</p>
	<p>«Հայաստանի Հանրապետությունում կիրառվող՝ տնտեսական գործունեության դասակարգչի «Հանրային սննդի կազմակերպում» հատվածում ներառվող ակտիվների օտարման դեպքում՝ դրանք ձեռքբերելու ծախսերը շրջանառության հարկի գումարից նվազեցնելու նպատակով առաջարկվում է Օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասում «խոհարարական արտադրանք չհանդիսացող այլ ակտիվների օտարման դեպքում՝ դրանք ձեռք բերելու ծախսերի)» բառերը փոխարինել «Հայաստանի</p>	<p>Ընդունվել է ի գիտություն</p>	<p>Ներկայացված խնդիրը կարգավորվել է ԱԺ պատգամավոր Եղիշե Սողոմոնյանի կողմից ներկայացված առաջարկության հիման վրա:</p>



	<p>Հանրապետությունում կիրառվող՝ տնտեսական գործունեության դասակարգչի «Հանրային սննդի կազմակերպում» հատվածում չներառվող այլ ակտիվների օտարման դեպքում՝ դրանք ձեռքբերելու ծախսերի» բառերով:</p>		
	<p>Առաջարկվում է Օրենսգրքի 390-րդ հոդվածի 3-րդ մասում «ԱՏԳ ԱԱ 0405» ծածկագրից հետո ավելացնել «0406» ծածկագիրը (պանրի տեսակներ և կաթնաշոռ)՝ հաշվի առնելով այն, որ դրանց կշիռը ժամանակի ընթացքում նույնպես նվազում է, ինչպես նաև այն, որ 0405 ծածկագիրը նշյալ ցանկում ներառված լինելու պարագայում 0406 ծածկագիրը չներառելու տրամաբանություն չկա:</p>	<p>Ընդունվել է</p>	<p>Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:</p>
	<p>Առաջարկվում է Օրենսգրքի 450-րդ հոդվածի 1-ին մասից հանել «ԱԱՀ-ի և», ինչպես նաև «միասնական» բառերը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ մինչև Օրենսգրքն ուժի մեջ մտնելն ընկած ժամանակաշրջանների համար հնարավոր չէ ներկայացնել ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկ:</p>	<p>Ընդունվել է</p>	<p>Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:</p>
<p>ՀՀ ԱԺ</p>	<p>Առաջարկվում է հանրային սննդի</p>	<p>Ընդունվել է</p>	<p>Նախագծում կատարվել</p>

<p>պատգամավոր Եղիշե Սողոմոնյան</p>	<p>ոլորտում գործունեություն իրականացնող հարկ վճարողների կողմից խոհարարական արտադրանք չհանդիսացող ապրանքների իրացման շրջանառության նկատմամբ հարկի 20 տոկոս դրույքաչափը կիրառել միայն այն դեպքում երբ այդ հարկ վճարողը բավարարում է ԱԱՀ վճարող համարվելու՝ Օրենսգրքով սահմանված չափանիշներին:</p>		<p>են համապատասխան լրացումներ:</p>
	<p>Առաջարկվում է խաղային ոլորտում գործունեության բոլոր տեսակների համար (վիճակախաղ, շահումով խաղ, ինտերնետ շահումով խաղ) անհրաժեշտ լիցենզիայի տրամադրման համար սահմանված պետական տուրքը ավելացնել 100 տոկոսով՝ նախագծով սահմանված 20 տոկոսի փոխարեն:</p>	<p>Չի ընդունվել</p>	<p>Առաջարկում ենք այս հարցը լրացուցիչ քննարկման առարկա դարձնել հետագա օրենսդրական փոփոխությունների շրջանակներում:</p>
	<p>Առաջարկվում է մետաղադրամով և թղթադրամով շահագործվող ավտոմատների (որոնց միջոցով, օրինակ, սննդամթերքի վաճառք է իրականացվում կամ խաղեր են կազմակերպվում) գործունեության հարկումն իրականացնել պետական տուրքի համակարգում:</p>	<p>Ընդունվել է</p>	<p>Նախագծերի փաթեթում ներառված՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում (հոդված 3), ինչպես նաև ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ նախատեսող օրենքի նախագծում կատարվել</p>

			են համապատասխան լրացումներ:
<p>ՀՀ կառավարություն</p>	<p>Առաջարկվում է Օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«բ. ԵՏՄ անդամ պետությունից ապրանքի ներմուծման կամ ԵՏՄ անդամ պետություն ապրանքի արտահանման գործառնությունների դեպքում՝ համապատասխանաբար ապրանքը Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու) կամ ապրանքը Հայաստանի Հանրապետությունից արտահանելու (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու) ամսաթվի դրությամբ՝ ելնելով այդ օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից: Այն դեպքում, երբ ապրանքը Հայաստանի</p>	<p>Ընդունվել է</p>	<p>Նախագծում կատարվել են համապատասխան լրացումներ:</p>

	<p>Հանրապետության սահմանը հատում է օդային տրանսպորտով կամ փոստային օպերատորի կողմից մատուցվող՝ փոստային ծառայության միջոցով, ԵՏՄ անդամ պետությունից ապրանքի ներմուծման կամ ԵՏՄ անդամ պետություն ապրանքի արտահանման գործառնությունների դեպքում ապրանքի հարկման բազան և սկզբնական արժեքը որոշվում են տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերի՝ կոնոսամենտում, բեռնագրում կամ այլ փաստաթղթերում նշված ամսաթվի դրությամբ՝ ելնելով այդ օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից. »:</p>		
	<p>Առաջարկվում է նախագծի 32-րդ հոդվածում լրացնել է նոր 6-րդ մաս, որով կսահմանվի, որ իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում ֆիզիկական անձանց կողմից ներդրված գույքի օտարումից ստացվող եկամուտները, եթե գույքի օտարումը կատարվել է այն գույքը ներդրելուց հետո 3 տարվա ընթացքում,</p>	<p>Ոնդունվել է</p>	<p>Հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ նախատեսող օրենքի նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>

	<p>Եկամտային հարկը հաշվարկվում է 10 տոկոս դրույքաչափով՝ 20 տոկոսի փոխարեն:</p>		
	<p>Առաջարկվում է հստակեցնել, որ մետաղադրամով և (կամ) թղթադրամով շահագործվող ավտոմատների միջոցով առևտուր իրականացնող տնտեսավարող սուբյեկտները նույնպես չեն կարող միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվել:</p>	<p>Ընդունվել է</p>	<p>Հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ նախատեսող օրենքի նախագծում կատարվել է համապատասխան լրացում:</p>
	<p>Առաջարկվում է սահմանել, որ հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտները չեն կարող համարվել միկրոձեռնարկատիրության սուբյեկտներ:</p>	<p>Ընդունվել է</p>	<p>Հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ նախատեսող օրենքի նախագծում կատարվել է համապատասխան լրացում:</p>
	<p>Առաջարկվում է Օրենսգրքի 393-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով սահմանված ծխախոտի արտադրանքի մասով դրոշմապիտակ տրամադրելու նպատակով 20 միլիոն հատ չգերազանցող դրոշմանիշի մնացորդ ունենալու պահանջը վերանայել և սահմանել 30 միլիոն հատ:</p>	<p>Ընդունվել է</p>	<p>Հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ նախատեսող օրենքի նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>
	<p>Առաջարկվում է ֆիզիկական անձանց կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության</p>	<p>Ընդունվել է</p>	<p>Հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ նախատեսող օրենքի</p>

	<p>առարկա համարվող գույքի օտարման մասով վերանայվող հարկման կանոնների գործողությունը՝ եկամուտների հաշվառման մեթոդի մասով, 2018 թվականի հուլիսի 1-ից հետադարձ ուժով կիրառել ոչ միայն ավտոմեքենաների օտարման գործարքների մասով, այլ նաև գույքի այլ տեսակների մասով:</p>		<p>Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:</p>
	<p>Առաջարկվում է անշարժ գույքի հարկի ներդրման ժամկետը հետաձգել ևս մեկ տարով:</p>	<p>Ընդունվել է</p>	<p>Հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ նախատեսող օրենքի նախագծում կատարվել է համապատասխան լրացում:</p>
	<p>Առաջարկվում է նախագծերի փաթեթում կատարել խմբագրական բնույթի որոշակի շտկումներ:</p>	<p>Ընդունվել է</p>	<p>Նախագծերի փաթեթում կատարվել են համապատասխան փոփոխություններ և լրացումներ:</p>